Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2514

# ՔԱՆԱԼԻ
## ԳՈՐԾՆԱԿԱՆ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
## ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՅՕՐԻՆԵԱՑ
Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف نظارت جلیله‌سنك ٤١٣ نمره‌لی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐԵԱՑ Յ. ԳԱՎԱՖԵԱՆ

1887

491.99-5
Գ-34

2010

2002

491.99-5
Գ-34

# ԲԱՆԱԼԻ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆԷ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



9129

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐԵԱՑ Յ. ԳԱՎԱՖԵԱՆ

1887

36863ա
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
20309-60

# ԲԱՆԱԼԻ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

### 1. Հրահանգ.

Ընծայ. գոյ. Ժամանակ. գոյ. Նշան. գոյ. Գործ. գոյ. Մեծ. ած. Քաջ. ած. Հողմ. գոյ. Մեղմ. ած. Մարդ. գոյ. Տղայ. գոյ. Չար. ած. Զգօն. ած. Կարգ. գոյ. Ձագ. գոյ. Հող. գոյ. Լի. ած. Ունայն. ած. Հաց. գոյ. Նոր. ած. Հոտ. գոյ. Հօտ. գոյ. Լայն. ած. Նեղ. ած. Աշխար. գոյ. Արջառ. գոյ. Հրաման. գոյ. Դատարկ. ած. Հրապարակ. գոյ. Ամբոխ. գոյ. Աղքատ. ած. Թշուառ. ած. Աղտ. գոյ. Երկաթ. գոյ. Արծաթ. գոյ. Զգեստ. գոյ. Զարդ. գոյ. Գնէլ. գոյ. Տիրան. գոյ. Միհրան. գոյ. Զոհ. գոյ. Հաճոյ. ած. Տգեղ. ած. Կանաչ. ած. Յօդ. գոյ. Ազգ. գոյ. Զօրաւոր. ած. Տկար. ած. Ժամ. գոյ. Ծառ. գոյ. Արդար. ած. Հեզ. ած. Ցեղ. գոյ. Քահանայ. գոյ. Մահ. գոյ. Ծեր. ած. Լեզու. գոյ. Թաւ. ած. Շքեղ. ած. Վատ. ած. Աւազան. գոյ. Խրատ. գոյ. Արամ. գոյ. Վահան. գոյ. Գայիանէ. գոյ. Եսայի. գոյ. Ծայր. գոյ. Իր. գոյ. Ուս. գոյ. Ուխտ. գոյ. Գանձ. գոյ. Ջօր. գոյ. Ճրագ. գոյ. Լուսաւոր. ած. Աղօտ. ած. Պայծառ. ած. Պատերազմ. գոյ. Գայլ. գոյ. Գեղ. գոյ. Որթ. գոյ. Որթ. գոյ. Սան. գոյ. Սան. գոյ. Փող. գոյ. Փող. գոյ.

Աղօթք · ֆոյ · Խօսք · ֆոյ · Միտք · ֆոյ · Պարտք · ֆոյ · Կամք · ֆոյ · Դժոխք · ֆոյ · Մեղք · ֆոյ ։

## 2· Հրահանգ ·

Ընծայ · յի · յիւ ։ Ժամանակ · կի · կաւ ։ Նշան · նի · նաւ ։ Գործ · ծոյ · ծով ։ Մեծ · ծի · ծաւ ։ Քաջ · ջի · ջիւ · ջաց · ջօք ։ Հողմ · մոյ · մով ։ Մեղմ · մոյ · մով ։ Մարդ · դոյ · դով ։ Տղայ · յոյ · յով ։ Զար · րի · րաւ ։ Զգօն · նի · նաւ ։ Կարգ · գի · գաւ ։ Զադ · դու ։ Հող · ղոյ · ղով ։ Լի · լիոյ · լիով ։ Ունայն · նի · նիւ ։ Հաց · ցի · ցիւ ։ Նոր · րոյ · րով ։ Հոտ · տոյ · տով ։ Հօտ · տի · տիւ ։ Լայն · նի · նիւ ։ Նեղ · ղոյ · ղով ։ Ոչխար · րի · րաւ ։ Արջառ · ռոյ · ռով ։ Հրաման · նի · նաւ ։ Դատարկ · կի · կաւ ։ Հրապարակ · կի · կաւ ։ Ամբոխ · խի · խիւ ։ Աղքատ · տի · տաւ ։ Թշուառ · ռի · ռաւ ։ Աղտ · տոյ · տով ։ Երկաթ · թոյ · թով ։ Արծաթ · թոյ · թով ։ Զգեստ · տու ։ Զարդ · դու ։ Գնէլ · լայ · լաւ ։ Տիրան · նայ · նաւ ։ Միհրան · նայ · նաւ ։ Ջոհ · հի · հիւ ։ Հաճոյ · յի · յիւ ։ Տգեղ · ղի · ղաւ ։ Կանաչ · չի · չաւ ։ Յօդ · դի · դիւ ։ Ազգ · գի · գաւ ։ Զօրաւոր · րի · րաւ ։ Տկար · րի · րաւ ։ Ժամ · մու · մու կամ մաւ ։ Ծառ · ռոյ · ռով ։ Արդար · րոյ · րով ։ Հեզ · զոյ · զով ։ Ցեղ · ղի · ղիւ ։ Քահանայ · յի · յիւ ։ Մահ · հու կամ հուան · հու կամ հուամբ ։ Ծեր · րոյ · րով ։ Լեզու · ուի · ուաւ ։ Թաւ · ւոյ · ւով ։ Շքեղ · ղի · ղաւ ։ Վատ · տի · տաւ ։ Աւազան · նի · նաւ ։ Խրատ · տու · տու ։ Արամ · մայ · մաւ ։ Վահան · նայ · նաւ ։ Գայիանէ · նեայ · նեաւ ։ Եսայի · յեայ · յեաւ ։ Ծայր · րի · րիւ ։ Իր · րի · րաւ ։ Ուս · սոյ · սով ։ Ուխտ · տի · տիւ ։ Գանձ · ձու ։ Ջոր · րու ։ Ծրագ · գի · գաւ ։ Լուսաւոր · րի · րաւ ։ Աղօտ · տի · տաւ ։ Պայծառ · ռի · ռաւ ։ Պատերազմ · մի · մաւ ։ Գայլ · լոյ · լով ։ Գեղ · ղոյ · ղով ։ Որթ · թու ։



Որթ · թոյ ։ Սան · նի · նիւ ։ Սան · նու ։ Փող · ղոյ · ղով ։ Փող · ղի · ղիւ ։ Աղօթք · թից · թիւք ։ Խօսք · սից · սիւք ։ Միտք · մտաց · մտօք ։ Պարտք · տուց · տուք ։ Կամք · մաց · մօք ։ Դժոխք · խոց · խովք ։ Մեղք · ղաց · ղօք ։

## 3· Հրահանգ ·

Մթին է բանտ · Աղօտ է լուսին · Թանձր է ձիւն · Լոյծ է անձրեւ · Հաւատարիմ է շուն · Արագ է ձի · Գնդաձեւ է երկիր · Ընդարձակ է ծով · Մահկանացու է մարդ · Զով է ջուր · Թեթեւ է օդ · Սիրելի է առաքինութիւն · Լուսատու է արեգակն · Բարի է Աստուած · Անմահ է հոգի · Նիւթեղէն է մարմին · Կարծր է քար · Պինդ է ցամաք · Սեաւ է թանաք · Սպիտակ է ձիւն · Կանաչ է խոտ · Կարմիր է յակինթ · Կապոյտ են երկինք · Բոլորակ է անիւ · Քաղցր է խաղող · Թթու է ագոխ · Թեւաւոր է թռչուն · Թեփամորթ է ձուկն · Չորքոտանի է ոչխար · Երկոտանի է հաւ · Հպարտ է առիւծ · Անագորոյն է վագր · Զազիր է որդն · Արագոտն է նապաստակ · Դիւրաբեկ է եղէգն · Թրծուն է աղիւս · Պարգեւատու է Աստուած · Զրի են շնորհք ։

## 4· Հրահանգ ·

Բարձր են երկինք · Լուսատու են աստեղք · Բաց են դրունքն · Նեղ են ճանապարհքն · Հարթ են փողոցքն · Զինջ է ապակի · Յստակ է ջուրն · Առատ է աղբիւրն · Սաստիկ է սառն · Ծանր է ախտն · Կիզիչ է հուր · Անաչառ է դատաւորն · Խիստ է իշխանն · Շքեղ են ապարանքն · Հոյակապ են շինուածքն · Գեղեցիկ է պարտէզն · Բազում է ժողովուրդն · Սակաւ են զինուորքն · Մեծատուն է այրն · Արարիչ է Աստուած · Հոգի են հրեշտակք · Չար են դեւք · Նրանուէտ է

գրախտ. Անմեղ են մանկունք. Պատուական է իմաստութիւն. Օգտակար են գիտութիւնք. Պիտանի են եզն, ձի և էշ. Ժառանգ են որդիքն. Հնազանդ եղիցին ծառայք. Յաղթող է թագաւորն. Քաջ է զօրավարն. Հաւատարիմ են զինուորքն. Հզօր է առիւծ. Խոնաւ է գետինն. Չոր է փայտն. Մահացու է հիւանդութիւնն. Ծանր է բեռնն. Զգոյշ լերուք. Վստահ լեր. Աղքատ է ժողովուրդն. Մեծատուն են իշխանքն. Ո՞ւր իցէ այրն. Ո՞վ են նոքա. Ո՞վ իցէ մանուկն. Օգտակար է ուսումն. Ատելի է յոռութիւն. Մեծատուն եղեն աղքատք. Ճշմարիտ է պատմութիւնն. Սուտ են վկայութիւնքն. Երկայն է ճանապարհն. Կարճ է ժամանակն:

## 5. Հրահանգ.

Արագագիր է դպիրն. Եղջերաւոր են եզն, ոչխար և այծ. Ծիրանի է պատմուճանն. Սեաւ են բնակիչքն. Քաջ լերուք. Հնազանդ լեր. Մի լինիր չռայլ. Հաւատարիմ եղիցի. Բարձր է եղեւին. Դիւրաբեկ է եղէգն. Խոնարհ է տօսախ. Սպիտակ են ձիւն և եղեամն. Լըպիրծ է գետինն. Եղուկ եմ. Ողորմելի է. Երանելի ես. Արագագնաց է նապաստակ. Մի լինիր երախտամոռաց կամ ապաշնորհ. Երախտաւոր է այրն. Մեծ էր երամակն. Վկայ եմ ես. Երաշխաւոր ես դու. Դատապարտ է նա. Դատաւոր են նոքա. Դահիճ է նա. Վրէժխնդիր է տէր. Ձրի է պարգեւն. Ձիր է այս. Պարգեւ է մատեանն. Ընծայ են պտուղքն:

## 6. Հրահանգ.

Գոտի. տւոյ. տեաւ: Ձիթենի. նւոյ. նեաւ: Հոգի. գւոյ. գւով. գւոց: Ոսկի. կւոյ. կւով: Ատամն. ման. մամբ. մունք. մանց: Տուն. տան. տամբ: Լա-



ւութիւն. թեան. թեամբ: Կոճղ. ճեղ. ճեղբ. կոճեղք. ղաց: Մեծատուն. տան. տամբ: Վերնատուն. տան. տամբ: Ճշմարտութիւն. թեան. թեամբ: Տարի. րւոյ. րեաւ: Անձն. ձին. ձամբ. անձինք. ձանց: Տարր. րեր. րերբ. տարերք. րերաց. րօք: Արկղ. կեղ. կեղբ. արկեղք. ղաց. ղօք: Խաշն. շին. շամբ. խաշինք. շանց: Դաշն. շին. շամբ. դաշինք. շանց: Ուստր. տեր. տերբ. ուստերք. րաց. րօք: Կղզի. զւոյ. զեաւ: Փարիսեցի. ցւոյ. ցւով: Սադուկեցի. ցւոյ. ցւով: Անեցի. ցւոյ. ցւով: Ասր. ասու: Մեղր. ղու: Եզր. զեր. զերբ. եզերք. րաց. րօք: Ափն. փին. փամբ. ափունք. փանց: Ձմեռն. ռան. ռամբ. ձմերունք. ռանց: Ամառն. ռան. ռամբ. ամառունք. ռանց: Տուն. տան. տամբ. տունք. տանց: Ագի. գւոյ. գւով: Մասն. սին. սամբ. մասունք. սանց: Մրջիւն. ջեան. ջեամբ. մըրջիւնք. ջնոց: Սիւն. սեան. սեամբ. սիւնք. սեանց: Կորիւն. րեան. րեամբ. կորիւնք. րեանց: Թոռն. ռին. ռամբ. թոռունք. ռանց: Համր. մեր. մերբ. համերք. մերց. մերբք:

## 7. Հրահանգ.

Թուղթ. թղթոյ. թղթով: Սէր. սիրոյ. սիրով: Պատիւ. պատւոյ. պատուով: Թիւ. թւոյ. թուով: Անիւ. անւոյ. անուով: Գրիչ. գրչի. գրչաւ: Հուր. հրոյ. հրով: Մատուռն. մատրան. մատրամբ: Թռչուն. թռչնոյ. թռչնով: Մատեան. մատենի. մատենիւ: Ատեան. ատենի. ատենիւ: Շունչ. շնչոյ. շնչով: Մարմին. մարմնոյ. մարմնով: Մուկն. մկան. մկամբ. մըկունք. մկանց: Շուրթն. շրթան. շրթամբ. շրթունք. շրթանց: Հովիւ. հովուի. հովուաւ: Ջուր. ջրոյ. ջրով. ջուրք. ջրոց կամ ջուրց. ջրովք կամ ջուրբք: Պանիր. պանրոյ. պանրով: Հունձ. հնձոյ. հնձով: Պտուղ.

պողոյ · պողով ։ Նրէց · երիցու · երիցունք · երիցանց · երիցամբք ։ Պղինձ · պղնձոյ · պղնձով ։ Զէն · զինու ։ Կոչումն · կոչման · կոչմամբ ։ Գալուստ · գալստեան · գալստեամբ ։ Շէն · շինի · շինիւ ։ Լոյս · լուսոյ · լուսով ։ Յոյս · յուսոյ · յուսով ։ Ամիս · ամսոյ · ամսով ։ Վայրկեան · վայրկենի · վայրկենիւ ։ Սուրբ · սրբոյ · սրբով ։ Մեհեան · մեհենի · մեհենիւ ։ Հանդէս · հանդիսի · հանդիսիւ ։ Ողջոյն · ողջունի · ողջունիւ ։ Էշ · իշոյ իշով ։ Մանուկ · մանկան · մանկամբ · մանկունք · մանկանց · մանկամբք ։ Աղջիկ · աղջկան · աղջկամբ · աղջկունք · աղջկանց · աղջկամբք ։ Դուստր · դստեր · դստերբ · դստերք · դստերաց · դստերօք ։ Ծիր · ծրի · ծրիւ ։ Խունկ · խնկոյ · խնկով ։ Ինձ · ընձու ։ Խոստումն · խոստման · խոստմամբ · խոստմունք · խոստմանց · խոստմամբք ։ Ուսումն · ուսման · ուսմամբ · ուսմունք · ուսմանց · ուսմամբք ։ Սկիզբն · սկզբան · սկզբամբ · սկզբունք · սկզբանց · սկզբամբք ։ Քիրտն · քրտան · քրտամբ · քրտունք · քրտանց · քրտամբք ։ Աշուն · աշնան · աշնամբ · աշունք · աշնանց · աշնամբք ։ Գարուն · գարնան · գարնամբ · գարունք · գարնանց · գարնամբք ։ Մարդիկ · մարդկան · մարդկամբ ։ Ձեղուն · ձեղուան · ձեղուամբ · ձեղունք · ձեղուանց · ձեղուամբք ։ Սենեակ · սենեկի · սենեկաւ ։ Գլուխ · գլխոյ · գլխով ։ Փոքրիկ · փոքրկան · փոքրկամբ · փոքրկունք · փոքրկանց · փոքրկամբք ։ Տնիկ · տնկան · տնկամբ · տնկունք · տնկանց · տնկամբք ։ Հանգիստ · հանգստեան · հանգստեամբ ։ Փախուստ · փախստեան · փախստեամբ ։ Թաքուստ · թաքստեան · թաքստեամբ ։ Իղձ · ըղձի · ըղձիւ ։ Ունչ · ընչոյ · ընչով ։ Ունդ · ընդոյ · ընդով ։ Քրիստոնեայ · նէի · նէիւ ։ Փախստեայ · տէի · տէիւ ։ Աշտեայ · տէի · տէիւ ։ Ծնունդ · ծննդեան · ծննդեամբ · ծնունդք · ծննդոց · ծննդովք ։ Ժողովուրդ · ժողովրդեան · ժողովրդեամբ · ժողովուրդք · ժողովրդոց · ժողովրդովք ։ Խորհուրդ · խորհրդոյ կամ խորհրդեան · խորհրդով ։



## 8. Հրահանգ ·

Նոր է տունն · Հին է եկեղեցին · Թեթեւ են շոգի և ծուխ · Ծանր են անձրև և կարկուտ · Զգայուն , իմաստուն և գործօն է հոգի · Տրտում էր կինն · Վըշտագին էր մայրն · Զուարթ էր քոյրն · Գնայուն են մարդիկ և անասունք · Խոնաւ է հողն · Բերրի է երկիրն · Յուռթի է դաշտն · Պտղաբեր են արտն և պարտէզ · Հոգի են հրեշտակք · Ջերմ է ձի · Հաւատարիմ է շուն · Հմուտ և փորձ է վարդապետն · Կիրթ են աշակերտքն · Վարժ է կառավարն · Դանդաղ է էշ · Արագ է նապաստակ · Բարկ և կծու է քացախ · Լոյծ է իւղ · Թանձր է կոգի · Պինդ է փայտ · Կարծր են քար և երկաթ · Գնդակերպ է նարինջ · Բոլորշի են սկաւառակ և անիւ · Կակուղ է թաթ · Կարծր են սմբակ և կճղակ · Թթու է կիտրոն · Շարժուն են բազուկք և սրունք · Յեղյեղուկ են լեզու և աչք · Հաստ են ատամունք · Հասուն է պատանին · Խակ է մանուկն · Թըռչուն են հաւք · Գնայուն են չորքոտանիք · Արագընթաց են եղջերու և նապաստակ · Հզօր է առիւծ · Գիշատիչ և անագորոյն է վագր · Հեզ է ոչխար · Հանդարտ է ուղտ · Համբերող է էշ · Հովիւ էր Դաւիթ, և եղև թագաւոր · Դիւցազն էր Հայկ · Քաջ էր Արամ · Կարող է Աստուած · Հաւատարիմ է պաշտօնեայն · Դժուարին է լեառնն ։

## 9. Հրահանգ ·

Բաց է դուռն պարտիզին · Փակեալ են պատուհանք տանն · Վայրենի էին բնակիչք երկրին · Գեղեցիկ էր

պտուղ ծառոյն · Պայծառ է լոյս արեգական · Աղօտ է լոյս լուսնի · Ծեր է հայր մանկանն · Հաւատարիմ են զօրք թագաւորին · Այս են կամք տեառն · Մերձ է տուն քեռն · Ստահակ են որդիք կնոջն · Խիստ էին բանք առնն · Սաստիկ էր բարկութիւն հօրն · Մեծ էր հանդէս աւուրն · Կարճ են ժամք տուընջեան · Երկայն են ժամք գիշերոյ · Առաւել է տապ միջօրէին · Զով են աւուրք գարնան կամ գարնայնոյ · Ջերմ են աւուրք ամարան կամ ամարայնոյ · Մարդասէր են բնակիչք գեղջն · Բուռն էր հրաման թագաւորին · Պղնձի էին դրունք քաղաքին · Քաղցր են ջուրք գետոյն · Հանճարեղ են բանք ծերունւոյն կամ ծերոյն · Սոքա են իշխանք քաղաքացն · Ազգի ազգի են ձկունք ծովու · Ծակ է կարաս գինւոյն · Լի է սրուակ իւղոյն · Թափուր են ամանք կաթին · Բարձր են դիրք տեղւոյն · Պարծանք են հարք որդւոց · Պաշտպան են մարք դստերաց · Երանելի են հոգիք արդարոց · Ահագին էր պետութիւնն Հռոմայեցւոց կամ Հոռոմոց · Ընտրեալ էր ազգն Իսրայելացւոց կամ Իսրայէլի · Ազդու էին բանք խրատուն · Քաջ էին որդիք և թոռունք Հայկայ · Զարմանալի է պատմութիւն Տրդատայ · Կուսանք էին ընկերք Հռիփսիմեայ · Հինգ հինգ են մատունք ձեռաց և ոտից · Տօն ուրախութեան է այսօր · Նշան հաշտութեան է ձիթենի · Յիշատակ քաջութեան է արձանս · Օր հանգստեան էր շաբաթն Հրէից · Փրկութիւն եղև հեղումն արեան նորա · Անհամար է թիւ աստեղաց · Ատելի էր իշխանութիւն կայսեր · Դառն էր ջուր աղբերն · Վէմ անկեան եղև նա · Բազում էր թիւ արանց և կանանց ։

### 10· Հրահանգ ·

Իմաստուն է եղբայրն Յովհաննու · Չար է որդին Արշակայ · Հիւանդ էր զօքանչն Պետրոսի · Ծեր է ա-



ներն Յովսեփու · Կաղ էր որդին Սաւուղի · Քաջ և հաւատարիմ էին զօրավարք Դաւթի · Կարճ եղեն կեանք Դեկոսի · Նախանձոտ էին որդիքն Յակոբայ · Ամուր էին պարիսպքն Երուսաղէմի · Պտղաբեր է երկիրն Հայոց · Բարձր են լերինք Հնդկաց · Երկար եղև թագաւորութիւնն Տրդատայ · Յորդ են ջուրք Եփրատայ · Անզգամ էին բնակիչք Սոդոմայ · Հաւատարիմ էին ծառայք Աբրահամու · Կիզիչ են ճառագայթք արեգական · Աղօտ է լոյս լուսնի · Արդար են դատաստանք Աստուծոյ · Բուռն է զօրութիւն հողմոյ · Ահագին են ալիք ծովու · Նուրբ է բնութիւն լուսոյ · Ուղիղ են ճանապարհք արդարոց · Ահեղ է մռնչիւն առիւծու · Ճշմարիտ է բանն Աստուծոյ · Չորք են կողմանք երկրի · արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ · Աղի է ջուր ծովու · Բարձր են գլուխք լերանց · Խոր են անդունդք երկրի · Ամբաւ է հեռաւորութիւն աստեղց · Անհուն է ընդարձակութիւն տիեզերաց · Մեծ է օգուտ անձրևի, ձեան և հողմոց · Կարևոր են յոյժ լոյս և ջերմութիւն արեգական ։

### 11· Հրահանգ ·

Խորշելի է այր խաբեբայ · Սիրելի է որդի հնազանդ · Խոտան է զինուոր վատ · Օգտակար է աշխատութիւն համեստ · Վտանգաւոր է մեծութիւն բազում · Վնասակար է ցասումն սաստիկ · Պատկառելի է այր ալևոր · Մեծարոյ են օրէնք արդարք · Պատժելի է աշակերտ անսաստ · Խոտան է այր քսու · Ահագին է ծով համատարած · Կատաղի է առիւծ մատակ · Յափշտակիչ են թռչունք գիշակերք · Աստ է դուստր իմ միամօր · Հիւանդ է մայր քո երկիւղած · Վնասակար է զինուոր երկչոտ · Հանճարեղ է որդին երէց · Սիրելի է մանուկ մտավարժ · Զգօն է եղբայր իմ կրտսեր · Պատառատուն

է վերարկուն ասուի · Մութ է սենեակն վերին · Ընդարձակ է սրահն ներքին · Վտանգաւոր են տեղիք ամայիք · Անդորր է յոյժ տուն մեր նոր · Յառաջադէմ է մանուկ հլու · Զի՞նչ իցեն բանք սնոտիք · Ապաւէն մեր են լերինք ամուրք · Հովասուն է երկիր ծովեզերեայ · Ախորժելի են պտուղք հասունք , անախորժ են խակքն · Դժուարին է ճանապարհն երկայն ։

## 12· Հրահանգ ·

Հայր եմ որդւոց երից · Որդիք են առն միոջ · Տօն է այսօր մանկանց քառասնից · Բաժին էր արանց հընգից · Ժառանգութիւն է եղբարց երկուց · Հայր էր որդւոց երկոտասանից · Էր անդ բանակ զօրաց բիւրուց · Տեարք էաք ծառայից տասանց · Իշխան էր քաղաքաց եօթանց · Եկն արամբք երիւք · Գնացին սպասաւորօք չորիւք · Անկաւ տասն ընկերօք · Ընթացան ի չորից կողմանց · Գնացին մղոնս յիսուն · Բարձրացաւ ջուրն կանգունս քառասուն · Տեսաք յետ երեսուն աւուրց · Կերակրեաց արս հինգ հազար · Եկն ի վերայ մեր արամբք երկերիւրովք · Սպանին արս վեց · Էին անդ արմաւենիք տասն · Պակաս եմ միով լիւիք · Էր նա ամաց ութանից · Յետ եօթն ամացն առատութեան եղև սով ամս եօթն · Երկոտասան ամիսք են ի տարւոջ · Երեքին որդիքն մեռան ի միում աւուր · Երեւեցաւ աշակերտացն մետասանից · Այս են անուանք երկոտասան մարգարէից · Ահա մատեանք մարգարէիցն չորեցունց · Եկեսցեն ի չորից ծագաց երկրի · Խաչեցաւ ի մէջ երկուց աւազակաց · Ժողով էր ծերոց եօթանասնից · Ի կատարել ամսոյն երկրորդի · Ի լրանալ ամին վեցերորդի · Զի՞նչ էր անուն մանկանն առաջնոյ · Արշակ էր անուն մանկանն առաջնոյ ։



## 13· Հրահանգ ·

Մեծ է տուն իմ · Ընդարձակ է քաղաք ձեր · Լայն է փողոց մեր · Ուղիղ է ճանապարհ քո · Պտղաբեր է երկիր նոցա · Գիտուն են եղբարք իմ · Յիմար են որդիք ձեր · Անմիտ են ծառայք քո · Տգէտ են բարեկամք քո · Բարձր են տունք մեր · Անուշահոտ է որդի իմ · Տգեղ է դուստր քո · Երկիւղած է մայր իմ · Երկչոտ է եղբայր քո · Ծոյլ է աշակերտ իմ · Կարճ են կեանք մեր · Երկայն են բանք ձեր · Գեղեցիկ է տուն մեր նոր · Պատառատուն են հանդերձք ձեր հինք · Մտավարժ և զգօն է որդի քո երէց · Զուարթ է եղբայր իմ կրտսեր · Լուսաւոր է սրահ մեր վերին · Խաւարին է սենեակ նորա ներքին · Միամոր է դուստր նորա · Ազնիւ է մատեան ձեր · Պարկեշտ է քոյր քո · Մտավարժ կամ զգօն է մանուկ մեր · Անառակ է որդի նոցա · Օգտակար են մատեանք մեր · Աղքատ է բարեկամ իմ · Հաւատարիմ է շուն մեր · Բարձր են լերինք նորա · Դժուարին է ուսումն քո · Հիւանդ է ծառայ մեր · Տրտում է անձն իմ · Կարճ է ճանապարհ մեր · Բազում է արծաթ քո · Ազնիւ է գինի նոցա · Անչափ է մեծութիւն իմ · Քաջ և ժիր է որդի իմ · Երանելի են կեանք մեր · Նոր են հանդերձք ձեր · Պատուական են ակունք քո · Ապաշնորհ է կին քո · Թուխ էին հանդերձք նոցա ։

## 14· Հրահանգ ·

Բարձր է տունս այս կամ տունս · Թշնամի են արքս այսոքիկ կամ արքս · Ամայի է երկիրն այն կամ երկիրն · Անդորր է տեղիս · Գեղեցիկ է պարտէզդ այդ կամ պարտէզդ · Հլու են մանկունքն · Հնազանդ են զինուորքս · Սնոտի են բանքդ այդոքիկ կամ բանքդ · Ամուր են պա–

րիսպքն · Յորդ են ջուրքս · Պղտոր է գետն · Հովասուն է տեղիդ · Հասուն են պտուղքս · Լեռնային են կողմանքն · Դաշտային է երկիրս · Դժուարին են ճանապարհքս · Հանճարեղ են բանքդ · Պանդուխտ են արքն · Ճշմարիտ են բանքս · Արդար է ցասումնդ · Մեր է արծաթն · Իմ են մանկունքս · Քո են մատեանքս · Ո՞վ իցեն կանայքդ · Լի է մատեանս · Փոքր է քաղաքս · Չէ ինչ մեծ պարտէզդ · Բարձր են լերինքս · Եղբայր իմ է մանուկդ · Դուստր միամօր է աղջիկդ · Որդիք ձեր են մանկտիս կամ մանկունքս ։

## 15· Հրահանգ ·

Նոր են հանդերձք եղբօր իմոյ · Հին են կօշիկք մանկանց ձերոց · Պտղաբեր է հող երկրի մերոյ · Բազում են ծառք պարտիզի ձերոյ · Բազում է ողորմութիւն Աստուծոյ մերոյ · Մեծ է զօրութիւն աղօթից ձերոց · Տկար են բանք ծառայից քոց · Բարձր է յարկ տանս այսորիկ կամ տանս · Բազում են բնակիչք քաղաքիս · Սակաւ է արծաթ արանցն այնոցիկ կամ արանցն · Խիստ է տէր ծառայիցն · Ամուր են պարիսպք քաղաքին · Յորդ են ջուրք գետոյն · Հանճարեղ է որդի կնոջդ այդորիկ կամ կնոջդ · Պղտոր է ակն աղբերս · Զով է ջուր աղբերն · Քաղցր են բանք բարեկամացդ · Հասուն են պտուղք ծառոցս · Առողջ է օդ երկրին · Կարի է երկայնութիւն ճանապարհին · Տարաժամ էր մահ մանկանն · Անհնարին է չարութիւն առնս · Հռչակեալ են լաւութիւնք կնոջս ։

Որդի է առն քաջի · Տէր է ծառայի իմաստնոյ · Կին է առն բարւոյ · Քոյր եմ եղբօր հարազատի · Բնակիչք եմք քաղաքի մեծի · Այր է կնոջ բարեբարոյի · Բարեկամ են Թագաւորի հզօրի · Զօրավար է բանակաց մե–



ծամեծաց · Աշակերտ է վարդապետի իմաստնոյ · Որդի է հօր ազնուի · Դուստր էր մօր բարեպաշտի · Ծառայք եմք Թագաւորին երկնաւորի · Տէր էր Աբրահամ ծառայից բազմաց · Այս են բարք որդւոց հնազանդից · Բնակութիւն է անտառս գազանաց վայրենեաց · Կին եմ առն ժանտի · Բնակութիւն է հոգւոց արդարոց ։

## 16· Հրահանգ ·

Բնակիչ են այլոյ աշխարհի · Խօսեցաւ այլով օրինակաւ · Որդի էր կնոջ ուրումն այրւոյ · Եկեալ եմք յայլոց քաղաքաց · Հանդիպեցաք արանց ոմանց · Տուք զդա առն այլում · Ո՞ր այն իցէ տուն ձեր · Յորմէ՞ քաղաքէ էք դուք · Որո՞վ համարձակութեամբ ելցես առաջի նորա · Որպիսի՞ ոք իցես դու · Ի՞ւ իւիք կարօտ իցէ · Որո՞վ աչօք հայեսցիս · Որպիսւո՞յ առն որդի իցէ դա · Տէր է նա ամենայն երկրի · Եկին յամենայն քաղաքաց Հայոց · Ծառայեսցուք այլում տեառն · Այլոյ ճարտարի գործ է այդ · Ի՞մ իմիք օգտակար իցէ այդ ։

## 17· Հրահանգ ·

Բարեկամ քո եմ ես · Ծառայ իմ ես դու · Եղբայր իմ է նա · Ընկեր ձեր եմք մեք · Օգնական մեր էք դուք · Մանկունք իմ են նոքա · Ձեր է երկիրս այս կամ երկիրս · Մեր է գետդ · Որդիք իմ են սոքա · Գեղեցիկ է որդի իմ · Տգեղ է քոյն · Արդար են բանք ձեր · անիրաւ է նոցայն · Ո՞վ են կամ իցեն դոքա · Դստերք իմ են սոքա · Սոքա են աշակերտք դպրոցիս · Այս է անուն իմ · Այսոքիկ են բանք նորա · Ես եմ վարդապետ որդւոյ ձերոյ · Սա է շինիչ եկեղեցւոյս · Մարգարէ ումն ես դու · Մեղաւոր է դա · Արդար եմք մեք · Իմ է ամարանոցս գեղեցիկ · Նորա է ամենայն

կարասի տանս · Քո է մանուկդ · Եղբօրորդի իմ է նա · Սիրելիք մեր էք դուք · Խեռ են որդիք քո · Հլու են իմքն · Սպիտակ է այդ · Թուխ էր իմն ։

## 18· Հրահանգ ·

Սիրեմ զբարեկամ իմ · Հայրն խրատէր զորդի իւր · Ընկերք իմ ատեն զիս · Մայրն խնամէ զդուստր իւր · Առաքեցաք զսպասաւորս մեր · Եղբայր քո կոչէ զքեզ · Աղաչեմ զձեզ · Հայր իմ գրեաց զԹուղԹս · Փակեաց զդուռն սենեկին · Սիրեսցուք զընկերս մեր · Հրաւիրեաց զբարեկամս իւր · Կերակրեցին զնոսա · Մերժեցին զօրէնս իմ · Խաբեցեր զիս · Պահեա զնոսա · Պահպանեա զմեզ · Քաղեցաք զպտուղս ծառոյն · Շինեաց զտուն իւր · Կործանեցին զաշտարակն · Կազմեցին զուռկանս իւրեանց · Թափեցաք զքուրձն · Արձակեցից զնոսա · Վարդապետն պատժէ զաշակերտ իւր ստահակ · Փրկեսցէ զձեզ Աստուած · Արձակեցին զգերիս իւրեանց · Ոստիկանքն խնդրեն զգողն · Վաճառեցի զձին · Գնեցաք զմատեանն · Հայր մեր գնեաց զպարտէզս · Կոչեաց զամենայն բարեկամս իւր · Կոչէ կինն զդրացիս իւր · Հովիւք արածեն զխաշինս · Ես մատնեցից զնա · Պատառեաց քահանայապետն զհանդերձ իւր · Կինս այս սիրէ զմանկունս իւր · Սիրեմ զեղբարս իմ և զքորս · Ոռոգեցեր զծաղիկս քո · Ոռոգեցի զիմն և զքոյս · Քոյր իմ ոռոգեաց զիւրսն · Մշակք գործեն զերկիր · Կատարեաց զգործ իւր · Ժողովեսցուք զցորեանն · Այրեցին զյարդն · Ցրուեցին զամբոխն · Նուաճեաց զքաղաքն · Սրբեաց զարտասուս իւր · Մի աղտեղեր զձորձս քո · Յարդարեցին զփողոցն · Զարդարեաց զտուն իւր · Կապեցին զձեռս և զոտս նորա · Թաղեսցուք զմեռեալս մեր · Խորտակեցին զբարձս նորա · Եփեաց



զուլն · Բաղխէր զդուռն տանն · Մկրտեցին զմանուկն · Վատնեաց զամենայն ինչս իւր · Օրհնեաց Աստուած զԱբրահամ ։

## 19· Հրահանգ ·

Տեսե՞ր զայրն · Տեսի զնա · Գտաք զմարգարիտն գեղեցիկ · Հան զսուր իւր · Տեսաք զծառայս և զաղախնայս ձեր · Ճանապարհորդք մեր հասին · Սպասաւորն հան ի վեր զբանն · Անէծ հայրն զորդի իւր · Ածէք զմանկունս ձեր · Արկ զձորձս քո · Գտի զոչխար իմ զկորուսեալ · Ած զսուր քո · Կլցուք զնոսա · Եմոյծ զմեզ · Անցանեն աւուրք մեր · Հատին զպարան մակուկին · Լուծին զկապանս նորա · Եցոյց զիմաստուԹիւն իւր · Իջին անձրեւք · Ելանէ արեգակն · Լուսին և աստեղք մտանեն · Գտի զեղբարս քո · Տեսից զնոսա · Հարին զնա սպասաւորքն · Սպան զդուստր կնոջն այրւոյ · Լուցին զճրագն · Հարցուք զնոսա · Ելցեն արտաքս · Մտցուք ի ներքս · Հատ զդա · Մի լուծաներ զյաւանակդ · Ցոյց ինձ զերեսս քո · Սպանէք զնոսա ։

## 20· Հրահանգ ·

Շահեցաւ արծաԹ բազում · Կամիմ երԹալ · Մարդիկ խօսին · Զորքոտանիք շրջին · ԳայԹակղեցաւ այրն · Եղբարք ձեր մեկնեցան · Խօսեցան բազում ինչ · ԳայԹակղեսցի ժողովուրդն · Խօսեաց , ընդէ՞ր լռես · Երեւեցաւ նմա հրեշտակ տեառն · Հայր քո աշխատի և շահի բազում ինչ · Վաստակեցան սպասաւորք ձեր · Բարւոք Թուեցաւ ինձ · ԵԹէ մեկնեսցի մայր նոցա · Ցամաքեցաւ աղբիւրն · Ծնաւ զորդի իւր · Ողորմեցարուք մեզ · Ողորմեցաւ նմա Աստուած · Շարժեցան հիմունք երկրի · Արեգակն խաւարեսցի · Շիջաւ ճրագն · Խորհեցայ զայս ամենայն · Հնազանդեցարուք վարդապետաց ձերոց · Ուսայ [illegible]Թեան · Երե-

20309-60

Гос. Библиотека ՀԱՍԽ- им. ССР им. А. Мясникяна

ւեցան լեզուք · Ագաւ զհանդերձս իւր · Մեռաւ հայր քո · Մանկունքն կամ մանկտին սկսան աղաղակել · Անկաւ Բէլ · Շրջանին լապտերք մեր ։

## 21· Հրահանգ ·

Նոքա բնակին ի քաղաքի, մեք՝ ի գեղջ · Եղբարք քո շրջին ի լերինս, իմքն՝ ի դաշտս · Ածին զնա առ դատաւորն · Խորհի երթալ ի Յոյնս · Կամեցաւ գալ առ մեզ · Եղբայր քո եմուտ ի պարտէզն · Առաքեաց առ իս զբարեկամս իմ · Արկ զնա ի բանտ · Սպասաւորքն նըստէին ի սրահին · Նստարուք ի քաղաքիդ · Իբրև կատարեաց զբանս իւր, ել ի լեառնն · Եհան զնոսա ի լեառն մի բարձր · Որդիք քո անկան ի պատերազմի · Մուտ ի սենեակ քո · Տեսի զնա յեկեղեցւոջ · Յղեաց զնոսա յայգի իւր · Բնակեցաւ ի Հայս · Ածաք զնոսա առ քեզ · Հայեցաւ ի նա · Գրեցէք զբանս զայսոսիկ ի մատեանս ձեր · Որդի նորա երէց էր յագարակի · Հատին զգլուխ նորա և բերին առ թագաւորն · Բազումք ելին յԵրուսաղէմ · Եմուտ ի մահիճս իւր · Ունէր գինի բազում ի մառանի իւրում · Սուգ մեծ եղև ի մահուան նորա · Աչք Իսահակայ վատեցին ի ծերութեան նորա · Ոչ ոք մխիթարէր զնա ի տրտմութեան · Ել Սողոմոն յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ · Հրաւիրեցին զմեզ ի տունս իւրեանց · Զիա՞րդ մտեր այսր, պատմեա ինձ · Դիմէր բազմութիւնն յեկեղեցին · Տեսին զնա ի տաճարին · Բազումք խնդասցեն ի ծննդեան նորա · Սուգ առ քաղաքն ամենայն ի մահուան նորա · Թռչունք ճախրեն յօդս · Էաք ժողովեալ ի տան ուրուք մեծատան · Օտարի ումեք ոչ տացէ · Եթէ ոք հակառակեսցի · Առաքեցէք զոք անդր · Մի մտանիցես ի տուն այլոյ ուրուք · Որպիսի՞ ոք իցէ դա · Մեծ ինչ ոք իցես դու · Եթէ ոք կամիցի գալ առ իս ։



## 22· Հրահանգ ·

Եղբարք իմ անսան միշտ վարդապետաց իւրեանց · Ուսանին յաճախ և խաղան դուն ուրեք · Ընդէ՞ր լայ մանուկս · Եբաց Նոյ զպատուհան տապանին · Կացաք առ նոսա · Լուացի զձորձս իմ · Փութայր երթալ յԵրուսաղէմ · Զի՞ հեղգաս · Աճապարեա, ել արտաքս · Ի բաց կացին զինուորքն · Իբրև տեսին զայս, խնդացին յոյժ · Թանայր զոտս նորա · Նոքա լացցեն, և դուք խնդասջիք · Իբրև զգաստացաւ, յայնժամ զգաց · Մոռացան առնուլ հաց · Խոստանայք և ոչ կատարէք · Իմացայ՞ք զայս ամենայն · Ընթացաւ ի գերեզման անդր · Հան զպատմուճան իւր · Հիւանդացաւ այրն · Մերկացարուք զհանդերձս ձեր, և զգեցարուք քուրձս · Զօրացաւ յանկողնի իւրում · Սուգ առէք և ողբացարուք · Աշակերտք նորա գողացան զնա · Վերացաւ ամպն · Զի՞ զարմանայք · Մերձեցաւ ի նա · Մի մերձենար յիս · Դարձան ի տեղիս իւրեանց · Ստացաւ ագարակ · Եթէ վշտանայցէ ոք · Բարձէք զբեռինս ձեր · Ո՞վ եբաց զաչս քո · Լուաց զձեռս իւր ։

## 23· Հրահանգ ·

Խաղային մանկունքն ի հրապարակի անդ · Հիւանդք բազումք են ի տան աստ · Բազումք անկան ի ճակատու անդ · Դարձան յանապատէ անտի · Դիմեցին ի հրապարակ անդր · Խռնեցաւ ամբոխն ի գաւիթ անդր · Ել գազան ի ծովէ անտի · Բնակին արտաքոյ քաղաքին · Խօսեցան առաջի մեր · Վաղիւ մտցուք ի քաղաք անդր · Բազումք հաւատացին ի նա ի տօնի անդ · Ել արտաքս, և ելաց դառնապէս · Ի բանից անտի նորա գայթակղեցան բազումք · Իբրև էջ ի լեռնէ անտի · Աշխատին յաճախ և յոյժ · Դուն ուրեք գտանի ի տան · Գնացին

ի բանակ անդր առ զօրագլուխսն ․ Քանի՞ նկանակք իցեն աստ ․ Հանին զնոսա ի հնոցէ անտի բորբոքելոյ ․ Ածէք զնոսա այսր առ մեզ ․ Զիա՞րդ թուի ձեզ ․ Բարւոք թուի մեզ ․ Հանապազ բրեմք զերկիր , և անդր հեղումք զաղբ մեր ։

## 24․ Հրահանգ ․

Կամէր երթալ , այլ արգելին զնա ․ Թողէք զայրդ ․ Մի հեղուր զարիւն անպարտ ․ Եթող զնա և գնաց ․ Զենում ոչխարս և արջառս ․ Ընկեցին զկարասի նաւին ի ծով անդր ․ Լցէք զբաժակսդ ․ Ընթերցա՞ր զմատեանն կամ զգիրսն ․ Դպիրքն ընթերցան զհրովարտակն ․ Լցին զտեղի նոցա ․ Մի թողուր զիս ․ Զգեցաւ զհանդերձս իւր ․ Ցենու ի ցուպ իւր ․ Զբօսնուին մանկունքն ի պարտիզի անդ ․ Առ զսափոր ջրոյն ․ Առի զարծաթն ի նմանէ ․ Խցին զբերանս առիւծուց ․ Մի յաւելուր զցաւս նորա ․ Հեղձան ի ջուրսն ․ Մերկացարուք զձորձս ձեր հինս , և զգեցարուք նորս ․ Ժողովուրդն զբօսնոյր ի դաշտի անդ ․ Ընկեսցուք զլուծ նորա ․ Եզեն հայր քո զեզնն պարարակ ․ Լցէք զթակոյկդ ջրով ․ Ընկեսցուք զնոսա աստի ի վայր ․ Ընդէ՞ր թողեր զիս ․ Ոչ թողից զձեզ որբս ․ Հեղցես զարիւն նորա ի գետին ․ Առ զիմն , և տուր ինձ զքոյն ․ Մատո զբաժակ քո զի լցից ․ Լցէք զտեղի անկելոցն ․ Խցաք զամենայն ծակ ․ Զո՞րն առցուք , և զո՞րն թողցուք ․ Եհերձ զվարագոյր տաճարին ․ Զիա՞րդ զբօսնուցումք ․ Զիա՞րդ հեղից զարիւն եղբօր իմոյ ․ Ուստի՞ առից զարծաթն ․ Ցո՛ տարայք զնա ․ Ո՞ւր եդին զնա ․ Ցո՞ երթաս ․ Ո՞ւր իցէ բնակութիւն ձեր ։

---



## 25․ Հրահանգ ․

Ի լսել եկեալ է իմ․ Նստան դատաւորքն ի դատել կամ ի դատաստան ․ Աչս ունին ի տեսանել, ականջս՝ ի լսել, ռնգունս՝ ի ծծել զօդ , ձեռս կամ մատունս առ ի շօշափել․ Եկեալ էին ի զննին ՚տեսլեանն ․ Պիւթագորաս եդ օրէնս աշակերտաց իւրոց լռել և հրաժարել ի մսոյ ․ Զիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ ․ Բերին ջուր լուանալ զոտս նոցա ․ Հան նոցա հաց և արմաւ ի կերակուր ․ Ունիք ջուր առատ յըմպել կամ յարբումն ․ Ել նա ի դաշտ անդր ընդ երեկս առ ի զբօսնուլ․ Արարին ջրադարձս կամ ջրմուղս (ջուրի ճամբայ) ոռոգել զանդս որ անջրդի էին ․ Առաքեաց զօրս պահպանել զբերդն կամ ի պահ բերդին ․ Ապականեցին զերկիրն ի սուր և ի հուր ․ Անցուցին զօրն ողջոյն յուրախութիւն և յերգ ․ Ի ձայն փողոյ յառաջ մատուցանէր զզօրսն ․ Ասէր զայս ի ձայն ողորմ․ Ապաշխարեցին ի խորգ և ի մոխիր ․ Խօսեցաւ զայս ամենայն ի մխիթարել զնա կամ ի մխիթարութիւն նորա ․ Երթամք այց առնել կամ յայցելութիւն հիւանդաց ․ Զայս արարին ի ցուցանել զհաւատարմութիւն իւրեանց կամ ի հանդէս հաւատարմութեան իւրեանց ․ Աչս ածէին փախչելոյ անտի ․ Կազմեցին գունդս հանել զթշնամին յաշխարհէն ․ Երաց զդուռն տանն հայել ի ներքս ․ Էջ առ նոսա ի սիւն ամպոյ ․ Թռեաւ ի թեւս հողմոց ․ Գրեցի զայսոսիկ ի յիշատակ ազգաց եկելոց առյապա ․ Եկեալ էին լսել զբանս նորա կամ յունկնդրութիւն բանից նորա ․ Աշխատէր ի բան և ի գիր կամ բանիւ և գրով․ Արարի զգիրս զայս ի պէտս մանկանց ․ Ետ նմա տուն ի բնակութիւն կամ ի բնակել, և անդս ի մշակել կամ ի մշակութիւն ․ Եբեր ոսկի և արծաթ նուիրել ի տաճար անդր կամ ի նուէր տաճարին ․ Առաքեաց արս ի սպաս

Թագաւորին· Ետու ձեզ զցորեանդ և զանասունսդ յուտեստ կամ ի պաշար, և զկտաւս ի հանդերձ։

## 26· Հրահանգ·

Պատժիմք յԱստուծոյ· Գողն և սպանող պատժին· Բազումք տանջեցան ի բռնաւորաց· Թշնամին հեռացաւ ի քաղաքէն· Մարմինք նոցա հանան ի գերեզմանաց· Դարձ յինէն· Ելին ի մէնջ· Իջանէին ի լեռնէ անտի· Իբրև ել ի ջրոյ անտի· Մեկնեցաւ ի տեղւոջէ անտի· Լուաք զայս ի ձէնջ· Բժշկեցան վէրք նորա· Ծառայ հարիւրապետին ապաքինեցաւ ի չարաչար հիւանդութենէ անտի· Ապրեսցի ի տանջանաց իւրոց· Խնդրեցաւ վրէժ մահուանն Աբելի ի Կայենէ· Լուծան կապանք լեզուի նորա· Առաքեցաւ հրեշտակ յԱստուծոյ առ Յովսէփ· Հայր իմ սպանաւ յաւազակաց· Սահանք երկնից բացան· Փակեցին դրունք քաղաքին· Եղբայր քո ընկեցաւ ի յորձանս գետոյն· Հեղցի արիւն նորա· Ահա յուղարկիմք ի ձէնջ· Երկիրս պատի յօդոյ· Պաշարեալ է ցամաք ի ջրոյ· Պաշարեցաւ քաղաքն ի թըշնամւոյն· Դղրդեցաւ երկիրն ամենայն· Հատաւ վէմ ի լեռնէ անտի· Բժշկեսցի մանուկն· Լուարուք յինէն· Ի մէնջ են· Անիծաւ ի մօրէ իւրմէ· Աբէլ սպանաւ յեղբօրէ իւրմէ· Պատրաստիմք ելանել ի ճանապարհ· Ժողովեցաւ արծաթ բազում· Վրէժ մահու նորա խնդրեսցի ի նմանէ· Լցան ամանք նոցա· Առցի քաղաքն· Թօթափեսցին աստեղք· Երկիր սասանեսցի· Ելցես ի տանէ իմմէ· Երկիր յայնմանէ որ սպանանէ զհոգի· Ուսարուք յինէն· Զի՞նչ խնդրէ ի քէն· Ոսկի, արծաթ և այլքն ամենայն ի քրէական նիւթոց հանին ի բովուց· Ամենայն ինչ ի հողոյ է, և ի հող դառնայ· Ի մէ՞նջ իցես թէ ի նոցանէ· Այդ ամենայն ի չարէն է· Խախտեցաւ ի հիմանէ։



## 27· Հրահանգ·

Բարեկամ իմ եկն առ իս· Առաքեցի զնոսա առ ձեզ· Գնացաք առ տանուտէրն· Պատգամաւորքն եկին առ պաշտօնեայն· Գրեցաք առ դատաւորն· Բնակի առ եղբօր իւրում· Արքդ այդոքիկ հիւր են առ մեզ· Բողոքեմ առ կայսր· Զայս գիշեր առ մեզ ագիր· Լուծաւ առ նմա. Առաքեաց առ նոսա զորդի իւր սիրելի· Ընդէ՞ր գրեցէք առ մեզ· Եմուտ առ դրացին· Մահապարտ է այրն առ որում գտցի արծաթն· Ճչէր առ ցաւոցն· Գոչէին առ խնդութեան· Հաչէր ի ցնկութենէն· Մեռանիմ ի կարօտոյ· Հայհոյէր առ ցասման· Ածէք զնա առ իս· Եկին առ դատաւորն· Երթայց առ հայր իմ· Առէք առ իս կուժ նոր· Եկայք, ելցուք առ նա· Մատուցաւ առ նա պարտապան մի· Առ ահին ոչ ընդդիմացաւ նմա· Հիւծեալ էր առ անսուաղութեան· Դարձ առ այր քո· Յղեցի զնա առ բարեկամս իւր· Առ զնա առ իւր· Տարայք զմանուկդ առ մայր իւր· Նստէր առ պատուհանին· Կարդացին առ Աստուած, և նա փրկեաց զնոսա· Ելաց առ վշտին· Առ չժուժել նախատանացն մեկնեցաւ անտի· Մօրու ոչ բնակէ առ ուրջուին· Ո՞ւր իցէ եղբայր քո· Առ հօրային կամ առ հօրուին իւրում է· Ընդէ՞ր ոչ եկիր առ իս· Էի առ քեռւոյն իմում· Յո՞ առաքելոց ես զիս· Առ աներ իմ, տալ նմա աւետիս եթէ ուստր մի եղեւ ինձ· Եղբայր քո հիւր է առ իս· Մի մերձենայք առ նոսա· Էջ առ մեզ ի լեռնէ անտի· Տուր զայս մանկանն աղքատի որ առ դրան կայ· Ոչ ոք համարձակէր մատչել առ նա· Ոչ ոք էր առ նմա բաց ի դստերէն իւրմէ միամօրոյ· Մեք բնակէաք առ ծովակին, նոքա՝ ի վերայ բլրոյն· Գիտէր եթէ առ ատելութեան չարախօսէին զնմանէ· Ամբաստան եղեն զնմանէ առ թագաւորն։

## 28· Հրահանգ ·

Ոչ գիտեն զօրէնս · Կարես ըմպել զբաժակն · Ասա ցիս · Ծառայի իմում ասեմ, արա զայս և առնէ · Արարի իրաւունս և արդարութիւն · Արար Աստուած զերկինս և զերկիր · Արասցուք զկամս Աստուծոյ · Մի ասեր թէ չեմ կարող· Ողջացար, այլ մի ևս մեղանչէր · Գիտէ զկամս նորա · Ոչ կամէր երթալ առ նոսա · Ոչ արգելում զձեզ · Ցարեաւ և կամէր երթալ · Մեղաւ ժողովուրդն · Արարին չար · Արարէք ձեզ բարեկամս · Ոչ առնի օգտակար · Զառնում յանձն առնել զայդ · Մեղայ, զի հեղի զարիւն արդար · Ծառ որ ոչ առնէ պտուղ · Ապա ասացից քեզ · Ասէ ցնա · Ասա ցիս · Ասաց ցիս յունկանէ · Դուք ոչ կարէք գալ անդր · Այժմ ոչ կարես գալ· Ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ· Դու գիտես զամենայն · Ոչ ոք կարէ մտանել ի ներքս · Ոչ գիտէի թէ աստ իցէ · Նա ասաց ցիս զամենայն · Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, յանդիմանեա զնա · Արի, և գնա · Ոչ մեղանչէին նմա գազանքն · Զի՞նչ արար քեզ · Կամէր հարկանել զիս, այլ ոչ կարաց · Գիտեմ զի բարկասիրտ է այրն · Եթէ դու իցես, ասա մեզ համարձակ · Մի մեղանչէր դմա · Ասացի ձեզ, և ոչ հաւատայք · Խորհուրդ արարին զի սպանցեն զնա · Արար նմա ընթրիս · Եղեւ սով մեծ առ Նովաւ · Առ Տրդատաւ և առ Գրիգորիւ եղեւ դարձն Հայոց · Առ Դիոկղետիանոսիւ բազումք ի քրիստոնէից սպանան · Երթայր առ ստորոտով լերինն · Բանակեցաւ զօրն առ դաշտիւն · Նաւէին առ ծովեզերբն մօտ ի ցամաքն · Ես ոչինչ եմ առ Նովաւ · Իմաստութիւն մեր փոքր ինչ է առ քոյովդ · Որպէս մանուկ առ հսկայիւ, այնպէս ես դու առ Նովաւ · Երկիրս այս իբրեւ զգնտակ մի է առ արեգակամբ ·



Քրիստոս ծնաւ առ Հերովդիւ, և առ Պիղատոսիւ խաչեցաւ · Հարցանէր ցպաստաւորսն · Ածին զնա մինչեւ ի գլուխ լերինն · Ցայժմ ոչ ոք երեւեցաւ ։

## 29· Հրահանգ ·

Լուայ զձայն նորա · Հայր քո ծանեաւ զիս · Տարաւ զնա առ թագաւորն · Տարան զնոսա ի տունս իւրեանց · Գազան չար եկեր զորդի իմ· Խուլք լսեն, և համերք խօսին · Լուր աղաչանաց իմոց · Լուարուք ինձ · Ոչ ճանաչեմ զքեզ · Ծանեան զնոսա արք տեղւոյն · Տար զմանուկդ առ մայր իւր · Տարայց զքեզ ի տուն իմ· Մի տանիք զնոսա յերկիր օտար · Ծանիր զքեզ · Եկեր մարախ զամենայն բանջար երկրին · Եղբայր քո շրջի ընդ նմա · Նստէր ընդ ծառովն · Շրջեցայց զնա ընդ ամենայն քաղաքն · Սփռեցան ընդ երեսս դաշտին կամ ընդ դաշտն · Ել համբաւ ի քաղաքին եթէ մեռաւ արքայ · Մի խօսիր ընդ իս · Անցեալ ընդ կիրճն պնդեցան զհետ նորա, այլ ոչ կարացին հասանել· Երթիցուք ընդ ծով· Զիք մեզ ճանապարհ ընդ ցամաք · Մի ելանիցես ընդ դուռն որ ընդ արեւելս · Մտին ընդ յարկաւ իմով· Մտէք ընդ դուռն նեղ · Մի մտաներ ընդ նոսա ի պայքար · Երկոքին եղբարքն կագեցան ընդ միմեանս · Անց զօրն ըստ կամուրջն · Անցին նոքա ըստ հրաման տեառն իւրեանց · Ըստ մեզ՝ չէ ինչ դժուարին · Ջանասցուք ըստ կարի մերում · Ոչ ելին ըստ գաւիթն · Կապեաց զջորին ընդ դուռնն · Վարսեցին զնա ընդ որմն · Զիք խտիր ընդ մեզ և ընդ ձեզ ։

## 30· Հրահանգ ·

Եդի զմատեանն ի վերայ սեղանոյն · Եկին զկնի մեր · Երթայք ի տունս ձեր · Ի տուն օտարի մի երթիցես · Տուր ինձ զբաժին իմ· Հայր քո ոչ տայ պատասխանի ·

Ետու նմա զմատեանսն . Կալան ձկունս բազումս . Սպասաւորքն արբին զգինին . Չոքաւ առ եղբայր իւր . Ո՞ւր եդեր զնա . Ետուն նմա պաշար ըստ բաւականին . Երթիցուք գնել հաց . Եդին զմարմին նորա ի գերեզմանի . Եկայք առ իս ։ Ունի արծաթ բազում. Ոչինչ ունիմք . Ընկալաւ զնա ի տուն իւր . Եղբայր քո եկն առ իս . Եկ ընդ իս , և ցուցից քեզ զտեղին . Տուք մեզ յիւղոյդ ձերմէ . Զամենայն պէտս ձեր տաց ձեզ . Չոքան ընդ իս ի դաշտ անդր . Տուաք նոցա կերակուր փոխանակ արծաթոյ . Եդից զպատկեր քո ի սենեկի իմում. Վասն պարտուց եդաւ ի բանտի կամ արկաւ ի բանտ , այլ յետ ժամու միոյ հանաւ անտի . Ընդէ՞ր տաս արծաթ փոխ առնդ այդմիկ . Տամ նմա փոխ զի պէտս ունի արծաթոյ . Ոչ ըմպեմ ջուր , զի չեմ ծարաւի . Արբաք գինի , զի ոչ գտաւ ջուր . Ո՞ւր եդիր զմատանին . Եդի զնա յարկեղ քում. Յո՞ չոքաւ եղբայր քո . Չոքաւ յորս . Եկին զինուորքն և կամէին ունել զմեզ . Եկն ընդ եղբօր իւրում. Եղբայր նորա եկն ընդ նմա . Եկայք ընդ մեզ . Ունիմ ընդ ձեռամբ իմով . Ունիք զինուորս ընդ իշխանութեամբ ձերով . Յարձակեցան ի վերայ նոցա . Մի լայք ի վերայ իմ. Մի ածէք առաջի իմ. Հանին զնա արտաքոյ քաղաքին . Հանդիպեցաք նմա զճանապարհայն մերձ ի գիւղն . Այս ամենայն գործեցաւ առաջի մեր . Կայր նա արտաքոյ սենեկին , և ես՝ ի ներքոյ . Շինեաց աղբիւր ի մէջ հրապարակին , և ի վերայ աղբերն կանգնեաց զպատկեր իւր պղնձի . Իբրեւ եկաք մօտ ի քաղաքն որ է յանդիման լերինն . Այգեստանն չէ ինչ կարի հեռի ի շինէն . Է պարտէզ շուրջ զքաղաքաւն . և առ պարտիզաւն անցանէ գետ . Կամէաք ելանել մինչեւ ի գլուխ լերինն , այլ հազիւ կարացաք հասանել մինչեւ ցկէսն . Շուրջ եղեն զինեւ , և խնդրէին յինէն տալ զնա ի ձեռս



նոցա . Յարեան ի վերայ նոցա . Նոքա որ առաջի մեր երթային՝ սկսան գալ զկնի մեր . Ոչ կամեցաք կալ յետոյ նոցա . Իբրեւ մտաք ընդ կամարակապ սրահին . Ընկէց նաւն խարիսխ հանդէպ աշտարակին . Զիք վտանգ ի ներքոյ նաւահանգստին , արտաքոյ նորա է վտանգն . Եկ մինչեւ յանկիւն փողոցին , և դարձ անտի յետս ։

## 31. Հրահանգ .

Լուաք զձայն նորա . Յովսէփ ծանեաւ զեղբարս իւր . Առիւծ մատակ պաշտպանէ զկորիւնս իւր . Այր հողագործ մշակէ զերկիր . Քրիստափոր Կոլոմպոս եգիտ զԱմերիկա . Լուաք զնմանէ եթէ առ եղբօր իւրում է . Զիմէ՞ իմեքէ խօսի կամ ճառէ մատեանդ . Զքրէական նիւթոց ճառէ մատեանս . Ո՞ գրեաց զպատերազմէն Վարդանանց . Զպատերազմէն Վարդանանց գրեն Եղիշէ վարդապետ և Ղազար Փարպեցի որ ժամանակակիցք են պատերազմին այնորիկ . Զումմէ՞ էին բանք ձեր . Բանք մեր զարքայորդւոյն էին . Սոքա ամբաստան լինին զնմանէ թէ գաղտ ձեռնտու է ի թշնամիս անդր . Զո՞ ասէք զինէն թէ իցեմ. Լսեմք զձէնջ թէ մեծատունք էք յոյժ . Չոքան զջրոյ . Խնդրէին ինչ զի չարախօսեսցեն զնմանէ . Ածին պարիսպ զքաղաքաւն . Թշնամիք պատեցան զինև . Արկին զնովաւ քղամիդ կարմիր . Արկաւ զանձամբ զհանդերձ իւր . Կալեալ զձեռանէ նորա եմոյծ ի ներքս . Կալեալ զհերաց նորա քարշէին . Ետես անօթ ինչ կախեալ զչորեցունց տտնոցն . Խոյ մի կախեալ կայր զծառոյն Սաբեկայ յեղջերացն . Կախեալ էր զմիոյ ոտանէն . Կախեցին զմանկունսն զպարանոցաց մարց իւրեանց . Ընդ ակամբ հայի ի քեզ, թուի թէ ունի ինչ խէթ զքէն . Ծառայք նորա կային շուրջ զնովաւ . Կալաւ զհանդերձէ նորա . Արկեալ էր զիւրև կտաւ , զի մերկ էր . Յայտնեցաւ յարենէ նորա զորմովն . Ոմանք

յազգաց կռապաշտից սովոր էին ածել զմանկունս իւրեանց զրոցով· Պատմի զԹագաւորէն մերմէ Վարազդատայ եթէ վազեաց նա զԵփրատ գետով. Ի հնումն սովորութիւն էր քուրձ զգենուլ և հող զգլխով արկանել ի նշան սգոյ և ապաշխարութեան· Կամիմ լսել զմանկանէն· Ստոյգ ինչ ոչ պատմի զկռուոյն· Ընդէ՞ր չարախօսէք զինէն· Բազում ինչ լսեմք զնմանէ· Սուտ են բանքն որ ասին զնոցանէ· Չիք իմ գրեալ բարի ինչ կամ չար զումեքէ կամ զիմեքէ· Խօսեսցուք զայլմէ իմեքէ, ոչ միշտ զնոցունց իրաց· Խռնեցաւ ամբոխն զնովաւ· Նստան շուրջ զքաղաքաւն· Զմիջօրէիւ կամ զմէջ գիշերաւ ելանէին ի քաղաքէն· Հասին ի վերայ նորա զմիջոցաւ ճանապարհին· Էր յայնժամ պատերազմ ի մէջ ազգացն երկոցունց։

## 32· Հրահանգ·

Հայր քո զարթեաւ և կոչէ զքեզ· Չարագործք երկընչին յիշխանութենէ· Ցասեաւ յանիրաւի· Հանգեայց ի տան իմում· Թռչունք հանգչին յոստս ծառոց· Երկիր յԱստուծոյ, մի երդնուցուս սուտ· Զինուորք մեր մարտեան քաջութեամբ· Մատեաւ առ նա և աղաչէր զնա· Իբրեւ լուաւ զձայն նորա, փախեաւ· Երկեան ասել նմա զայս· Ընդէ՞ր երկնչիք ի նոցանէ· Փախերուք յանզգամաց· Երդուիր ինձ չմեղանչել նմա· Լեր հաւատարիմ ի բանս քո· Քաջ լերուք· Չիք աստ տեղի վասն իմ· Մի լինիր հեզգ· Իբրեւ զարթեան, տեսին զնա առ իւրեանս· Քաղցեայ և ոչ ետուք ինձ ուտել. Մանկունք հնազանդ լիցին ծնողաց իւրեանց· Պատրաստ լերուք առ վաղիւն· Եթէ իցէ անդ բարեկամ ոք· Զի՞ ցասնուս· Չար ինչ ոչ գործեցի։

---



## 33· Հրահանգ·

Հայր իմ եկեաց զամս եօթանասուն· Խնդրեցին զնա զաւուրս երիս· Ամիսս հինգ տեւեաց պատերազմն· Խօսեցաւ ժամս եօթն· Ժամս տասն աշխատիմ յաւուրն, հանգչիմ ժամս երկուս, ուտեմ և զբօսնում ժամս երիս, և զմնացեալ ժամսն ննջեմ· Բարձրութիւն սեանն էր կանգունս վեց· Հեռի է ի մէնջ քաղաքն աւուր միոյ ճանապարհս· Տարան զնոսա մղոնս երկուս· Ետուն նոցա ցորեան քոռս հինգ· Բարձրացուցին զորմն կանգունս եօթն· Զամս ութ աշխատ եղէ վասն սորա· Աշտարակն հեռի է ի մէնջ քարընկէցս երկուս· Եղբայր իմ եկեաց ամս երեսուն· Զամս տասն բնակեցաւ առ եղբօր իւրում· Գնացաք մղոնս ութ· Վաճառեցաք իւղ լտերս հարիւր· Ուսուցանէր զնոսա զաւուրս երկոտասան· Տառապեցան աւուրս բազումս· Զօր մի ողջոյն ոչ եկեր և ոչ արբ· Գործեսջիր զաւուրս վեց կամ զվեց օր· Կացաք առ նոսա զաւուրս երկուս· Արարին հարսանիս զաւուրս եօթն· Արք երկու եկին առ մեզ· Յետ երկուց աւուրց մեռաւ որդի նորա· Շահեցայ քանքարս երկուս· Արք վեց աշխատեցան զաւուրս տասն· Սպասեցաք նոցա զաւուրս չորս· Երկոտասան ամիսք են ի տարւոջ· աւուրք երեսուն կամ երեսուն և մի՝ յամսեան· Ժամք քսան և չորք՝ յաւուր, և րոպէք վաթսուն ի ժամու· Ամիսք երկու են յորմէ հետէ մեռաւ եղբայր իմ· Նըստայ անդ ժամ մի· Զամենայն գիշերս աշխատ եղաք· Ընդէ՞ր կայք զտիւն ողջոյն դատարկ· Զայն օր արարին օթեւանս առ նմա· Տուր ինձ բաժակ մի ջուր· Կացաք կամ եղաք անդ աւուրս բազումս· Յետ գնալոյ ընդ նոսա զաւուրս երկուս՝ հասաք ի գիւղ մի· Կացի նօթի ժամս տասն· Սիւնս եօթն կանգնեաց ի սրահի անդ· Բնակէր ի տան միում առանձինն· Եկն արամբ

միով․ Ի Թզոյ միոջէ եղև մահ․ Ոչինչ երկար տեւեաց իշխանութիւն երից արանց․ Ածաւ չորիւք զինուորօք․ Էր նա վարդապետ մանկանց աւելի քան զհարիւրոց․ Խօսեցաւ արանց իբրև երից հազարաց․ Մեռաւ յետ աւուրց ութից․ Էին նորա որդիք երկոտասան․ Տեսի զնա յառաջ քան զամս վեց․ Յետ ամսոց հնգից դադարեաց սովն։

### 34. Հրահանգ.

Զոքան զերից աւուրց ճանապարհ․ Երթայք զճանապարհ ձեր․ Երթիցուք ճանապարհ հասարակաց․ Զոգաւ զճանապարհ հեռի․ Մի երթար ճանապարհ ընդ նոսա․ Ոչ կամէին երթալ զերկայն ճանապարհն․ Պնդեցան արքն զկնի նոցա զճանապարհ լերինն․ Զո՞ր ճանապարհ երթիցուք․ Երթիցուք զուղղորդն․ Առաքեաց զնոսա զերկայն ճանապարհն, ինքն չոքաւ զկարճն․ Իբրև եկին զաւուր միոյ ճանապարհ․ Հեռացաք ի քաղաքէն երկուց աւուրց ճանապարհ․ Խօսեցաւ ընդ նոսա զայս օրինակ․ Ամենեքին զնոյն գոյն և զնոյն ձև հանդերձս զգենուն․ Եկն այսր հանդերձ եղբարբ իւրով․ Եկն յԱթէնս կանամբ և մանկտւով հանդերձ․ Յո՞ր ձեռն շինեցաւ եկեղեցիս․ Ի ձեռն ճարտարապետաց Իտալացւոց․ Մեծամեծս վճարէ Աստուած ի ձեռն տկարաց և անաւագաց․ Շինեաց իւր ապարանս զձև ապարանիցն արքունի․ Նա շինել նաւս զօրինակ նաւացն թշնամեաց, բայց ետ ներկել զնոսա այլ ազգ․ Յիմ ձեռն եհաս յայն պատիւ․ Ի ձեռն բարեկամաց իմացոյց նմա զդաւաճանութիւնն․ Յո՞ր ձեռն ստացար դու զմեծութիւնդ, ո՞չ ապաքէն ի մեր ձեռն։

---



### 35. Հրահանգ.

Շրջիմ․ շրջեցայ․ շրջեցուցանեմ․ Դառնամ․ դարձայ․ դարձուցանեմ․ Մատչիմ․ մատեայ․ մատուցանեմ․ Հասանեմ․ հասի․ հասուցանեմ․ Վերանամ․ վերացայ․ վերացուցանեմ․ Թռչիմ․ թռեայ․ թռուցանեմ․ Ճանաչեմ․ ծանեայ․ ծանուցանեմ․ Զբօսնում․ զբօսայ․ զբօսուցանեմ․ Շիջիմ․ շիջայ․ շիջուցանեմ․ Յառնեմ․ յարեայ․ յարուցանեմ․ Գնամ․ գնացի․ գնացուցանեմ․ Կեամ․ կեցի․ կեցուցանեմ․ Կամ․ կացի․ կացուցանեմ․ Լամ․ լացի․ լացուցանեմ․ Խոնարհիմ․ խոնարհեցայ․ խոնարհեցուցանեմ․ Սնանիմ․ սնայ․ սնուցանեմ․ Ծնանիմ․ ծնայ․ ծնուցանեմ․ Մեղանչեմ․ մեղայ․ մեղուցանեմ․ Բուսանիմ․ բուսայ․ բուսուցանեմ․ Զօրանամ․ զօրացայ․ զօրացուցանեմ․ Գօսանամ․ գօսացայ․ գօսացուցանեմ․ Դառնանամ․ դառնացայ․ դառնացուցանեմ․ Ուսանիմ․ ուսայ․ ուսուցանեմ․ Ամաչեմ․ ամաչեցի․ ամաչեցուցանեմ․ Լնում․ լցի․ լցուցանեմ․ Զարմանամ․ զարմացայ․ զարմացուցանեմ․ Իմանամ․ իմացայ․ իմացուցանեմ․ Զգամ․ զգացի․ զգացուցանեմ․ Վրիպիմ․ վրիպեցայ․ վրիպեցուցանեմ․ Հաւանիմ․ հաւանեցայ․ հաւանեցուցանեմ․ Հաճիմ․ հաճեցայ․ հաճեցուցանեմ․ Յուսամ․ յուսացայ․ յուսացուցանեմ․ Մոռանամ․ մոռացայ․ մոռացուցանեմ․ Մոլորիմ․ մոլորեցայ․ մոլորեցուցանեմ․ Բարձրանամ․ բարձրացայ․ բարձրացուցանեմ․ Թուլանամ․ թուլացայ․ թուլացուցանեմ․ Խստանամ․ խստացայ․ խստացուցանեմ․ Սովորիմ․ սովորեցայ․ սովորեցուցանեմ․ Ժառանգեմ․ ժառանգեցի․ ժառանգեցուցանեմ․ Զովանամ․ զովացայ․ զովացուցանեմ․ Ցրտանամ․ ցրտացայ․ ցրտացուցանեմ․ Ուծանամ, ուծացայ․ ուծացուցանեմ․ Ջեռնում․ ջեռայ․ ջեռուցանեմ․ Մեծանամ․ մեծացայ․ մեծացուցանեմ․ Զարթնում․ զարթեայ․ զարթուցանեմ․ Ագանիմ․ ագայ․ ագուցանեմ․

Հնազանդիմ. հնազանդեցայ. հնազանդեցուցանեմ. Դադարիմ. դադարեցայ. դադարեցուցանեմ. Ապրիմ. ապրեցայ. ապրեցուցանեմ. Տրտմիմ. տրտմեցայ. տրտմեցուցանեմ։

### 36. Հրահանգ.

Եղբայր քո ոչ հատուցանէ զպարտս իւր. Իբրև հատուցաւ մանուկն ի ստենէ. Կալեալ զձեռանէ նորա յարոյց. Աշակերտք նորա զարթուցին զնա. Ագուցի նմա զհանդերձս իւր. Ննջեցոյց զմանուկն ի վերայ ծնգաց իւրոց. Զարմացուցանէր զբազումս. Դարձո զմանուկդ առ մայր իւր. Մատուցաւ առ նա պարտապան մի. Շիջուցին զհուրն. Ո՞ շիջոյց զճրագն. Շրջեցոյց զնա ընդ ամենայն քաղաքն. Հնազանդեցոյց զամենայն ազգս. Դադարեցուցաք զնոսա անդէն զաւուրս երկուս. Ապրեցո զիս ի վտանգէս. Մի տրտմեցուցանէր զնա. Աշխատեցոյց զնոսա չարաչար. Նախ զնոսա անցոյց ընդ գետն, ապա անց և ինքն. Չտամ նմա խօսել. Ոչ տան մեզ ոգի առնուլ. Չետ նմա խօսել հակառակ մեզ. Ինքն ոչ գիտէ դպրութիւն, այլոց տայ գրել. Ետուն նմա ըմպել գինի. Տաց պատուհասել զձեզ. Ետ աքսորել զնա ի կղզի մի. Ոչ տամք ձեզ անցանել ընդ երկիր մեր. Ետ զենուլ ոչխարս երկուս. Եթէ տացես ինձ տեսանել զորդիս իմ. Չտայ նոցա ճիչ հանել. Ետ տանել զնա ի տուն իւր. Հատո ինձ զպարտս քո. Զօրացո զիս զայս նուագ եւս. Դուստրն փարաւոնի սնոյց զՄովսէս. Մեծացոյց Աստուած զԱբրահամ։

### 37. Հրահանգ.

Տգիտութիւն քոյր է ամբարտաւանութեան. Դատարկութիւն մայր է ամենայն չարեաց.Ստէպ ընթերցուածք անդեղայ են ձանձրութեան. Գինի կաթն է



ծերոց. Առիւծ արձակ է այր բռնաւոր. Նշան անմեղութեան է շուշան. Ահագին է ցասումն առիւծու. Ո՞ւր իցէ հայր քո. Հայր իմ ի տան է. Եղև անդ աւուրս բազումս. Կին մի էր ի քաղաքին. Գազանք գոն յանտառի անդ. Ի պարտիզի անդ են եղբարք ձեր. Ի լինել իմում կամ մինչ էի ի բանտին. Չէր նա ընդ մեզ. Մահ է ի կաթսայի անդ. Ամբոխ բազում էր ի սրահին. Մայր իմ ի սենեկի իւրում է. Ամենեքին աստ են. Էին երկոքին ի միասին. Են աստ սուսերք երկու. Որդի նորա երէց էր յագարակին. Էր անդ այր մի. Սպասաւորք բազումք են ի տան հօր իմոյ. Դուք ի ծովու էք, մեք ի ցամաքի. Ի սրահի աստ են օտարականքն. Առ մեզ է հիւրն. Հարսանիք են ի տան աստ. Չիք պտուղ ի թզենւոջն. Արծաթ քո յարկեղ իմում է. Գերեզման նորա էր ի գաւթի եկեղեցւոյն. Երկիրն ի խաղաղութեան էր. Ծառն կենաց էր ի մէջ դրախտին. Սպասաւորք մեր ի դաշտի անդ են. Ի չինի անդ են քորք ձեր. Ո՞ւր էր մայր քո. Մայր իմ էր յեկեղեցւոջ. Էր անդ երամակ մի խոզից. Երկուք ի սպասաւորաց նորա են ի քաղաքի, երեքն՝ ի չինի. Աստ է մին ի նոցանէ։

### 38. Հրահանգ.

Են իմ եղբարք երկու. Էին նորա ոչխարք և արջառք. Դուստր մի միամօր էր նորա. Է իմ մատեան մի. Պարտէզ մի փոքրիկ է եղբօր իմոյ. Է մեր տուն մի գեղեցիկ. Ապարանք մեծամեծք են նոցա. Զինուորք բազումք են թագաւորին այնորիկ. Չիք պաշար զօրաց նորա. Ուստր մի և դուստր մի են հօրեղբօր իմոյ. Իցէ՞ քոյ արծաթ բազում. Չիք իմ արծաթ բազում. բարեկամք բազումք են իմ. Իցե՞ն նոցա ծառայք և աղախնայք. Տուն մի մեծ է հօր իմոյ. Էր նորա շուն մի

փոքրիկ · Չիք իմ տեղի · Ոչ գոն նոցա ծառայք և աղախնայք · Եղեւ նորա պատերազմ ընդ Եգիպտացիս · Աչք են նոցա և ոչ տեսանեն · ականջք են և ոչ լսեն · Բարեկամի իմոյ է շուն մի փոքր որ հաւատարիմ է յոյժ · Են մեր մատեանք բազումք · Է իմ այլ նաւ միւս եւս տուն որ գեղեցիկ է յոյժ · Բարեկամք բազումք են մեր · Երջանիկ եմք յոյժ · Ոչ գոն բարեկամք չարաց , և թշուառ են նոքա · Եղեւ նորա որդի մի · Ստացուած բազում է հօր իմոյ · Գութ մեծ էր կնոջն առ որդեակս իւր ։

## 39· Հրահանգ ·

Եղբայր իմ մեծատուն է իբրեւ զհայր քո · այլ չէ մեծատուն քան զիս · Տուն հօրեղբօր ձերոյ ընդարձակ է իբրեւ զմերն · Մեծ է պարտէզս , այլ չէ գեղեցիկ քան զիմն · Առիւծ ոչ է անագորոյն քան զվագր · Կամիմ քակել զտուն իմ , և եւս գեղեցիկ շինել · Մանուկս այս զգօն և հանդարտ է քան զդուստր քո · Ծովք խորագոյն և ընդարձակագոյն են քան զծովակս · Արդար էք դուք քան զիս · Անիրաւ եմ ես , դու անիրաւ ես քան զիս , եղբայր քո ամենեւին իսկ անիրաւ է · Մեծ ես դու քան զեղբայր իմ · այլ չես զգօնագոյն քան զնա · Ծառայք մեր երջանիկ են քան զձերսն · Բժիշկ իմ ճարտար է քան զքոյն · Այրս այս մեծատուն է յոյժ · Ունի տունս աւելի քան զերեսուն · Դու զբազում իւիք զբաղեալ ես , այլ եղբայր իմ զբաղեալ է քան զքեզ · Դու զբօսնուս սակաւ , ես սակաւ քան զքեզ · իսկ քոյր մեր սակաւ եւս քան զմեզ · Օդ թեթև է քան զջուր · Որդի իմ իմաստուն է քան զքեզ · Լեառնս այս բարձր է քան զամենայն լերինս · Լաւ իցէ մեռանել յաշխարհի քան լինել վատանուն · Լաւ է շուն կենդանի քան զառիւծ մեռեալ · Հզօր են թագաւորք ,



այլ Աստուած հզօրագոյն է քան զնոսա · Զգօն է եղբայր քո , այլ եղբայր իմ զգօնագոյն եւս է քան զնա · Պարկեշտ է քոյր ձեր , այլ աղջկունք դպրոցի մերոյ պարկեշտագոյն են քան զնոսա · Մանկունքս այսոքիկ հանճարեղ են քան զհայր իւրեանց · Հողմ և ջուր բուռն և ուժգին են քան զամենայն ինչ · Չիք գազան ահագին քան զառիւծ · Լոյս արեգական պայծառ է քան զլոյս լուսնի · Հոգի առաւել է քան զմարմին · Փոքր է լուսին քան զայլ աստեղս · Են աստեղք որ մեծ են քան զարեգակն · Գինի հին պատուական է քան զնորն · Լեառն Նպատ չէ ինչ բարձր քան զԱրարատ · Սեաւ ծով ամբոխի յաճախ քան զմիջերկրականն · Այրս այս ճանապարհորդէ ստէպ քան զմեզ · Լերինքս այսոքիկ բարձր են յոյժ · Սաստիկ է յոյժ բռնութիւն ջրոյ · Դժուարին է յոյժ յաղթել նմա · Կարի հեռի էր ի մէնջ ցամաքն · Անհնարին բանիբուն է այրն ։

## 40· Հրահանգ ·

Ի՞մ իմիք կարօտ իցես · Կարօտ եմ օգնութեան ձերում · Հաճոյ եղև Նոյ Աստուծոյ · Կամի՞ս հաճոյ լինել ինձ · Լեր հաճոյ Տեառն քում · Լի էին քուրձք նոցա ցորենով · Բերին կողովս երիս լի պտղովք · Շտեմարանք մեր ունայն են յարդեանց · Բարեկամ , գոհ եմ զքէն · Տեարք նոցա գոհ էին զնոցանէ · Աշխատութիւն օգտակար է մարմնոյ · Վնասակար է դատարկութիւն եւ հոգւոյ եւ մարմնոյ · Գիտութիւն պիտոյ է ամենայն մարդոյ · Հոգի առաւել է քան զմարմին · Առաւել ես դու իմաստութեամբ քան զեղբարս քո · Չեմք ինչ թերի ի քաջութենէ · Թափուր էր երկիրն ի բնակչաց · Ազատ էք ի ցաւոց · Զերծ են նոքա յախտից · Տուն նորա կից էր յեկեղեցին · Արքն հմուտ էին որսոյ · Իցե՞ս տեղեակ ճանապարհին · Չեմք ինչ անտեղ-

եակ խորհրդոց նոցա· Մի լինիք հաղորդք գործոց նոցա· Գիրն դիւրին էր յընթեռնուլ· Դժուարին առ իմանալ էին բանքն· Յուրբ եմ յարենէ նոցա. Մերկ էին յառաքինութենէ և ի գործոց բարեաց. Վարժ էր նա յարուեստ գրչութեան· Զի և շուն ընտանի են յոյժ մարդոյ· Պատուէր Աստուծոյ է հնազանդ լինիլ աւագաց· Մի լինիք օտար ի մէնջ· Պարտ է մեզ հպատակ լինիլ կամացն Աստուծոյ։

## 41· Հրահանգ·

Երկուք ի նոցանէ երթային ի գիւղ մի· Բազումք ի մէնջ անդ էին· Հինգն ի նոցանէ իմաստունք էին, և հինգն՝ յիմարք· Ոմանք ի բազմութենէ անտի մատեան յառաջ· Ոմն յեղբարց ձերոց առ մեզ է· Մի ոմն յիշխանաց անտի ասէ ցնա. Սակաւք ի ձէնջ կարեն առնել զայս· Կէսք ի նոցանէ սպանան. այլք վարեցան ի գերութիւն· Զոմանս յաւազակաց անտի սպանին. զմնացեալսն ընկեցին ի ծով. Ոչ սակաւք ի նոցանէ պրծան· Ոչ զմի ոք ի նոցանէ թողոյր ապրեալ· Փոքրիկն ի ձէնջ մեծ է քան զնա· Հազար մի ի նոցանէ կորեան. Իւրաքանչիւր ի նոցանէ առ մէն մի յուս· Ո՞ ոք ի ձէնջ կամիցի գալ ընդ իս. Զո՞րս յանցաւորաց անտի կալաք· Զերկուս եւեթ ի նոցանէ կալաք, այլքն փախուցեալ ի լերինս ապրեցան։

## 42· Հրահանգ·

Մահկանացու են մարդիկ· Բարեկամ իմ ես դու· Որդիք են նոքա առն մեծատան· Որդիք Աստուծոյ կոչեսցին· Գտան նոքա անարատք· Արարի զնա ինձ բարեկամ· Արարին զմեզ դաստիարակս որդւոց իւրեանց· Եդ կամ կացոյց զնոսա մատակարարս ի վերայ տան իւրոյ· Եգիտ զդրունս բանտին փակեալս· Ո՞չ ապաքէն



տեսուչս կարգեաց զձեզ Թագաւորն· Գտի զնոսա արդարս· Զի՞նչ կոչեցից զձեզ· Եդ նոցա անուանս որդիս որոտման· Դատարկանձունս ուսուցէք զմանկտիդ· Ուսուցէք զկանայս ձեր տնարարս, զդստերս ձեր ժիրս և զգաստս· Լերինքս եղիցին ի դաշտ· Լիջիր ինձ յորդի և ես եղէց քեզ ի հայր· Երկիրդ շէն մի լիցի յանապատ· Ընտրեցի զնոսա ինձ խորհրդականս և խրատտուս· Ազգք մեծամեծք քակտեցան և եղեն յոչինչ· Միրգքս եղիցին ձեզ ի կերակուր։

## 43· Հրահանգ·

Միհրդատ մեծ, արքայ Պոնտոսի, ստէպ կռուեցաւ ընդ Հռովմայեցիս և յաղթեաց նոցա· Դաւիթ եթող զթագաւորութիւն իւր որդւոյ իւրում Սողոմոնի· Դաւիթ ետ սպանանել զՈւրիա, զի առցէ զկին նորա, զԲերսաբէ· Յաւուրս Ռոբովամայ, որդւոյ Սողոմոնի, թագաւորութիւնն Իսրայելի բաժանեցաւ յերկուս· Անց ընդ գետն մեծ, ընդ Եփրատ· Ասէ Անդրէաս ցեղբայր իւր, ցՊետրոս· Զի՞նչ խնդրես յինէն, յառնէ տառապելոյ· Եկն ի հայրենիս իւր, ի Յոյնս· Աղեքսանդր մեծ, արքայ Մակեդոնացւոց· Նուաճեաց զտէրութիւնն Պարսից· Այս եղեւ առ Դարեհիւ Կոդոմանոսիւ, արքայիւ Պարսից· Յիսուս խաչեցաւ հրամանաւ Պիղատոսի Պոնտացւոյ, դատաւորի Հռովմայեցւոյ· Աստուած հրամայեաց Աբրահամու զոհել զորդի իւր զմիամօր, զԻսահակ· Դարձն Հայոց ի քրիստոնէութիւն յերկրորդում նուագի եղեւ ի ձեռն սրբոյն Գրիգորի, Լուսաւորչի· Հռիփսիմեանք, կուսանք Հռովմայեցիք, հրամանաւ Տրդատայ սպանան ի մայրաքաղաքին Հայոց, ի Վաղարշապատ· Աբրահամ ասաց ցծառայ իւր, ցԵղիազար· Յակոբ եկն յԵգիպտոս առ որդի իւր, Յովսէփ· Կայէն նախանձեցաւ ընդ եղբայր իւր, ընդ Աբէլ, և սպան

զնա· Քաղաքք նշանաւորք էին առ եզերբ գետոյն Երասխայ կամ Երասխ գետոյ· Երանելիքն Սահակ և Մեսրովպ թարգմանեցին զգիրս հանդերձ աշակերտօք իւրեանց, Եզնկաւ, Արձանիւ, Յովսեփաւ, Յովհաննու և Կորեամբ։

## 44· Հրահանգ·

Լուր, որդեակ, խրատու հօր քո· Զո՞ խնդրես, կին դու· Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց· Զի՞ տանջես զիս, այր դու· Ո՞ ած զքեզ այսր, գեղեցիկդ Արիադնէ· Առ զզէն քո, քաջդ Վահան· Արի, կաց, մանուկ դու· Քեզ ասեմ, աղջիկ դու· Զի՞ նընջես, զարթիր, ո՛վ վատ· Տեարք, զի՛նչ կամիք զի արարից· Գիտեմ զքեզ, սուրբդ Աստուծոյ· Շնորհակալ եմ զքէն, քաջդ Փելիքս· Թագաւորդ Իսրայելի, էջ ի խաչէդ· Ի բաց կացէք յինէն, մշակքդ անիրաւութեան· Յամօթ լեր, թշնամիդ խաղաղութեան· Մեծ են վարձք քո, հայրդ աղքատաց։

## 45· Հրահանգ·

Աշակերտն որ ուսանի, որ ուսանէր, որ ուսաւ, որ ուսցի, որ ուսանիցի, որ ուսանելոց է կամ իցէ։

Զինուորն որ մարտնչի, որ մարտնչէր, որ մարտեաւ, որ մարտիցէ, որ մարտնչիցի, որ մարտնչելոց է կամ իցէ։

Արքն որ գան, որ գային, որ եկին, որ եկեսցեն, որ գայցեն, որ գալոց են կամ իցեն։

Անասունքն որ արածին, որ արածէին, որ արածեցան, որ արածեսցին, որ արածիցին, որ արածելոց են կամ իցեն։

Թշնամին որ փախչի, որ փախչէր, որ փախեաւ, որ փախիցի, որ փախչիցի, որ փախչելոց է կամ իցէ։



Մատեանն զոր տեսանեմ, զոր տեսանէի, զոր տեսի, զոր տեսից, զոր տեսանիցեմ, զոր տեսանելոց եմ կամ իցեմ։

Արծաթն զոր առնուս, զոր առնուիր, զոր առեր, զոր առցես, զոր առնուցուս, զոր առնլոց ես կամ իցես։

Պարգեւքն զոր տամք, զոր տայաք, զոր տուաք, զոր տացուք, զոր տայցեմք, զոր տալոց եմք կամ իցեմք։

Տունն զոր շինէ, զոր շինէր, զոր շինեաց, զոր շինեսցէ, զոր շինիցէ, զոց շինելոց է կամ իցէ հայր քո։

Զոհքն զորս մատուցանեն, զորս մատուցանէին, զորս մատուցին, զորս մատուսցեն, զորս մատուցանիցեն, զորս մատուցանելոց են կամ իցեն նոքա։

Որ խօսին, որ խօսէրն, որ խօսեցաւն, որ խօսեսցին, որ խօսիցին, որ խօսելոցն է կամ իցէ։

Որ տեսանէն, որ տեսանէրն, որ ետեսն, որ տեսցէն, որ տեսանիցէն, որ տեսանելոցն է կամ իցէ։

Որ երգենն, որ երգէինն, որ երգեցինն, որ երգեսցենն, որ երգիցենն, որ երգելոցն են կամ իցեն։

Որ առաքինն, որ առաքէինն, որ առաքեցանն, որ առաքեսցինն, որ առաքիցինն, որ առաքելոցն են կամ իցեն։

Որ շրջինն, որ շրջէինն, որ շրջեցանն, որ շրջեսցինն, որ շրջիցինն, որ շրջելոցն են կամ իցեն։

Զոր տեսանեմս, զոր տեսանէիրս, զոր տեսիրս, զոր տեսիցն, զոր տեսանիցեմն, զոր տեսանելոցն եմ կամ իցեմ։

Զոր առնուսդ, զոր առնուիրդ, զոր առերդ, զոր առցեսդ, զոր առնուցուսդ, զոր առնելոցդ ես կամ իցես։

Զոր ասէն, զոր ասէրն, զոր ասացն, զոր ասասցէն, զոր ասիցէն, զոր ասելոցն է կամ իցէ։

Զոր նայն գրէ, զոր նայն գրէր, զոր նայն գրեաց,

զոր նայն գրեսցէ, զոր նայն գրիցէ, զոր նայն գրելոց է կամ իցէ։

Զոր մեքն ըմպեմք, զոր մեքն ըմպէաք, զոր մեքն արբաք, զոր մեքն արբցուք, զոր մեքն ըմպիցեմք, զոր մեքն ըմպելոց եմք կամ իցեմք։

Զոր դուքն ուսանիք, զոր դուքն ուսանէիք, զոր դուքն ուսայք կամ ուսարուք, զոր դուքն ուսջիք, զոր դուքն ուսանիցիք, զոր դուքն ուսանելոց էք կամ իցէք։

## 46. Հրահանգ.

Աստ է այրն որ սպան զեղբայր քո. Տեսի զկինն որ խօսէր ընդ քեզ. Ոչ իմացան զբանն զոր նոքա ասէին. Գիտիցէ՞ք զարսն որ խռովեն զքաղաքն. Ո՞ւր իցեն արքն որ եկին այսր. Ընթերցայ՞ք զմատեանն զոր առաքեաց հայր իմ. Չեմ ինչ տեղեակ որոց դուդ պատմես. Գեղեցիկ են ծաղիկքդ զորս մատուցանես ինձ. Քաղցր են յոյժ պտուղքն զոր հասուցանեն ծառքդ. Ոչ եւս դառնայ ժամանակն որ անց. Չիք որ գիտիցէ զխորհուրդս նորա. Բազում են որք ճանաչեն զքեզ. Բարեկամ մեր են արքն յորոց զընծայսդ ընկալարուք. Ուստի՞ լուար զայդ ամենայն զոր գրեցեր. Ընթերցայ զբազումս ի գրոց անտի զոր դու յօրինեցեր. Որդիք ազնուականաց էին մանկտին որ հեղձան ի ծովու. Մի է ի սպասաւորաց թագաւորին պատանին որ երեր զթուղթն. Նշան մեծ են յաղթութեան դափնիքն որով պսակեալ են զինուորքդ. Կատարեցի զհրամանսն զոր ետուր. Անպարտ էին արքն որ սպանան. Կէսք յաստեղաց որ երեւին ի գիշերի՝ անշարժք են, և այլքն՝ գնայունք. Աստ է այրն զոր տեսաք. Տեսի զընծայսն զորս ընկալաք. Ընտիր է յոյժ մատեանն զոր յօրինեցեր. Եկն առ իս սպասաւորն զոր առաքեալ էր նա. Չիցե՞ս տեղեակ հրդեհին որ պատահեցաւ յայսմ գի-



շերի. Եթէ ճշմարիտ է գործն զոր տաս, արդարեւ տրտմել պարտ է. Եթէ արդար են բանքս զոր ասեմ, ընդէ՞ր բարկանաս։

## 47. Հրահանգ.

Բարեկամ ձեր է որ արարն զայս. Որ զիրսն ետես՝ աստ է. Որ մատնեացն զքեզ՝ որդի քո է. Որ խօսեցանն ընդ մեզ՝ վկայեցին. Որ տեսինն և լուան՝ երանելիք են. Որ ոչն գործիցէ՝ կերիցէ մի. Որք կերանն՝ էին արք հինգ. Որ ընթեռնուն՝ ի միտ առցէ. Որ առաքեացն զիս՝ պատուէր ետ ինձ. Որ գրեցինն զմատեանս՝ ճանաչեն զձեզ. Զարմացան որ անդն էին. Որք մտանէինն և ելանէին՝ տեսանէին. Պարտ է պատուհասել զորս ոչն գործեն. Կալաք զորս անդն գտան. Ընդ որում խօսիմս՝ քոյր ձեր է. Զոր տեսանեսդ՝ եղբայր իմ է. Որում խնդրէ ի քէն՝ տուր. Տեսի զոր արարն զայս. Զորս միանգամ կալանն՝ ընդ սուր հանին. Տաց քեզ զոր ետուրն ցիս. Զոր լուաքն՝ պատմեսցուք քեզ. Ընթերցայ զոր գրեալն էր. Զոր առաքեալն էիր՝ ընկալայ. Ճշմարիտ է զոր ասեսդ. Ոչինչ գիտեմ յորոց ասէքդ. Սուտ է ընդ որ պարծիսդ. Զոր առնելոցն իցես՝ արա վաղվաղակի. Տուր ինձ զոր խնդրեմս. Ընկալայ զոր յղեցերդ. Ոչինչ կորուսի յորոց ետուրն ցիս. Գիտեմ յորմէ կասկածեսդ. Ոչինչ պատահեցաւ յորոց երկնչէաքս. Իմ է զոր առերդ. Չի՞նչ էին զորս կորոյսն։

## 48. Հրահանգ.

Հասեալ զինուորացն ի վերայ, կապեցին զնա. Ելեալ նորա ի լեառնն՝ նստաւ. Պատմեալ նոցա զբանս իմ պատգամաւորին՝ եկին անդրէն առ իս. Ածեալ զնա յարտեւան լերինն՝ կամէին արկանել ի վայր. Մուծեալ

ի ներքս զայրն օտարական՝ փակեցին զդուռնն. Իջեալ յելուզակացն ի լեռնէ անտի՝ բանակեցան ի դաշտին. Իջեալ յերկնից հրեշտակ Աստուծոյ՝ նստէր ի վերայ գերեզմանին. Ելեալ կանանցն վաղվաղակի ի պարտիզէն անտի՝ փութային անկանել ի շէնն. Մատուցեալ եղբայր քո խօսեցան ընդ նոսա. Տեսեալ զայս մատնչին զղջացաւ. Առեալ նոցա զարծաթն՝ ետուն սպասաւորացն. Մատուցեալ ծառայքն երկիր պագանէին նմա. Զայս ասացեալ նորա՝ ննջեաց. Խոնարհեցուցեալ զգլուխ իւր աւանդեաց զհոգին. Կալեալ զձեռանէ նորա հան արտաքս. Մտեալ ոստիկանացն ի ներքս՝ խնդրէին զնա. Զարթուցեալ Մեսրոպայ ի քնոյ՝ստեղծ զնշանագիրս մեր. Ելեալ նորա ի քաղաքէ անտի եկն առ մեզ. Տեսեալ Յովսեփայ զեղբարս իւր՝ ծանեաւ զնոսա. Հատեալ զգլուխ նորա բերին առ թագաւորն. Կալեալ զձեռանէ իմմէ տարաւ ի ներքս. Լուեալ Ադամայ զձայն գնալոյ նորա՝ թաքեաւ. Լուեալ մորն զբօթ մահուան որդւոյն՝ սկսաւ լալ. Մտեալ ի մահիճս իւր ննջէր. Կոչեալ զեղբարս ձեր առաքեցի զնոսա. Եկեալ զինուորացն կամէին ունել զմեզ. Ելեալ Սողոմոնի յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ՝ հնազանդեցոյց իւր զամենայն ազգս. Մատուցեալ առ նա ծառայք նորա՝ աղաչէին. Առեալ զնա մեկուսի՝ խօսէր ընդ նմա. Թողեալ զմեզ չոքան ի տունս իւրեանց. Նստեալ յաթոռ՝ դատէր զժողովուրդն. Կացեալ մեր անդ զաւուրս բազումս՝ սպասէաք գալստեան նորա. Անցեալ ընդ պատուհանն եմուտ ի ներքս տեսանել զնա. Կացեալ առաջի տաճարին՝ խօսէր ընդ եղբօր ձերում. Խարոյկ արկեալ նստան և ջեռնուին։

---



## 49. Հրահանգ.

Լուեալ է ձեր վասն նոցա. Բազում անգամ տեսեալ է իմ զնա. Ընթերցեալ էր նոցա զթուղթս մեր. Զիցէ՞ ընթերցեալ ձեր. Զիք մեր ընթերցեալ այնպիսի ինչ. Բազում ինչ լուեալ է իմ զնմանէ. Բազում չարիս գործեալ էր նորա. Զայս առեալ է մեր պարգեւ ի թագաւորէն. Եթէ հաւատարիմ լեալ էր ձեր առ թագաւորն. Լուեալ է ձեր զառաջին գնացս իմ. Տեղեկացեալ էր նորա ճանապարհին. Ոչ ճաշակեալ է մեր և ոչ արբեալ. Եթէ պահեալ էր մեր զպատուիրանս նորա. Այն ինչ դարձեալ էր նոցա ի գերութենէ. Զգեցեալ էր նոցա մոյգս. Զտամ թոյլ անցանել քեզ աստի. Այս է հրաման թագաւորին, մեկնել ձեզ վաղվաղակի ի քաղաքէ աստի. Պատմի հասանել նոցա ի դաշտ մի և շինել անդ քաղաք. Պատուէր ետու սպասաւորացն գալ այսր. Աղաչէին զնա մի մտանել անձամբ ի կռիւն. Ասեն լինել քեզ թշնամի կայսեր. Ըղձանան լինել քեզ նոցա զօրավար։

## 50. Հրահանգ.

Առաքեալ դահիճ՝ ետ գլխատել զնա. Եկեալ ի տուն պատմեաց մեզ զեղեալսն. Թողեալ զմեզ անդ՝ մեկնեցան. Ընկալեալ զնոսա ի տուն իւր ետ նոցա կերակուր. Վաճառեալ զամենայն ինչս իւր չոքաւ ի տար աշխարհ. Հարցեալ մեր զնոսա, ոչ կամեցան տալ մեզ պատասխանի. Գտեալ ձեր զնա, ազդ արասջիք մեզ. Հասեալ մեր անդր, ոչ գտաք զնա անդէն. Ի դառնալ ձերում յերկիր ձեր, տարայք և զիս ընդ ձեզ. Ի տեղալ անձրեւաց՝ յորդէ գետն. Լուեալ մեր զայս՝ զարմացաք. Ի շրջել մերում ընդ քաղաքն՝ չէր ընդ մեզ այրն որ առաջնորդէր մեզ. Ի լինել մերում ի ներքս՝

պահապանք կային առաջի դրանն. Ի խօսել նորա այսպէս սաստիւ՝ պատգամաւորն զարմացեալ հայէր ի նա. Նորա վաղվաղակի յառաջ մատուցեալ՝ ձգէ զձեռն իւր առ իս. Ի ջանալ մերում հեռանալ անտի՝ հողմ ուժգին մղեաց զնաւ մեր ի նաւահանգիստ անդր. Ցասել նորա զբանս զայսոսիկ՝ բացան աչք մեր յանկարծ. Հրաման տամ ձեզ մեկնել աստի. Ետու նմա խորհուրդ չկալ անդէն. Ընտրէին մանաւանդ մեռանել քան մտանել ի քաղաքն. Ըղձանայք առաւօտուն կամ այգուն լինելոյ. Ասէին որոտումն լինել. Ոչ կամին բնակել նմա ընդ նոսա. Ասա ցեղբայր քո հատուցանել զպարտս իւր. Էր մէգ թանձր մինչեւ ոչ տեսանել զմիմեանս. Հեռացան յոյժ մինչեւ ըստ ակն անկանել նոցա. Շարժումն մեծ եղեւ ի ծովուն մինչեւ ծածկել նաւին յալեաց. Գան հարին զնա անխնայ մինչև չմնալոյ ի նմա շունչ. Բազումք գային առ նոսա մինչեւ ոչ ժամանել նոցա ուտել հաց. Հիւանդացեալ կոչեաց բժիշկ. Ցանձն արարեալ զմեզ առնն՝ մեկնեցաւ. Առեալ նորա կերակուր, զօրացեալ կազդուրեցաւ. Տեսեալ զի ոչ կարեն նուաճել զնա, խորհեցան ունել զնա նենգաւ. Ի կռուել նոցա ընդ միմեանս, այլ ոք առ զձին և գնաց. Հատն մանանխոյ աճեցեալ լինի ծառ, մինչեւ գալ թռչնոց երկնից և հանգչել յոստս նորա:

## 51. Հրահանգ.

Ազնուական, բարոյական, եկեղեցական, երկնական, իգական, լեռնական, խժական, ծովական, կայսերական, հովուական, ձմերական, մարմնական, յաղթական, շինական, պատժական, սեպհական, տըրտմական, քրմական, օրինական:

---



Ատեան, արքունի, բնութիւն (բուն), ընտանի, լուսին, խորհուրդ, կոյս, կորուստ, յոյն, նուէր, շուն, պատիւ, պատմութիւն (պատում), սուրբ, վանք, տուն, քննութիւն (քնին):

---

Աստեղային կամ աստղային, անտառային, գաղանային, դաշտային, երկնային, լեռնային, ծովային, հողային, հրային, մաղձային, մարդկային, նաւային, ջրային, տղմային, տոհմային, տնկային, ցամաքային, քաղաքային, օդային:

## 52. Հրահանգ.

Ալեւոր, ահաւոր, աղեղնաւոր, բռնաւոր, գլխաւոր, գունաւոր, գոյաւոր, գօտեւոր, զինուոր կամ զինաւոր, զօրաւոր, թունաւոր, լուսաւոր, խորհրդաւոր, կամաւոր, հոգեւոր, հովանաւոր, մարմնաւոր, նշանաւոր, շահաւոր, չափաւոր, պատուաւոր, սուսերաւոր, վտանգաւոր, տոնաւոր, փառաւոր:

---

Գիր, դաշն, եղջիւր, թագ, թեւ, ճիգն, մանեակ, միտք, պարիսպ, պարտք, սուգ, վէր, տէգ:

---

Այգաւէտ, գինաւէտ, երանաւէտ, ընչաւէտ, խաշնաւէտ, խոտաւէտ, ծաղկաւէտ, մրգաւէտ, շահաւէտ, պտղաւէտ, քրքմաւէտ:

---

Ազգատ, ականջատ, գունատ, լեզուատ, ծայրատ, կառափնատ, ձեռնատ, միջատ, շրթնատ, ընչատ, պնչատ:

## 53. Հրահանգ.

Ապակեղէն, ասուեղէն, արծաթեղէն, բոցեղէն, գարեղէն, լուսեղէն, խոտեղէն, հողեղէն, հրեղէն, ձիւնեղէն, մազեղէն, մսեղէն, նիւթեղէն, ոգեղէն, ոսկեղէն, պղնձեղէն, ջրեղէն, վիմեղէն, տարրեղէն, փշեղէն, քարեղէն։

---

Ադամանդեայ, աղիւսեայ, ասեղնեայ, բեհեզեայ, գմբեթեայ, եղեգնեայ, ծաղկեայ, կաշեայ, կճեայ, ճախարակեայ, մագաղաթեայ, մաշկեայ, յախճապակեայ, ներդեայ, պրտուեայ, փղոսկրեայ, փշեայ։

---

Ահեղ, ասուեղ, գունեղ, զօրեղ, թիկնեղ, ընչեղ, համեղ, հիւթեղ, մազեղ, մարմնեղ, չքեղ, ուշեղ, ուժեղ։

---

Աղուէսենի, այծենի, առիւծենի, գայլենի, գառնենի, կզենի, ոչխարենի, սամուրենի։ Դեղձենի կամ դեղձի, ընկուզի, թթենի, թզենի, խնձորենի կամ խնձորի, ծիրան, կաղնի, ձիթենի, մրտենի, նշենի, նռնենի, վարդենի, տանձենի կամ տանձի, խոզենի։

---

Այրի, ասուի, արծաթի, բռնի, դալարի, երկաթի, լեզուանի, լրբենի, ծարաւի, կորովի, հայրենի, ճարի, մայրենի և մայրի, մսեղի, մօրուանի, յայտնի, նախնի, նմանի, նօթի, պիտանի, պղնձի, ջրի, վայրի կամ վայրենի։

---



Անասնիկ, գետակ, գնդակ, դռնակ, զգեստիկ, լեզուակ, լճակ, խղիկ, խցիկ, ծովակ, հայրիկ, հացիկ, ձկնիկ, ձորձիկ, մանկիկ, մասնիկ, նաւակ, շնիկ, որդեակ, պատանեակ, պատանեկիկ, վայրիկ, տնակ, քաղաքիկ։

## 54. Հրահանգ.

Արթուն, գնայուն, եռանդուն, երերուն, զգայուն, զեղուն, զեռուն, թռչուն, իմաստուն, կայուն, կանգուն, հասուն, հաստատուն, շարժուն, սահուն, սիրուն, սողուն, տոկուն, ցածուն, փայլուն։

---

Ապառաժուտ, աւազուտ, աւազակուտ, թաւուտ, ծարաւուտ, մացառուտ, յորձանուտ, շամբուտ, ոսկրուտ, ջղուտ, վիմուտ, տղմուտ, քարուտ, օձուտ։

---

Արիւնոտ, բորոտ, դանդաղկոտ, դեղոտ, եռանդնոտ, երկչոտ, ժանգոտ, լուսնոտ, խնամոտ, ծակոտ, կասկածոտ, հիւանդոտ, մոռացկոտ, մրոտ, յաչաղկոտ, նախանձոտ, նենգոտ, որքինոտ, վաղվաղկոտ, ցասկոտ, ցաւոտ, ցեխոտ, քոսոտ։

---

Այգորդ, անցորդ, յաջորդ, բաժանորդ, ժառանգորդ, լծորդ, ըղորդ, կցորդ, ճանապարհորդ, միջնորդ, յետնորդ, նախորդ, նախանձորդ, նաւորդ, որսորդ, պահանորդ, պարապորդ, սայլորդ, սեղանորդ, ցանցորդ, փոխանորդ։

---

Աղքատանոց, ամարանոց, ամրոց, այրենոց, արգելանոց, արուեստանոց, գլխանոց, գործանոց, դըպրոց, ծաղկոց, կանանոց, կրակարան, հալոց, հանգըստոց, հիւանդանոց, հիւրանոց, հովանոց, ձմերոց, մարտկոց, մեղուանոց, մթերանոց, միջինոց, որբանոց, ուսանոց, վաճառանոց, վարոց, վարդապետանոց, վարժոց, օտարանոց։

## 55· Հրահանգ.

Անամօթ, անառակ, անբան, անբարբառ, տգեղ, տգէտ, անգործ, անգին, դժգոհ, չգոյ, դժգոյն, ապերախտ, ապերասան, անլուր, տկար, չհամազգի, ապահարկ, տմարդի, անմարդի, անյայտ, անյոյս, ապաշնորհ, անշնորհ, ապուշ, անսուրբ, անտոհմ, ապատոհմ, անքուն, տքուն (տքնել), անօրէն։

## 56· Հրահանգ.

Ջորագլուխ, դռնափակ, գազանամարտ, գանձապետ, գետեզր կամ գետափն, ծովեզր կամ ծովափն, մատենադարան, դայեկորդի, դիւանապետ, դիւանադպիր, բանակետղ, եղեւնափայտ, աղբերակն. լուսամուտ, խաչափայտ, խնկաման, ծերակոյտ, հարսնեղբայր, հողաբլուր, հողակոյտ, ոտնակապ, ձիւնածաղիկ, ձորագաւառ, ճաշաժամ, մաղձադեղ, մարդամահ, մարդապատկեր, մաքսատուն, մեհենատեղի, մոխրակոյտ, նաւախումբ, նաւատորմիղ, քաղաքամէջ, սանդղոտն, վաներէց, վարազաջիղ, որթատունկ, քաղաքորմ։

---



## 57· Հրահանգ.

Մեծատուն. Մեծազօր. Մեծաձայն. Երկայնաբազուկ. Լայնաշուրթն. Կարճոտն Կարճահանդերձ. Կարճազգեստ. Խորաջուր. Բարձրավիզ. Բարձրապարանոց. Բարձրաձայն. Մարդաշատ. Բարեբարոյ. Լաւաբարոյ. Ժանտահոտ. Չարահոտ. Քաղցրահամ. Գեղեցկադէմ. Չքնաղագեղ. Արագոտն. Երկմիտ. Թանձրալեզու. Ծանրաբեռն. Թեթեւագնաց. Թերահաւատ. Թուլամորթ. Վատասիրտ. Լիաբերան. Խստապարանոց. Խօթասիրտ. Լաւախորհուրդ. Կարմրայտ. Կորագլուխ. Ոսկեթել. Կրկնապարիսպ. Հաւասարապատիւ. Զուգապատիւ. Հաստաբազուկ. Հաստամորթ. Հաստակաշի. Հըսկայազօր. Շատաջուր. Մաշկահանդերձ. Նեղասիրտ. Նորափետուր. Նրբաձայն. Ամրապարիսպ. Ողջանդամ. Պակասամիտ. Սակաւանիստ. Սրակն. Սրունկն. Վատանուն. Քաղցրաձայն. Քաջասիրտ. Ոսկեսանձ. Ունայնաձեռն. Թեթեւամիտ. Ուղղահաւատ. Չարակն. Թեթեւաբեռն. Մեծամեղ. Սակաւամեղ. Մեծանուն. Մեծամիտ. Բարձրահասակ. Երկայնականջ. Մաշկաթեւ. Թանձրամիտ. Խստասիրտ. Երկդիմի. Երկբերան. Լերկամորթ. Երկայնամիտ. Յորդաջուր. Թանձրամարմին. Խոնարհամիտ. Ծանրալեզու. Խորաջուր։

## 58· Հրահանգ.

Ածու, աղաց, ամաց, ամոք, այրեաց, ապաստան, ապուր, առաք, առու, ասաց, ատեաց, արած, արգել, արկու։

Քնածու, պատճածու. Խնկաղաց, մլաղաց. Ծովամաց. Խահամոք. Անձկայրեաց. Կիսայրեաց. Ցանձնապաստան. Անձնապուր. Երկնառաք. Փոխ–, աւանդ–,

կաշառ–, պարգև–, համար–, վրէժ–, երախտառու. Բարեասաց, չարասաց. Տիրատեաց, ընչատեաց. Խաշնարած. Բանտ–, որմ–, վիմարգել. Ահ–, խնկարկու։

---

Բարձ, բերձ, բեկ, բեր, բուղխ, բնակ, բուտ, գէտ, գնաց, գին, գով, գործ, գիւտ, գիր։

Բեռնա–, կականաբարձ. Երկնաբերձ. Ահա, ծանրա, գազանաբեկ. Պաղա, միգա, փշա. անձրեւա, բքաբեր. Երկրա, հրա, ջրաբուղխ. Գազանա, անտառաբնակ. Խոտա, ընդաբուտ. Ծածկա, իրա, սրտա, ձեռագէտ. Ուղե, ծովա, նաւագնաց. Արծաթա, մարգագին. Անձնագով. Այգե, երկրա, հողա, նաւա, հացա, իւղա, պղնձա, չարա, բարե, ժանտա, զազրա, եղեռնա, ոճրա, մաղա, ձեռագործ. Հնարագիւտ. Մատենա, պատմա, ձեռագիր։

## 59. Հրահանգ.

Դարման, դաւ, դիաց, դրուժ, Եփեաց, եփ. Զանց, զարդ, զգած, զգեաց, զգեստ. Ընկէց, ընտիր. Թափ, իմաց։

Խաշնադարման. Մարդադաւ. Ստնդիաց. Ուխտա, տիրադրուժ. Իւղ, հացեփեաց. Երդմնա, ուխտա, պատուիրանա, օրինազանց. Աստեղա, ծաղկազարդ. Սեւա, մթա, քրձազգած. Իրազգաց. Խարազնա, ծիրանազգեստ. Տերեւ, նետ, շանթ, քար, հր, զէն, լծ, գետընկէց. Իրաւընտիր. Տերեւա, մարդա, ուշա, ոխա, Նետաթափ, Հնար, չարիմաց։

---

Լլուկ, լից. Խանձ, խառն, խար, խիլ, խնդիր, խողխող, խորհ, խոհ, խօս. Ծախ, ծեծ, ծին, ծուփ։



Սովալլուկ. Ծաղկա, հացա, պտղա, որդնա, խընդա, գանալից. Արիւնա, գիշախանձ. Ծծմբա, ծխախառն. Եղեմնախար. Արմատախիլ. Վրէժ, քինա, նախանձախնդիր. Սրախողխող. Մտա, իրաւախոհ. Բարե, չարա, առակա, որովայնա, ատենա, հնախօս. Մարդածախ. Բրա, ողորածեծ. Անձրեւա, երկրա, ծովա, ջրա, հողածին. Ծովածուփ։

## 60. Հրահանգ.

Կամ, կապ, կապուտ, կատար, կար, կեաց, կերտ, կէզ, կուլ, կիծ, կոխ, կոծ, կոր, կորոյս, կոփ, կուռ, կռիւ, կտուր, կիր, կուրծ։

Բարե, չարակամ. Կամարա, ականակապ. Դիա, տաճարա, սեղանակապուտ. Կամա, հրամանակատար. Կօչկա, խորանա, կամակար. Լեռնա, շինա, վշտակեաց. Կաւա, փայտա, քարա, կրկտա, հրաշա, ձեռա, նկարակերտ. Տօթա, ցրտակէզ. Ծովակուլ. Ջերմակիծ. Ոտնակոխ. Ալէ, հողմակոծ. Ակնկոր. Պտղա, յուսակորոյս. Քարակոփ. Կռանա, քարակուռ. Բանակռիւ. Ծայրա, կիսա, միջա, մօտա, քարակտուր. Բեռնա, ջր, վշտակիր. Կաշառակուրծ։

---

Ամբեր. Հայեաց, հան, հանու, հաս, հատ, հատոյց, հար, հեղձ, հեղ, հոս, հոտ. Ձիգ, ձոյլ. Ճարակ։

Խստ, վշտամբեր. Ծովա, երկնահայեաց. Ձկնա, ջրա, մսա, պատկերահան. Խաչահանու. Հարկա, քինա, երազահան. Ձեռնհաս. Քարա, երկաթա, փայտա, յուսա, քնա, թաթա, երակա, մսահատ. Վարձա, երախտա, քինահատոյց. Սրնգա, քնարա, փողա, դիւա, նետա, շանթա, սուսերա, ցրտա, խոր-

չակաճար· Ծովահեղձ· Արիւնահեղ· Հրա, ջրհոս· ժանտոտ, չարահոտ· Նետա, քարա, ակօսաձիգ· Արծաթա, ոսկե, պղնձաձոյլ· Խոտաճարակ։

## 61· Հրահանգ·

Մած, մահ, ման, մեծար, մուխ, մռաց, մուտ· Յարդար, յուշ, յոյզ, յօդ· Նենգ, ներկ, նիւթ· Տախտակամած· Սրա, սովա, թոպա, խեղդա, հեղձամահ· Ոսկեման· Հիւրամեծար· Խորա, միջա, ձեռնամուխ· Երախտամռաց· Ողջա, ծակա, խորա, միջամուտ· Տաճարա, սեղանայարդար· Զարայուշ· Խորա, ջրա· խռովա, անձրեւա, նախանձայոյզ· Ստայօդ· Ուխտա, տիրանենգ· Ծիրանաներկ· Զարանիւթ։

---

Շարժ, չէն, չունչ· Կեր· Ուրաց· Զափ, չու· Պահ, պաշտ, պատ, պատճառ, պատում, պարար, պարտ, պիշ։

Հողմաշարժ· Որմնա, խորանա, տնա, աշխարհա, մարդաչէն· Ծխա, բոցա, հրա, մահա, աստուածա, հոգեշունչ· Խոտա, ցեցակեր· Աստուածուրաց· Երկրաչափ· Երկնաչու· Ոգե, ուխտա, պատուիրանա, ոխապահ· Աստուածա, կռա, դիցապաշտ· Արծաթա, սռնա, մթապատ· Խօթապատճառ· Ստա, դիւրա, դժուարապատում· Որովայնապարար· Մահա, պատժա, դատապարտ· Երկնա, մարմնա, երկրապիշ։

---

Սէր, սուն, սոյզ, սպան· Վաճառ, վար, վարժ, վէժ, վիրայ· Տարած, տես· Ցնոր, ցոյց· Փոր· Քաղ, քաղց, քարշ, քնին· Օծ։

Հայրենասէր· Ջրա, կաթնա, տնա, ձեռնա, հօվասուն· Ջրա, խորասոյզ· Տիրա, եղբայրասպան·



Գինե, ցորենա, մարդա, ժամավաճառ· Կառա, նաւա, գերե, մարդավար Ձիա, մանկա, մտավարժ· Գահա, քարա, գետավէժ· Վարսա, ռահվիրայ· Բազկա, գետնատարած· Երազատես· Խելացնոր· Ուղե, երազա, ժամա, տօնացոյց· Գետնա, վիմափոր· Ծաղկա, պտղա, հասկա, կրկտա, ծայրաքաղ· Ընչաքաղց· Գետնաքարշ· Խորաքնին· Ոսկե, արծաթազօծ։

## 62· Հրահանգ·

Ամբարձ, ասաց, աւեր· Բերձ, բեկ, բուղխ, բոյս· Գան, գէտ, գուշակ, գիւտ· Դատ, դէմ· Եփ· Արթուն· Ձէն· Ընծայ, ընթաց· Թռիչ· Լլուկ· Խամուր, խօս· Ծագ, ծաւալ· Կազմ, կայ, կաց, կացու, կարգ, կեաց, կէզ, կշիռ, կորով· Հայեաց, հաս, հաւան, հաւատ, հեղոյս, հիմն· Մահ, մաղ, մարտ, մեռ, մուտ· Յած, յարոյց· Նուագ· Շարժ, չունչ· Պահ, պարծ· Ջան, ջինջ· Սուն, ստեղծ· Վէր· Տարած· Ցասումն, ցնոր· Փուլ, փուտ։

Վերամբարձ Կանխասաց· Վաղաւեր· Վաղափուլ· Վաղափուտ· Ուղղաբերձ· Դիւրաբեկ· Յանկարծա, առատա, յորդաբուխ· Դիւրա, ինքնաբոյս· Զարահան· Կանխագէտ· Կանխագուշակ· Զքնաղա, դիւրա, դըժուարա, յանկարծա, յառաջագիւտ· Արդարա, ուղղադատ· Յառաջա, տարադէմ· Կիսեփ· Ծանրարթուն· Սպառազէն· Նորընծայ· Արագ, թեթեւ, խուռն, զուգընթաց· Բարձրաթռիչ Զարալլուկ· Արագախամուր· Ունայնա, արդարա, ուղղախօս· Յանկարծածագ· Լայնածաւալ· Պնդակազմ· Առընթերակաց, շրջակայ, առաջակայ, ինքնակաց, վերակացու· Յառաջակարգ· Երկայնա, միայնակեաց· Ողջակէզ· Արդարակշիռ· Արդարակորով· Քաղցրա, յառաջահայեաց· Երագա, վաղահաս· Դիւրահաւան· Թերա, ուղղա, նորահաւատ·

Հաստահեղոյս · Հաստահիմն · Խայտառակամահ · Մանրամաղ · Հակառակ, ընդդիմամարտ · Կիսա, վաղամեռ · Կանխամուտ · Ընդվայրայած · Վաղայարոյց · Քաղցրանուագ · Ծանրա, արագա, մշտաշարժ · Դառնա, քաղցրա, սաստկաշունչ · Գիշերապահ · Ունայնա, անապարծ · Ջրա, ժրաջան · Համաջինջ · Դատարկա, ընդա, ընդվայրա, ընդարձակա, փափկասուն · Նախա, նորաստեղծ · Կարեվէր · Լայնա, համատարած · Ծանրացասումն · Ցայգացնոր · Վաղափուլ · Վաղափուտ :

## 1· Հրահանգ ·

Նոր է տունն · Հին էր եկեղեցին · Թեթեւ է փայտ քան զերկաթ · Բարկ է քացախ · Կծու է աղ, այլ պահէ ի նեխութենէ · Ազնուագոյն է ոսկի քան զամենայն մետաղս · Պատուական է յոյժ ադամանդ, այլ չէ ինչ օգտակար և պիտանի քան զերկաթ · Անօսր է կտաւ քան զկերպաս · Անապակ է գինին · Ջրարբի է հովիտդ, և վասն այնորիկ յուռթի է · Ծանր են անձրև և կարկուտ · Թեթև է հոգի · Գնայուն և շարժուն են մարդիկ և անասունք · Զգայուն, իմաստուն և խօսուն է մարդ · Ջերմ է ձի · Երկչոտ է եղբայր քո · Խիստ ես դու · Վկայ են նոքա · Ականատես եմք մեք · Ականջալուր են նոքա · Եղբայր ձեր գործէ ի տան · Մանկունքս այսոքիկ պատառեցին զհանդերձս իւրեանց · Ընկղմեցին զնաւն ի ծով անդր · Ծովակուր եղեն արքն · Գետամոյն եղև կառավարն · Անկաւ ի բերդն :



## 2· Հրահանգ ·

Բարեկամ իմ ետես զհայր ձեր · Զինուորքն կոչեցին զզօրավար իւրեանց · Կին մի էր ի քաղաքի անդ · Կինս այս ոչ սիրէ զդուստր իւր · Հայրս այս անիծանէ զորդիս իւր · Աստեղք են յերկինս · Օձք գոն ի ջրհորս · Են վիշապք ի լերինս · Կէտք մեծամեծք են ի ծովու · Լերինք բարձունք են ի վերայ երկրի · Անտառք մեծամեծք են ի լերինս · Ի քաղաքի անդ է գերեզման նորա · Բարեկամք մեր են ի տան աստ · Ի գերեզմանի աստ են ոսկերք նոցա · Յապարանս անդ են սպասաւորքն · Հիւրք են ի սրահին · Ժանտահոտութիւն է ի սենեկիս · Գոյ հուր ի կրակարանի աստ · Ցորեան բազում է ի շտեմարանի ձերում · Վարժ է կառավարն · Հմուտ և փորձ է վարդապետն · Կիրթ են աշակերտքն · Արագընթաց են եղջերու և նապաստակ · Խակ է մանուկն · Հասուն է պատանին · Ձկունք են ի ծովու · Բիծք գոն յարեգական · Մարդիկ բազում են յաշխարհի · Էր անդ ամբոխ բազում · Կապեալք բազումք էին ի բանտի անդ · Կամիմ տեսանել զեղբայր քո · Նիստ ի տան քում · Մեր է տունս · Սիրելիք մեր էք դուք · Բարեկամք մեր են եղբարք ձեր :

## 3· Հրահանգ ·

Ծանօթք մեր են ծառայք նոցա · Վարդապետ իմ է այրն · Խրատեցի զնա յոյժ · Գրեցէք զբանս զայսոսիկ ի մատեանս ձեր · Փակեցին զդուռնն · Պատժեցաք զոմանս ի նոցանէ · Ոչ ոք կարէ անցանել ընդ այս · Ամենեքին բնակեն աստ · Եղբայր էք դուք կնոջ մեծատան · Իջանէին ի լեռնէ անտի · Ոչ ետես զերեսս մեր · Հանէք զմանուկդ արտաքս · Գեղեցիկ է յոյժ գիւղ ձեր · Աշխատութեամբ մեծաւ արարաք զպարտէզս · Յոյժ աշխատ

արարի զձեզ· Ներեսջիր ինձ· Պատգամաւորք պատմեցին նոցա զբանս իմ· Հան նոցա ի վէր զբանն· Ես հանգուցից զձեզ· Չէր անդ հայր նոցա· Բարեկամ մեր են ընկերք նոցա· Ի փողոցի անդ են քարինքն· Ի հրապարակի անդ են զինուորքն· Ի նաւահանգստի անդ են նաւքն· Ի նաւի անդ են նաւաստիքն· Ի քրձի անդ էին ամանք նոցա· Արծաթ նորա ի ծոցի իւրում է· Ի ձեռին նորա է սուր մեր· Ոմանք ի նոցանէ են ի նաւի անդ· Այլք ի բարեկամաց ձերոց են ի քաղաքի անդ· Ամենեքին են ի սրահի աստ· Ի շտեմարանի անդ է ցորեան մեր· Իւրաքանչիւր ոք ի տան իւրում է· Չիք ոք ի տան· Բազումք ի ձէնջ աղքատք են· Սակաւք ի նոցանէ են աստ· Հինգն ի նոցանէ իմաստունք են· Մին ի ձէնջ սատանայ է· Անդ էր մի ոմն ի բարեկամաց ձերոց· Մի ոմն ի մէնջ չէր անդ· Ոչ ոք էր անդ ի մէնջ· Եղբայր մի է իմ· Որդի մի է նորա· Պարտէզ մի է եղբօր իմոյ· Բարեկամք բազումք են ձեր· Եղբարք եօթն են մեր· Էր նորա պարտէզ մի գեղեցիկ· Մատեանք բազումք են ձեր· Արծաթ բազում է հօր իմոյ· Եղեն նորա առջառք և ոչխարք բազումք· Ջրհոր մի էր Իսահակայ· Է իմ որդի մի· Տուն մի մեծ է նորա· Քաղաք մի փոքր է իմ· Են մեր տունք մեծամեծք· Ունին ըստացուածս բազումս· Լուարուք զբանս իմ· Իջանէր ի լեռնէ անտի· Բնակեցաւ ի քաղաքի աստ· Երթիցուք ի տուն անդր· Ի պարտիզի անդ էր գերեզման նոր· Ծառն կենաց էր ի մէջ դրախտին· Եկեաց ամս տասն· Սպասեցաք ձեզ ժամս ութ· Նոքա յաշխարհէ աստի են· Դուք չէք յաշխարհէ աստի· Իբրեւ լուան զայս ի Թագաւորէն· Լուաւ զձայն գնալոյ նորա· Մուծէք զայրդ ի տուն այսր· Տարան զնա յերկիր օտար· Կերայք ի հացէ անտի· Արբաք ի ջրոյ անտի։

---



## 4· Հրահանգ·

Տեսեալ զեղբայր ձեր՝ ասացի ցնա· Լուեալ զձայն նորա կոչեցի զնա· Առեալ զգոյժ մահուան նորա սկսաւ լալ· Տարան զնա մղոնս երկուս· Ետուն նորա ցորեան քոռս հինգ· Բարձրացուցին զորմն կանգունս երկուս· Առ զզէնս զինուորացն· Քակեցին զյարկ տանն· Անդ էին եղբարք նորա· Սպան զդուստր ծառայի իւրոյ· Բացին զդրունս սենեկին· Ցելաւ վարագոյր տաճարին· Լուայ զձայն եղբօր իմոյ· Քո են ամենայն ինչք մեր· Իմ է աշտանակդ· Գեղեցիկ է պարտէզն· Լի են ամանք նոցա· Բարձր են տունք մեր· Հանի զնա ի գլուխ լերինն· Ունէր գինի բազում ի մարանի իւրում· Ջամս ութ աշխատ եղէ ուսանել զայս· Երկայնութիւն դաշտին էր մղոնս երկոտասան· Էին առիւծք ի գբի անդ· Հզօր է Թագաւորն· Բանսարկու է այրն· Ի խօսել իւրում ասէր· Տեղայր ոսկի ի փեսայութեան Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան· Քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ համբարքն չեն· Ո՞ւր իցեն մատեանք իմ· Ո՞ւր եդիք զնոսա։

## 5· Հրահանգ·

Ետու զնոսա եղբօր ձերում· Ո՞ յօրինեաց զմատեանսդ· Առն ուրումն գիտնոյ յօրինեալ է զնոսա· Առէք այսր ջուր սափորս հինգ· Բազում ինչ ունիմ ասել ձեզ· Են իմ որդիք երկու· Դստերք չորք էին նորա· Էր նոցա մեծութիւն բազում· Չիք իմ զօրութիւն համբերելոյ· Մտեալ ի ներքս բազմեցաւ· Առեալ զնա ի գիրկս իւր՝ օրհնեաց· Գնացաք զճանապարհ երկուց աւուրց· Երթայաք զտիւ և զգիշեր· Առեալ տարայք զարոդ ի տունս իւրեանց· Անցեալ բարեկամաց նորա ընդ դուռնս ընդ այս՝ եկին առ մեզ· Լուեալ զպատ-

մութիւնս զայս՝ զարմանայր․ Ետուն մեզ համբաւ ծառայք ձեր յառաջ քան զաւուրս երկուս․ Բարեկամք մեր են ընկերք նոցա․ Որդի իմ ես դու․ Բարեկամք ձեր եմք մեք․ Եղբարք մեր պատմեցին զձէնջ․ Եկաք առ ձեզ նոքօք հանդերձ․ Չոքան նոքա ընդ եղբօր ձերում ի տուն մեր․ Զաւուրս երիս ճանապարհորդեալ հասաք անդր․ Առ սէր ձեր յանձն առնում զաշխատութիւնս զայս․ Զցայգ և զցերեկ աշխատէաք վասն ձեր։

## 6․ Հրահանգ․

Տուր ինձ հրաման երթալ տեսանել զհայր իմ․ Պատուէր տուր նմա չնեղել զիս․ Առ ահի նորա լռեցաք․ Ճանաչեմ զորդի առնն այնորիկ, այլ զձեզ ոչ ճանաչեմ․ Մուծէք զնոսա ի խորան անդր․ Ընդէ՞ր կայք զօրն ողջոյն դատարկ․ Զիա՞րդ մտէք այսր, պատմեցէք մեզ․ Ոչ ոք կարէ անցանել ընդ այս ճանապարհ․ Որդի է նա առն բարւոյ․ Դուստր էր սա կնոջ մեծատան․ Ծառայք եմք արքայից արքայի․ Տարայք զգերիսդ ի դղեակն, մի ածէք զնոսա ի քաղաքս․ Զամս չորս բնակեցաւ առ եղբօր իւրում, և ոչ ետես զերեսս մեր․ Տարագիր եղև ի հայրենեաց իւրոց․ Եկի ի գիւղ ձեր, գեղեցիկ է նա յոյժ․ Զանձրացեալ յերկայնութենէ բանիցն՝ նիրհեաց․ Ի բանից անտի նորա գիտացի եթէ եղբայր նորա ես․ Դիմէր բազմութիւնն յեկեղեցին․ Տեսին զնա ի տաճարի անդ ընդ բարեկամս իւր․ Մեծ է երկիր․ Խոր է ծով․ Բարձր են երկինք․ Լուսնի չիք լոյս առանձինն․ Զամս վաթսուն եկեաց նա, և թագաւորեաց զաւուրս քառասուն․ Մտէք ի տուն իմ․ Նստէր ընդ հովանեաւ կնձնւոյն․ Ընդ ձեռամբ իմով է․ Ունիք բազումս ընդ իշխանութեամբ ձերով․ Որդիք



երկու են եղբօր իմոյ․ Էին նորա սպասաւորք տասն․ Է նոցա արծաթ բազում․ Չիք իմ արծաթ, այլ զոր ունիմն տաց։

## 7․ Հրահանգ․

Եկն Մարիամ ի գերեզման անդր․ Երթայք, ասացէք ցբարեկամս ձեր զի երթիցեն ի հրապարակ անդր․ Ժողովեցան նոքա անդր, և սպասէին գալստեան նորա․ Դարձոյց զարծաթն ի սեղանաւոր անդր․ Առեալ նորա զարծաթն՝ ասէ․ Առեալ ջուր լուաց զձեռս իւր․ Եկին ի տեղին որ աւերակն կոչէր․ Որդի իմ ես դու սիրելի․ Հայր քո եմ ես․ Անդ էր թագաւորն ի տօնին․ Ի հարսանիս անդ էին աշակերտքն․ Եղև խաւար զինն ժամու․ Գնացաք մղոնս ութ․ Էր սով զայնու ժամանակաւ․ Զհասարակ գիշերաւ յարձակեցան ի վերայ նոցա․ Յարուցեալ գիշերայն երթային․ Բերին իւղ լտերս հարիւր․ Կարեմ քակել զտաճարս, և զերիս աւուրս շինել զնա․ Գամք յերկրէ անտի․ Եկին ի քաղաքս․ Աղքատ ոմն էր ի քաղաքին․ Տեսեալ զնա կոչեաց, և նստոյց առ իւր․ Կալեալ զմեզ ըկէր․ Բացեալ զպատուհանն հայէր․ Արձակեաց զնա ի բանտէն․ Եդ զնոսա ի դիպահոջ․ Մուծին զեղբարս ձեր յեկեղեցի անդր․ Քարոզէր յեկեղեցւոջ անդ։

## 8․ Հրահանգ․

Կապեալք բազումք էին ի բանտին․ Ընկէց զնա ի ջուրն․ Լուեալ զձայն նորա ուրախ լինէր․ Յակոբ զամս ինն ծառայեաց Լաբանու վասն Ռաքելայ․ Չոքաք ժամս չորս հետի․ Եղև սով զամս եօթն․ Զամս քառասուն շինեցաւ տաճարն Երուսաղեմի․ Ետ ինձ արծաթ քանքարս հինգ․ Բերին ջուր սափորս եօթն․ Քաղեցաք ծաղիկս փունջս տասն․ Մեր է տունս այս․ Սիրելիք մեր

էք դուք․ Զաւուրս եօթն աշխատ լեալ՝ հանին զնա արտաքս․ Յետ գնալոյ մղոնս ութ՝ հասաք ի քաղաք մի մեծ․ Ի մտանել մեր ի ներքս ընդ դուռն քաղաքին՝ տեսաք արս հինգ․ Չիք մեր ընթերցեալ զգիրն․ Է իմ քաղաք մի փոքր․ Եկ և բնակեաց անդ․ Հեղեղք բազումք իջանեն ի լեռնէ աստի․ Անցեալ ընդ պատուհանն՝ եմուտ ի ներքս․ Եկին տեսանել զմեզ, ինքն և որդիք նորա․ Եթէ իմ չէր եկեալ․ Փորձեցի զձեզ զաւուրս բազումս․ Պատմեցաք ձեզ զգործս մեր, այլ դուք ոչ հաւատացէք մեզ․ Որդի էր նա առն մեծատան։

9․ Հրահանգ․

Տարան զնա առ թագաւորն․ Եկաց առ եղբօր իւրում զաւուրս բազումս․ Մատնեաց զնոսա դահճաց․ Ճաշեցին ընդ վրանաւ նորա․ Չոգաք զճանապարհ երկուց աւուրց․ Լուարուք զբանս իմ․ Ուստերք նորա և դստերք եկին առ մեզ․ Յետ սակաւ միոյ տեսի զնոսա․ Աղաչանք մեր չեղեն նոցա ընդունելի․ Պարտ է թագուցանել զխորհուրդս թագաւորի․ Պատմեցից ձեզ զոր արարն Աստուած․ Հաւատամ յԱստուած և ի զօրութիւն նորա․ Այն ինչ եդեալ էր նորա զոտս ի ցամաքի․ Արարեալ է Աստուծոյ զաշխարհս․ Մի հոգայք վասն վաղուին․ Պատմեցին մեզ զնոցանէ․ Խնդրէին ինչ զի չարախօսեսցեն զնմանէ․ Հանին զնա արտաքոյ քաղաքին․ Ածին զնոսա յատեան․ Բազումք ելին ի քաղաքէ աստի․ Տարայք զմանկտիդ ի տուն անդր․ Բնակէր ի քաղաքի անդ․ Լուարուք բանից արանց իմաստնոց․ Արքս այսոքիկ զինուորք են թագաւորի քաջի․ Լցէք զտեղիս արամբք չարագործօք․ Ելեալ արտաքս խնդրեցէք զնոսա․ Ժողովեցին զցորեանն յամանս իւրեանց․ Տեսեալ զամբոխն նստաւ․ Յելանել նորա արտաքս ամբոխն մտանէր ի ներքս․ Մուծէք զնոսա յեկեղեցի այդր։



10․ Հրահանգ․

Օդ է շուրջ զերկրաւ․ Խռնեցաւ ժողովուրդն զնովաւ․ Շինեցին պատնէշս շուրջ զքաղաքաւն․ Ասացից ձեզ ինչ զնմանէ․ Ամբաստան լինին զեղբօրէ ձերմէ․ Բարեկամք ձեր տրտնջեն զինէն․ Զինուորքն մտին ընդ դուռն պարտիզին․ Սփռեցաւ ամբոխն ընդ երեսս դաշտին․ Ժամս տասն կացին անսուաղ․ Յետ գնալոյ մղոնս երկոտասան հասաք ի քաղաքն․ Տեսեալ զմեզ սկսան փախչել․ Փախուցեալ անկան ի բերդն․ Առեալ զնա մեկուսի խօսէր ընդ նմա․ Ոչ գիտէի թէ զինչ իցէ․ Ոչ կարացին իմանալ զբանս մեր․ Թողեալ զմեզ գնացին ի տունս իւրեանց․ Երկոտասան եղբարք եմք․ Ծառայք Աստուծոյ են արքդ․ Են իմ եղբարք բազումք․ Տունք երկու են ձեր․ Են նորա ծառայք քսան․ Են մեր մատեանք․ Մի մտանէք ի տուն անդր․ Ծնաք ի քաղաքի աստ․ Հեռի է ի տեղւոջէ աստի․ Մուծէք զնոսա ընդ տաճարս․ Երթիցուք առ բարեկամ իմ։

11․ Հրահանգ․

Եմուտ ի տուն եղբօր իւրոյ․ Բարեկամք նորա եկին առ նա․ Ի գրել նորա զթուղթն կոչեցին զնա ծառայք նորա․ Նստեալ յաթոռ դատէր զժողովուրդն․ Իբրեւ բժշկեաց զհիւանդն, առաքեաց զնա ի տուն իւր․ Ասեն ցնա բարեկամք նորա․ Կամի՞ք գալ ընդ մեզ․ Կացեալ անդ զաւուրս բազումս սպասէաք գալստեան նորա․ Էր նա ի բանտին, և աղաչէր զեղբարսն ազատել զնա․ Յետ հանելոյ զնա ի լեառնն՝ պատմեցին նմա զեղեալսն․ Առաքեցի առ քեզ զայրն տալ ձեզ համբաւ զինէն․ Եթէ սիրէք զարդ, մի չարչարէք զնոսա․ Իբրեւ տարան զնա մղոնս երկուս, վաստակեցան յոյժ․ Անցեալ ընդ պատուհանն եմուտ ի ներքս տեսանել

զնա · Տարածեցաւ համբաւ նորա ընդ ամենայն երկիրն · Յետ գնալոյ ընդ նոսա զաւուրս երկուս հասաք ի գիւղ մի · Կացեալ առաջի տաճարին խօսէի ընդ եղբօր ձերում · Բարեկամք ձեր են որդիք իմ · Չեմ ես օտար ։

## 12· Հրահանգ ·

Տեսեալ է իմ զնոսա · Ընթերցեալ է ձեր զգիրսն · Արարեալ է Աստուծոյ զաշխարհս · Եթէ եկեալ էր նոցա այսր · Լուեալ է քո զինէն · Ընկալեալ է մեր թուղթս երկուս ի նոցանէ · Չիք իմ տեսեալ զայրն · Չիք նորա ասացեալ այսպիսի ինչ · Չիք մեր սպանեալ զոք · Եթէ չէր նորա եկեալ · Ելեալ ի քաղաքէ անտի եկն առ մեզ · Եղբայր քո և քոյր եկին առ մեզ · Եկայք ի հարսանիս իմ · Առաքեաց մշակս յայգի իւր · Ուսուցանէր զնոսա զաւուրս երկոտասան · Նոյ և որդիք նորա մտին ի տապանն · Կարող է զհոգի և զմարմին կորուսանել ի գեհենի · Սպանին զծերս և զերիտասարդս · Եղեն նորա ուստերք և դստերք · Որդիք մեր են նոքա · Իմ են մանկունքս · Իբրեւ տեսին զնա , ժողովեցան առ նմա · Հաւ ժողովէ զձագս իւր ընդ թեւովք իւրովք · Մտին նոքա ի սրահ քահանայապետին · Բազումք իբրեւ լուան , հաւատացին նմա · Ած այսր զորդի քո · Ոչ ոք էր անդ · Ոչինչ լուաք · Հեռացան ի տեղւոջէ անտի · Մատեաւ առ մեզ · Եղբարքն Յովսեփու իջին յԵգիպտոս գնել ցորեան · Տեսեալ Յովսեփայ զեղբարս իւր՝ ծանեաւ զնոսա · Եղեւ առատութիւն յԵգիպտոս զամս եօթն · Որդի նորա երէց սպանաւ · Կրտսերն ասէ ցհայր իւր · Չեմ արժանի լինել որդի քո ։

---



## 13· Հրահանգ ·

Եղբարք իմ երկնչին ի քէն · Ո՞չ երկնչիս դու յԱստուծոյ · Աղաչէին զնա երթալ ընդ նոսա · Արասցուք երիս տաղաւարս · Հատեալ զգլուխ նորա բերին առ թագաւորն · Իբրև ետես թագաւորն , զարմացաւ յոյժ · Ոչ անսայր բանից նորա · Յակոբ թաղեցաւ ի գերեզմանի հարց իւրոց · Լսելոց էք համբաւս պատերազմի · Առանձնացեալ յանկեան ուրեք՝ նստէր · Օգնական իմ է Տէր · Ունիմ զինուորս ընդ ձեռամբ իմով · Տառապեցայ աւուրս բազումս · Չիք մեր երկիւղ ի նոցանէ · Վարժեցաւ նա յամենայն ուսմունս Յունաց · Արծաթ բազում պիտոյ է մեզ · Եկին ընդ մեզ յապարանս նորա · Աղաչէին զնա երթալ ի սահմանաց իւրեանց · Չիք մեր ուսեալ զգիրս · Չիք իմ տեսեալ զայն · Եթէ իմ չէր ասացեալ զբանս զայսոսիկ · Հեռացաւ ի նոցանէ քարընկէց մի · Զաւուրս քառասուն ոչ եկեր և ոչ արբ · Զամս տասն անկեալ դնէր յանկողնի կամ ի մահիճս · Անկան ի բերդն · Ելեալ յերկինս նստաւ ընդ աջմէ Աստուծոյ · Ետ նմա դահեկանս տասն · Որդի հնազանդ ուրախ առնէ զհայր իւր · Խրատէր զնա անսալ բանից իւրոց · Ցրուեցաւ ամբոխն ընդ դաշտն · Անցաք ընդ լերինս և ընդ ձորս ։

## 14. Հրահանգ ·

Եկաց ի բանտին աւուրս եօթն · Ոգիք իբրեւ ութ ապրեցան ի ջրհեղեղէն · Ապրեցո զիս , Տէր , ի մահուանէ · Ծանեան զնա արք տեղւոյն · Եմուտ ի բնակութիւնս ազգաց վայրենեաց · Երթայր առ գետոյն · Առ սէր քո արարի զայս · Ետ սպանանել զնա առ ատելութեան · Հիւանդացաւ առ տրտմութեանն · Զբարեկամս իւրեանց կամին մատնել ի ձեռս թշնամեաց ·

Ոմանք ի նոցանէ եկին առ մեզ․ Բազումք խնդասցեն ի ծննդեան նորա․ Ի մտանել նորա ի ներքս՝ ամենեքին յոտն կացին․ Անկեալ առ ոտս նորա աղաչէր․ Ի հասանել նորա ի քաղաքն՝ բարեկամք նորա ելին ընդառաջ նորա․ Իբրեւ զայս ասաց, լռեցին ամենեքեան․ Օգնեա մեզ զի կորնչիմք ահաւասիկ․ Ամենայն ինչ քո է․ Այս ամենայն իմ է․ Երկինք աթոռ իմ են․ Որդիք իմ էք դուք․ Բարեկամք բազումք են մեր․ Առ խնդութեանն երթեալ վաճառեաց զամենայն ինչս իւր․ Դու ես զօրութիւն իմ․ Պարծանք մեր էք դուք․ Աստ են եղբարք իմ և քորք․ Մի գործեսցեն ծառայք քո և աղախնայք, և մի անասուն քո․ Տեսցեն զգործս ձեր բարիս․ Խօսեցաւ բանս քաղցունս․ Որդի էր կնոջ բարեբարոյի․ Հանդիպեցաք առն անզգամի և լեզուանւոյ․ Մի ուտեր հաց ընդ արս նենգաւորս․ Ուրախ լեր ընդ բարեկամս քո․ Ձկնորսքն ձգէին զուռկանն․ Բազում ինչ պատմեն զմէնջ․ Իմ չէր երբէք երթեալ ի տուն նորա, այլ նա գայր յաճախ ի տուն իմ․ Անցեալ զօրուն ըստ գետն՝ առ զքաղաքն․ Շինեալ քաղաքս բնակեցան ի նմա․ Աբրահամ եղեւ մեծատուն յոյժ ի ծերութեան իւրում․ Եղեւ նորա որդի մի Իսահակ անուն, որոյ վատեցին աչք ի ծերութեան իւրում․ Առեալ Հայկայ զորդիս և զթոռունս իւր եկն ի Հայս, կռուեցաւ ընդ Բելայ և յաղթեաց նմա։

### 15․ Հրահանգ․

Հիւանդ է այրս․ Աղքատ է բարեկամ քո․ Որդի իմ է մանուկս․ Թագաւոր ձեր է այրս․ Բարեկամք մեր են սոքա․ Արքս այսոքիկ ոչ են ազգականք ձեր․ Ծերունիս այս դատաւոր է քաղաքիս այսոքիկ․ Զինուորք թագաւորի մերոյ են դոքա․ Դուստր քո է աղջիկս․ Չեմք թշնամիք ձեր․ Հայր իմ իշխան էր քաղաքին այնորիկ․ Արքս այսոքիկ երկոքին են զօրավարք Յունաց․ Կալաք զորս անդն էին․ Արգելուին զորս միանգամ մտանէինն․ Կոչեցաք զորս տեսինն և լուան․ Տեսի զոր արարն զայս․ Սպանին զոր մատնեացն զձեզ․ Ճանաչե՞ս զոր խօսէրն ընդ մեզ․ Փոքր է քաղաքս, բայց գեղեցիկ է յոյժ․ Չէ ինչ մեծ պարտէզդ, բայց ծառք բազումք են ի նմա․ Հին է հանդերձ մեր, բայց օդք ոտից մերոց չեն հինք․ Բարձր են լերինքս, այլ չէ առողջ օդ երկրին․ Յստա՞կ իցեն ջուրք գետոյն․ Իցէ՞ խոր գետն․ Եղեւ կռիւ ի քաղաքին, և վիրաւորք բազումք եղեն․ Եղէ ի տան նորա զաւուրս բազումս, բայց եղբայր քո չէր ընդ իս․ Մեք գոհ եմք զձէնջ, իցէ՞ք և դուք գոհ զմէնջ․ Այրն զոր տեսեր՝ չէ արժանի գովութեան․ Կինն այն այրի էր աղքատ և կարօտ աւուրն պարենի․ Եղբայր իմ է մանուկդ․ Դուստր միամօր է աղջիկդ մօր աղքատի․ Որդիք իմ են մանկունքդ․ Քաջ լերուք, ո արք․ Որդեակ, ուրախ լեր ընդ իս․ Ո՞ղջ իցես, եղբայր․ Ուլ մի ոչ ետուր ինձ զի ուրախ լինէի ընդ բարեկամս իմ․ Սուրբ եղիցի անուն քո․ Եղիցուք ձեզ ի ծառայս․ Եղիցին տունք ձեր աւերակ․ Ուրախ լինէր հանապազ․ Արծաթ քո եղիցի քեզ․ Լինիցի՞ ինձ որդի․ Եմ ես ի միջի ձերում իբրեւ սպասաւոր․ Մեծն ի ձէնջ եղիցի իբրեւ զկրտսերն․ Ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին․ Մի լինիր ամբարտաւան․ Լուռ լերուք։



### 16․ Հրահանգ․

Հայր իմ գնեաց պարտէզ․ Գնեցաք մատեանս․ Քոյր քո գնեաց զմատեանն փոքր․ Մատեանն զոր գնեցեր՝ ընտիր է․ Տունն զոր գնելոց է եղբայր քո՝ գեղեցիկ, սակայն փոքր է․ Գնեցի և ես տուն որ մեծ է յոյժ․ Գրեցե՞ր զթուղթն․ Վաճառեցի զձին զոր հօր քոյ պար-

գեւեալ էր ինձ · Վաճառեցե՞ր և դու զքոյն · Իշխանն վաճառէ զկառս և զերիվարս իւր · Հօրեղբայր իմ գընեաց խոյր մի գեղեցիկ վասն որդւոյ իւրոյ կրտսերոյ · Մանուկս այս գրեաց թուղթ երկայն առ մայր իւր · Հայր մեր գնեաց զպարտէզս և զայգիս ի հօրաքեռէ քումմէ · Հարսանիք էին առն ուրումն · Կոչեաց զամենայն բարեկամս իւր · Կոչէ կինն զդրացիս իւր · Հովիւք արածեն զոչխարս · Այր խիստ ես դու, հնձես զոր ոչ սերմանեցեր · Արձակեցէք զդոսա զի գնեսցեն իւրեանց կերակուրս · Շիջանին լապտերք մեր · Վաճառեցէք մեզ յիւղոյդ ձերմէ · Երթայք առ վաճառականս և գնեսջիք ձեզ · Զի՞նչ կամիք տալ ինձ · Ես ածից զնա առ ձեզ · Մի մխէր զձեռն քո ի սկաւառակն · Ժողովեցին զընտիր ընտիրսն յամանս · Օտար էի և ժողովեցէք զիս · Պատառեաց քահանայապետն զհանդերձս իւր · Կինս սիրէ զմանկունս իւր · Սիրեմ զեղբարս իմ և զքորս · Սիրեմ և զբարեկամս իմ և զվարդապետս · Ոռոգեցեր զծաղիկս քո · Ոռոգեցի զիմն և զքոյս · Եւ քոյր իմ ոռոգեաց զիւրսն · Եղբարք քո գնեցին շունս երկուս որ գեղեցիկ են յոյժ · Են կերակուրք և ըմպելիք որ եթէ շատ ուտիցին և ըմպիցին՝ ցաւս գործեն · Արաստոյն ազգ ինչ է վիմի յորում ոչ գործէ երկաթ · Մշակ նոքա են որ գործեն զերկիր · Վարդապետք պատժեն զմանկունս ծոյլս, և գովեն զժիրսն ։

## 17· Հրաման ·

Տեսե՞ր զայրն առ որ առաքեցի զքեզ · Ոչ տեսի զայրն, բայց վաղիւ տեսից զնա · Գտե՞ր արդեօք զոր խնդրէիրն · Ոչ գտի զոր խնդրէի, գտի զոր ոչն խընդրէի · Գտեալ զնա եհարց ցնա · Մի մտանիցես ի ներքս · Եմուտ ի պարտէզն · Ամենեքին նիրհեցին և ի քուն մտին · Եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն · Որ առն զարծաթն՝ չոքաւ, փորեաց զերկիր և թաղոյց զարծաթն · Մուտ ի տուն այդր և տես · Հանէք զծառայդ անպիտան արտաքս · Կալան զնա զի սպանցեն · Իբրեւ կատարեաց զբանս իւր, ել ի լեառնն · Միւսանգամ եկեալ եգիտ զնոսա ի քուն · Մի ոմն յայնցանէ որ ընդ նմա էին՝ ձգեալ զձեռն իւր, հան զսուրն, և եհար զծառայն · Յայնժամ թքին ընդ երեսս նորա · Ո՞վ իցէ որ եհարն զքեզ · Իբրեւ ել արտաքս, այլ կին ետես զնա · Տեսե՞ր զեղբարս իմ և զքորս · Տեսաք զսպասաւորս ձեր և զաղախնայս որ շրջէին ի պարտիզին ընդ հովանեաւ ծառոց · Ճանապարհորդք մեր հասին · Բանս այս եհաս յունկն թագաւորին · Եթէ տօթ ոչ ջեռուցանէ զանդաստանս, պտուղք ոչ հասանեն · Սպասաւորն հան ի վեր զբանն · Կարէ՞ք ի գլուխ հանել զգործդ · Ածին զնա առաջի թագաւորին · Իբրեւ ոչ կարաց ածել զնա ի հաւան, անէծ զնա · Եղբայր քո զի՞նչ ածէ զմըտաւ · Ածէ զմտաւ երթալ ի Յոյնս · Գտաք զմատեանդ ի վերայ սեղանոյն · Արկեալ էր նոցա ուռկանս ի ծով · Արկին ջուր ի թակոյկս · Արկին զնովաւ քղամիդ կարմիր · Արկ զձորձս իւր · Ած զսուր քո ընդ մէջ · Բազում ինչ ի կարասեաց նաւին ընկեցին ի ծով · Զոր ունէրն՝ արկ ի կիր ։



## 18· Հրաման ·

Ահա երկուս քանքարս շահեցայ · Բազում ինչ շահեցաւ · Կամի՞ս լսել զոր ասելոցն եմ · Ոչ կամեցաւ երթալ յագարակ նորա · Խօսեսցի զոր արարն դա · Տրտմեալ յոյժ՝ լուռ եղեն · Խօսեցարուք ի հրապարակս · Մի խօսիր ընդ իս ի ծածուկ · Եթէ ամենեքին գայթակղեսցին, ես ոչ գայթակղեցայց · Ո՞ւր իցեն քորք ձեր · Քորք մեր ի Հռոմ են · Ո՞ւր են եղբարք ձեր · Մեկնեցան նոքա երթալ յԱթէնս · Ստէպ խորհ-

եալ՝ ոչինչ կարաց վճարել· Եկեալ ի Պարսից բնակեցաւ յԱսորիս· Այսպիսի ինչ ոչ երեւեցաւ ի Հնդիկս· Ընդէ՞ր տառապիս· Ո՞վ է որ ըկէն զքեզ· Վարդապետն պարսաւէ զՏիգրան, ասէ եթէ ոչ աշխատի նա, հանապազ կագի ընդ ընկերս իւր· Որպիսի՞ թուի քեզ գինիդ· Թուի ինձ եթէ ընտիր է յոյժ· Լացցեն մանկունքս, իբրեւ մեկնեսցի մայր նոցա· Եթէ ոչ կատարեսցես, ամբաստան եղէց զքէն առ հայր քո· Եթէ ոչ հնազանդեսջիք Աստուծոյ, լինիցիք թշուառք· Հնազանդէաք ծնողաց մերոց, և անսայաք վարդապետաց մերոց· Մանկունք մտավարժք հնազանդին միշտ աւագաց իւրեանց· Հայեցաւ յարսն որ նստէին· Հան նախ զգերանն յականէ քումմէ, և ապա հայեսջիր հանել զշիւղն յականէ եղբօր քո· Արմատք խոտոց ցամաքին ի տօթոյ· Գոսացաւ բազուկ նորա· Զօրացաւ լեզու իմ· Պապակիմ ի ծարաւոյ· Պասքեալ էաք առ ի չգոյէ ջրոյ· Պարտ է ողորմել աղքատաց· Ողորմեցաւ նմա Աստուած· Որ ողորմին՝ գտցէ ողորմութիւն· Ո՞վ մերձեցաւ ի հանդերձս իմ· Բարկացեալ ոչ կամէր մտանել ի ներքս· Համարին զնոսա իւրեանց բարեկամս· Համարեցաւ եթէ մեռեալ իցէ· Նստեալ համարէր զարծաթն զոր շահեցաւ· Ոչ մեկնեցայց ի քէն, թէպէտ մեռանել հասանիցէ ինձ։

## 19· *Հրահանգ*·

Եթէ ոչ վաստակեսցիս, եթէ ցանգ խաղայցես, հանապազ աղքատ լինիցիս· Քորք իմ անսային միշտ վարդապետաց իւրեանց, բազումս աշխատ լինէին, և խաղային սակաւ· Եթէ ոչ անսայցես Աստուծոյ, ծնողաց քոց և վարդապետաց, ոչ լինիցիս երբէք երջանիկ· Լայ մանուկս· չիք նորա հաց· Եբաց Նոյ զպա-



տուհան տապանին· Կացաք առ նմա աւուրս եօթն· Լուացի զձորձս իմ· Փութայր երթալ յԵրուսաղէմ· Զի՞ հեղգաս, արի· Փութա, ել յԵրուսաղէմ· Որ եկեալն էին հարկանել զնա՝ ի բաց կացին ի նմանէ· Իբրև լուան զայս, ուրախ եղեն յոյժ· Արտասուօք իւրովք թանայր զոտս նորա· Իբրեւ սթափեցաւ ի գինւոյն, յայնժամ զգաց· Տակաւին ո՞չ իմանայք· Ելաց դառնապէս· Լուա զերեսս քո· Լուացին զձորձս իւրեանց։

## 20· *Հրահանգ*·

Մոռացան առնուլ հաց· Խոստանայք և ոչ կատարէք· Իմացա՞յք զայս ամենայն· Նոքա ոչ իմացան· Ընթացաւ ի գերեզման անդր· Վազեաց ըստ խրամն· Ցոտն եկաց և վազվազէր· Իբրեւ լուան զգանէն, դիմեաց արտաքս· Մերկացաւ զպատմուճանն զոր զգեցեալ էր· Հիւանդացեալ առնն մերձ էր ի մեռանել· Մերկացարուք զհանդերձս ձեր, և զգեցարուք քուրձ· Զօրացաւ յանկողնի իւրում· Ողբացարուք և սգացէք· Հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչեւ ցաւուրս երիս· Գուցէ եկեալ աշակերտաց նորա գիշերի՝ գողանայցեն զնա· Վերացաւ ի նոցանէ ամպն· Որ միանգամ լսէինն՝ զարմանային ընդ բանս նորա· Գթացեալ ձգեաց զձեռն իւր և մերձեցաւ ի նա· Մի մերձենար յիս· Ոչ ուրուք ի ձէնջ արծաթոյ կամ հանդերձի ցանկացայ· Եւ նոքա դարձան ի տեղիս իւրեանց· Ստացաւ ագարակ· Բազում գնոց ստացայ զկինուորութիւնս· Երուանդ, Երբ լուասցիս· Լուացայց ընդհուպ· Եթէ փշտանայցէ մի անդամն, փշտանան ամենայն անդամքն ընդ նմա· Գայցեն Հռոմք և բառնայցեն զազգ մեր· Բացան աչք նորա և տեսանէր· Եթէ իմացեալ էր մեր վաղ, առնէաք դարմանս· Լուաց

զձեռս իւր· Որ ոչն ջանայցէ՝ չառնի երբէք մեծատուն· Մինչչեւ արարեալ էր Աստուծոյ զաշխարհս· Չեւ էր ծագեալ արեգական· Մինչչեւ տեսեալ նոցա զմիմեանս։

## 21· Հրահանգ·

Ո՞ւր իցէ եղբայր քո· Երկու ամիսք են յորմէհետէ մեռաւ եղբայր իմ· Մեռանիմ առ անձուկ տեսանելոյ զքեզ· Առ ահին աղաղակեցին· Գիտէր զի առ նախանձու մատնեցին զնա· Առ ցաւոյն սաստկութեան պատառէր զհանդերձս իւր· Առ փութոյ ապրեցուցանելոյ զանձինս՝ թողին զաւարն· Առ տառապանս մեր մեռանիմք· Մեռցին մանկունքդ ի սովոյ· Նուաղեալ էաք ի ծարաւոյ· Թալանայր ի ծաղուէն· Հայր իմ մեռաւ երէկ ի մէջ բազկաց իմոց· Իցէ՞ մեռեալ հայր քո· Մայր իմ մեռանելոց է ընդհուպ· Ցանկամ տեսանել զորդեակն իմ, մինչչեւ մեռեալ իցեմ· Մինչչեւ մեռեալ քո՝ մեռայց ես· Յո՞ ընթանաս այդպէս արագ· Երթամ ածել բժիշկ· Հայր իմ մերձ է ի մեռանել· Ե՞րբ ծնեալ իցէ քո· Ծնայ յամին հազարերորդի ութհարիւրորդի տասներորդի· Եթէ ծնեալ էր իմ ամաւ միով յառաջ, լինէի ի տիս քո· Հօրեղբայր իմ ծնաւ յետ մեռանելոյ հօր իւրոյ· Քոյր իմ կրտսեր ծնաւ յամսեանն Մարտի· Յաւուրս յայսոսիկ ծնցի նմա որդի· Իբրեւ առ նա սկիզբն խօսելոյ, լռեցին ամենեքեան· Սկսայց պատմել քեզ զոր արարն նա ինձ· Նիստ, եթէ հաճոյ իցէ քեզ· Նստայց, ուր և գտից տեղի· Նստայ անդ ժամ մի· Ասա ցնա զի նստցի· Նստարուք աստէն մինչև ես գամ· Նստցուք առ քեզ· Եթէ նստիցի, ոչ եւս յառնիցէ· Ընդէ՞ր ոչ նստիս· Զիք տեղի նստելոյ· Տուր տեղի զի նստցի տէրդ· Ո՞ւր նստեալ էր քո յեկեղեցւոջն· Էի նստեալ առ մօրաքեռ քում· Տեարք, զի՞ կայք յոտս, նստարուք արդ։



## 22· Հրահանգ·

Անկեալ առ ոտս նորա աղաչէր· Անկեալ զպարանոցաւ նորա համբուրէր զնա· Անկեալ ի ծով հեղձաւ· Անկեալ ի վերայ նոցա կոտորեցին զնոսա· Զգոյշ լեր չանկանել· Եթէ անկայց, յարեայց միւսանգամ· Մովսէս սնաւ ի տան փարաւոնի· Սնեալ էր ի վայրս հովասունս Յունաց աշխարհին· Բերեալ մարմին նորա թաղեցաւ ի գերեզմանի հօր իւրոյ· Իբրև ածաք առաջի թագաւորին, եհարց զմեզ· Կամէր երթալ, այլ արգելաք զնա· Թողեալ զնա փախեան· Ընդէ՞ր չտաք թոյլ երթալ առնդ ի տեղի իւր· Կալայ զքեզ և ոչ թողից· Մի հեղուր արիւն անպարտ· Թափեաց նաւն զբեռինս իւր· Թողեալ զնա մեկնեցաւ· Զենում ոչխարս և արջառս· Փչեալ մորթեցին զնոսա կենդանւոյն· Ընկեցին ի ծով զամենայն գործիս և զկարասի նաւին· Ընկեցեալ զհանդերձս իւր փախչէր· Լցէք զբաժակդ գինւով· Մի ուրեք երթայցէք, մինչև լցցին ամանք ձեր· Ունիմ ինչ ասել ցքեզ· Զի՞նչ կամիցիս ասել ցիս· Չասեմ ինչ· Ասա միայն· Ապա ասացից քեզ· Մի ինչ ասիցես հօր իմում յորոց քեզն պատմեցի· Մի ասեր նմա եթէ անկեալ դնիմ յանկողնի· Զի՞նչ ասաց նա առ քեզ· Ո՞չ ասացի ձեզ· Տակաւին ոչ ասացեր ինձ· Կամի՞ս զի ասացից քեզ· Չէ պարտ մարդոյ ասել զամենայն ինչ զոր լսէ· Ասաց նա զայս ինձ յունկանէ, Զինչ իցէ զոր ասացն քեզ· Զճշմարիտն եւեթ ասացի ցնա· Թող զոր կամին ասասցէ· Զղջամ զի ասացի զայս· Մտադիւր ասէի, եթէ գիտացեալ էր իմ· Եթէ այլ ազգ ինչ ասէի, խօսէի սուտ· Երէկ ասացի ցեղբայր քո գալ տեսանել զիս· Բազում անգամ ասէր եթէ ցաւէր նմա ընդ մահ բարեկամի իւրոյ։

## 23. Հրաման.

Զի՞նչ է զոր ընթեռնուսդ. Ընթեռնում մատեան նոր. Զնոյն և մեք ընթեռնումք. Հայր իմ երբեմն ընթեռնոյր զմատենագիրս Յունաց, այժմ ոչ եւս ընթեռնու զնոսա. Ընթերցայ այսօր զպատմութիւն Հերոդոտեայ. Հայր իմ երէկ ընթեռնոյր զԹուկիդիդեայն. Ընթերցայց արդ մատեան մի գեղեցիկ զոր ուրումն փոխ տուեալ է ինձ. Յաճախագոյն եւս ընթեռնուաք, եթէ էր մեր աւելի ժամ պարապոյ. Ապա ուրեմն սիրէք զընթերցուածս. Կամի՞ս զի ընթերցայց քեզ ըզ Թուղթս զայս. Ոչ ընթեռնուս բարւոք. Զիա՞րդ պարտ իցէ ընթեռնուլ զայս բան. Ցանկայ գիտել ընթեռնուլ իբրև զքեզ. Յուշ լիցին քեզ զորս ընթերցարդ. Մանկունք իմ գրեթէ ոչ ընթեռնուն բնաւ. Չախորժեն յընթերցուածոյ. Բազում անգամ յեղյեղում առ նոսա եթէ չէ պարտ ծուլալ յընթերցուածոյ, որ զսիրտ և զմիտս միանգամայն յարդարէ։

Դիր զաթոռդ ի տեղի իւր. Ո՞ւր եդիր զխոյր իմ. Եդի զնա ի վերայ սեղանոյն. Զհանդերձ իմ եդի այգուն յարկեղ. Եթէ դնէի զնա այլուրեք, չէր ինձ մարթ գտանել զնա յերեկոյին. Ո՞ւր կամիս զի եդից զձորձս քո. Դիր ուր և հաճոյ իցէ քեզ. Համարիցիս եթէ եդի՞ ի վերայ անկողնոյն. Եդ ի մտի երթալ. Դիր զխոյր քո ի գլուխ քո. Դիցուք եթէ անդ իցէ. Դիցէ զնա ի սնարից իւրոց ի վերայ բարձի. Եդին զնա ի բանտի. Եդաւ ի նոր գերեզմանի, որ էր փորեալ ի վիմի։

## 24. Հրաման.

Առից զդա վասն իմ. Ո՞րչափ ինչ կամիցիս առնուլ. Առից զկէսն. Եղբարք իմ առցեն զմնացորդն. Կամիցի՞ս զտեղի առնուլ. Առ զոր միանգամ կամիս.



Զի՞նչ կամիս զի առից. Առցէ աղախինն զմանուկն ի գիրկս իւր. Առնուաք ի դիպակէ այտի, եթէ չէր եղբօր իմոյ առեալ զամենայն. Առէ՞ր ի միտ զայս ամենայն. Թուի ինձ եթէ ամենայն աշակերտք իմ չառին ի միտ զպատուէրս զայս. Առի զնա ի ձեռաց նոցա. Առեալ զնաւսն գնացին. Առէք ինձ այսր ձի. Վառէին մոմք երկու, մին ի սնարից և միւսն յանոտից նորա. Զի՞նչ առնես. Առնեմ զոր պատուիրեցերն ինձ. Առնեմք զոր առնելն պարտիմք. Չառնեն ինչ մանկունքդ. Ընդէ՞ր չառնեն ինչ. Քանզի և դուք եւս չառնէք ինչ. Զի՞նչ առնէիր ի մտանել իմում ի ներքս. Լուցանէի կրակ. Զի՞նչ առնէք յերեկոյին. Զոր դուդ այգուն առնես՝ արարից ես զայն յերեկոյին. Արա զոր կամիսդ. Արասցուք միշտ զոր առնելն պարտիմ. Չառնէ ումեք չար. Եթէ էի մեծատուն իբրեւ զքեզ, բազում ինչ առնէի. Ոչ այլ ինչ առնեն արքս, բայց ուտել և ըմպել. Արարի զնա ինձ բարեկամ. Դատաւորքն չարարին նմա իրաւունս. Մանուկս այս առնէ զկամս հօր իւրոյ։

## 25. Հրաման.

Ճանաչեմ զքեզ արդ. Եւ դու զիս ճանաչես. Ոչ զոք ճանաչեմ աստ. Եղբայր քո ճանաչէ զիս քաջ. Զբազումս ճանաչեմ աստէն. Ծանօթք բազումք են մեր աստ. Ոչ ճանաչէի զքոյր քո. Հօրեղբայր քո ծանօթ է ինձ յոյժ. Ոչ եւս ծանիցէ զձեզ. Հարցէք ցնա եթէ ճանաչիցէ՞ զիս տակաւին. Կամին ճանաչել ինձ զայրն. Մինչչեւ ծանուցեալ իմ զնա՝ եկն առիս. Նա նմա ծանօթս. Տեսի զքեզ ընդ միում ի ծանօթից քոց, ընդ որում չէի ես ծանօթ. Ծանեայ զնա ի բարբառոյն. Ծանիր զյանցանս քո։

Յո՞ երթաս. Երթամ ի տուն. Եղբայր իմ երթայ ի դպրոց. Յո՞ երթայիր ընդ առաւօտն, իբրեւ մտի ես

ի ներքս · Երթայի ի պարտէզ մեր · Երթա՞յք անդր ընդ առաւօտս · Երթայի մտադիւր ճեմել, եթէ աստ էր եղբայր իմ · Եթէ հաճոյ իցէ քեզ, եկից և ես ընդ քեզ · Երթիցուք ի միասին · Մի՛ գնար այնպէս արագ, երթիջիր մեղմով · Յո՞ երթան մանկտիդ · Երթան զճանապարհն ընդ որ մեքս · Ո՞ւր իցէ քոյր քո · Չոգաւ տեսանել զհայր իւր, վաղիւ դարձցի այսրէն · Ելցուք ընդ առաջ նորա · Կամիցի՞ս երթալ վաղիւ ի կոչունս · Հայր իմ չտայ թոյլ երթալ ինձ անդր · Ընդ հուպ երթայց անդր · Կաց վայր մի զի երթիցուք ի միասին · Պարտ է ինձ երթալ · Ոչ կամին երթալ · Զիմէ՞ իմեքէ երթան արքդ · Երթան զջրոյ ։

## 26· Հրահանգ ·

Յո՞ տանիք զմանուկդ · Տանիմք զնա ի դպրոց · Կամիցի՞ք տանել զնա ի տուն · Տանիմք զքորս մեր ի թէատրոն · Յո՞ կամիս զի տարայց զքեզ · Տար զիս ի պարտէզ ձեր · Մտադիւր տարայց զքեզ անդր · Տանէի զքեզ, եթէ էր իմ ժամ պարապոյ · կարի իմն յամեսցուք, եթէ տարցուք զձեզ անդր · Ե՞րբ գայցես տանել զեղբայր քո անդր · Յո՞ տարայք զմատեան իմ · Ոչ գիտեմ յո՛ տարայս · Ոչ տեսաք զնա ի տանելն · Տար զպատանիդ առ հազարապետն · Պատուէր ետ սպասաւորացն տանել զնա ի ներքս ի սրահն · Կերիցուք սակաւ ինչ ի մրգոց աստի · Ոչ ուտեմ այժմ, զի չեմ նօթի · Էր երբեմն զի ուտէաք բազում ինչ, այժմ սակաւ ինչ ուտեմք · Իբրեւ կերաւ ի հացէ անտի, և արբ ի գինւոյն, ոգի առեալ կամ կազդուրեալ սկսաւ խօսել · Ընդէ՞ր ոչ ուտէք, տեարք, և ոչ ըմպէք · Կերայք և արբէք · Ոչ կերան ինչ և ոչ արբին · Ո՞վ է որոյ իցէ ոչխար և ոչ ըմպիցէ ի կաթանէ նորա, և ոչ ի մսոյ նորա կերիցէ · Են անասունք որոց ոչ ուտի միսն, այլ



եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր ի մսոյ նոցա, չիլինէր ինչ նմա վնաս · Յամենայն ծառոց որ են ի դրախտիդ՝ կերայք, բայց ի ծառոյ աստի մի ուտիցէք · Զիցէ՞ ինչ աստ ըմպել · Ահաւասիկ գինի, արբէք, եթէ հաճոյ իցէ ձեզ · Բնաւ ոչ ըմպեմ գինի · Ջուր եւեթ ըմպեմք · Արբցուք յարեւ թագաւորին · Երէկ արբի բաժակ մի գինի, բայց ոչ արբից այսօր · Արբցուք ի միասին · Դու կերար շատ, և նա կարի արբ · Շատ է զոր արբաքս · Գինին զոր երէկ արբաք՝ այնպէս ազնիւ էր մինչեւ իւրաքանչիւր ումեք ի մէնջ ըմպել մէն մի շիշ ։

Ուստի՞ գայցես այդպէս անագան · Գամ ի ճեմելոյ · Ուստի՞ գայիր այգուն · յորժամ հանդիպեցայ քեզ · Գայի յամարանոցէ անտի · Երէկ կարի անագան եկի, այլ զայս առաւօտ եկի վաղ յոյժ · Եկեսցուք վաղ, եթէ լիցի ժամանակ · Կամի զի եկեսցուք յութերորդ ժամու · Եկայք ի դիպող ժամու · Ունիմ ինչ ասել ձեզ · Գայցէ՞ ինչ ընդ հուպ · Եկայք, տեարք · Որդի քո եկն և խնդրէր զքեզ · Բարեկամ, եկ այսր ։

## 27. Հրահանգ ·

Զի՞նչ ունիս ի ձեռին · Ունիմ մատեան ի ձեռին · Կարծէի եթէ ունիցի զմատանին զոր կորոյս եղբայր իմ · Առ աւասիկ դահեկան մի վասն աղքատին որ կայ առ դրան · Կալ բարւոք ի մտի զոր ուսարդ · Ո՞ ունիցի ի վարձու զտունդ · Հօրեղբայր իմ կալաւ զնա ի վարձու · Կալ ի վարձու մշակս երիս որ գործեսցեն յայգւոջ իմում. Կալարուք զարսդ, և մի թողուք զնոսա · Զի՞նչ է զոր ընկալարդ · Ընկալայ պարգեւ ի թագաւորէն · Համարիցի՞ս եթէ և մեք առնուցումք · Առջիք, եթէ իցէք արժանի · Ոչ ոք ընկալցի զձեզ ի տուն իւր · Մեծաւ պատուով ընկալան զմեզ արքն · Տամ քեզ զմատեանս · Տուր զարծաթդ կնոջդ աղքատի · Տուք սակաւ

ինչ գինի հիւանդիս. Ետ նմա մայր նորա միրգս. խըն-ձոր և տանձ և նուռն. Ասա ցպանդոկապետն տալ սմա պատառ մի միս, բաժակ մի գինի և մանանեխ և հաց. Տուաք դրացւոյ քում գրիչս վեց, քարտէս և մելան. Զայս ամենայն տաց քեզ, եթէ զոր ասելոցն եմ առնիցես. Ո՞ւմ տացուք զգիրդ. Տուք հօր ձե-րում. Եթէ տացես ողորմութիւն աղքատի, տուր ի ծածուկ. Ո՞ւր են հանդերձք քո. Ետու որում ետն զնոսա ինձ. Գիտիցե՞ս երբ գայցէ հայր իմ. Ոչ գիտեմ. Ասա զի գիտացից. Գիտասջիր զի ոչ երկնչիմք մեք ի սպառնալեաց քոց. Կարո՞ղ ես առնել մեզ զայդ. Այո, կարող եմ. Յո՞ երթաս. Ի հրապարակ, Կարիցե՞մք և մեք գալ. Դուք ոչ կարէք գալ անդր. Ասաց եթէ կա-րող եմ առնել, և ոչ կարաց առնել. Երէկ և եռանդ-ոչ կարացի ելանել յանկողնոյ. վաղիւ թերեւս կարա-ցից ելանել։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՅՈՎՍԵՓԱՅ ԳԵՂԵՑԿԻ

## 1

### ՅՈՎՍԷՓ ՎԱՃԱՌԱԿՈՒՐ ԼԻՆԻ ՅԵՂԲԱՐՑ ԻՒՐՈՑ

Յակոբ սիրէր զՅովսէփ առաւել քան զայլ որդիս իւր, զի ստացաւ զնա ի ծերութեան իւրում։ Արար-եալ Յակոբայ պատմուճան ծաղկեայ նկարէն, ագոյց նմա. բայց եղբարքն Յովսեփու ատէին զնա վասն ա-ռաւելն սիրելոյ զնա հօր նոցա, և վասն երկուց երա-զոցն զոր պատմեաց նոցա Յովսէփ։ «Թուէր ինձ,» ա-սէր Յովսէփ յաւուր միում ցեղբարս իւր, «թուէր ինձ կապել որայ ընդ ձեզ յանդի. և ահա որայն իմ կանգ-նէր, և որայք ձեր յարուցեալ երկիր պագանէին որա-յին իմում։ Թուէր ինձ դարձեալ տեսանել զարեգակն և զլուսին և մետասան աստեղս զի երկիր պագանէին ինձ»։

Որդիքն Յակոբայ երթեալ էին ի տեղի մի որ կոչէր Սիւքէմ արածել զխաշինս իւրեանց։ Յովսէփ չէր ընդ-նոսա, և հայր նորա առաքեաց զնա բերել համբաւ զնոցանէ։ Իբրեւ տեսին զնա եղբարքն ի հեռաստանէ, ասեն ցմիմեանս. «Ահա երազատեսն մեր. եկայք սպան-ցուք զնա, և ասասցուք եթէ գազանաբեկ լեալ կոր-եաւ»։ Այլ մին յեղբարց անտի Ռուբէն որ կամէր ապ-րեցուցանել զնա, խրատ ետ նոցա չսպանանել զպա-տանեակն. և նոքա անսացեալ նմա արկին զՅովսէփ ի գուբ մի անջրդի։ Ապա զհետ երթեալ խրատուն Յու-

դայի եղբօր իւրեանց, հանին զնա ի գբոյն և վաճառեցին քսան դահեկանի վաճառականաց Իսմայելացւոց որ տանէին ուղտիւք խունկս անուշունս յԵգիպտոս։ Յետ այնորիկ առեալ զպատմուճանն Յովսեփայ զծաղկեայ, և թաթաւեալ զնա յարիւն ուլու՝ առաքեցին առ հայր իւրեանց որ ասէ. «Պատմուճանս այս որդւոյ իմոյ Յովսեփայ է. գազան չար եկեր զՅովսէփ»։ Հայրն ողորմելի մերկացեալ զհանդերձս իւր զգեցաւ քուրձ, և առ սուգ ի վերայ որդւոյ իւրոյ ժամանակս բազումս։

---

## 2

### ՅՈՎՍԷՓ Ի ՏԱՆ ՊԵՏԱՓՐԵԱՅ

Վաճառականացն Իսմայելացւոց ածեալ զՅովսէփ յԵգիպտոս, վաճառեցին զնա Պետափրեայ, իշխանի զօրաց արքային փարաւոնի։ Եւ եգիտ Յովսէփ շնորհս առաջի տեառն իւրոյ, որ կացոյց զնա հազարապետ ի վերայ տան իւրոյ և ի վերայ ամենայն ընչից իւրոց։ Եւ զի էր այրն դիւրահաւան, անսացեալ բանից կնոջ իւրոյ որ զրպարտէր զՅովսէփ՝ արկ զծառայն իւր հաւատարիմ ի բանտ։

---

## 3

### ԵՐԱԶՔ ՄԱՏՌՈՒԱԿԻՆ ԵՒ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Պաշտօնեայք երկու փարաւոնի, մատռուակ նորա և մատակարարն, էին ի բանտի անդ ուր Յովսէփն էր։ Տեսեալ նոցա երկոցունց երազ ի միում գիշերի՝ աղաչեցին զՅովսէփ մեկնել նոցա զերազն։ «Տեսանէի,» ասէր առաջինն, «որթ որ ունէր բարունակս երիս ծանրացեալս ողկուզիւք խաղողոյ, զոր առեալ իմ՝ ճմլէի ի



բաժակն փարաւոնի և մատուցանէի նմա»։ «Յետ երից աւուրց», ասէ ցնա Յովսէփ, «հաստատեսցիս ի պաշտաման քում, և յայնժամ յիշեա զիս, և աղաչեա զարքայ հանել զիս աստի. զի յանիրաւի կամ ի բանտիս»։ Պատմեալ և մատակարարն զերազ իւր ասէ. «Տանէի կողովս երիս ի գլուխ իմ, և ի կողովին որ ի վերոյ քան զայսն էր՝ էին որայք չորս զորս ուտէին թռչունք երկնից»։ Ասէ ցնա Յովսէփ, «Յետ երից աւուրց փարաւոն տացէ հատանել զգլուխ քո և կախեսցէ զմարմին քո զփայտէ, և եղիցիս դու անդ կեր թռչնոց երկնից»։ Եւ որպէս գուշակեաց Յովսէփ՝ այնպէս եղև. բայց մատռուակն հաստատեալ ի պաշտաման իւրում մոռացաւ զոր խոստացաւն։

---

## 4

### ԵՐԱԶՆ ՓԱՐԱՒՈՆԻ. ԲԱՐՁՐԱՆԱԼՆ ՅՈՎՍԵՓԱՅ

Յետ երկուց ամաց ինքն փարաւոն տեսանէ երկուս երազս։ Թուէր նմա կալ առ եզերբ Նեղոսի, ուստի ելանէին երինջք եօթն գէրք որ սկսանէին արածել ի խաղս անդ. ապա ելանէին ի գետոյ անտի այլ ևս երինջք եօթն վտիտք յոյժ որ կլանէին զառաջինսն։ Յերկրորդում երազին տեսանէր թագաւորն եօթն հասկս ատոքս, ելեալս ի միջէ ցողնոյ. և այլ ևս եօթն հասկս ոսինս ելեալս նոյնպէս ի միջէ ցողնոյ որ կլանէին ըզհասկսն ատոքս։ Զահի հարեալ թագաւորին ի զարթնուլն՝ հարցանէր զամենայն իղձս Եգիպտացւոց, այլ ի զուր։ Յայնժամ յիշեալ մատռուակին զՅովսէփ՝ խօսեցաւ վասն նորա առ փարաւոն, որ անդէն տայր ածել զնա առաջի իւր, զի մեկնեսցէ զերազսն. Լուեալ Յովսեփայ զերազսն փարաւոնի՝ ասէ ցնա. «Եղիցին եօթն

ամք առատութեան, և ապա եղիցի նուազութիւն ամս եօթն, որ իբրեւ թէ կլանիցեն զամն զառաջինս առատութեան։ Թող, ասէ, կացուսցէ արքայ ի վերայ ամենայն երկրին Եգիպտացւոց զայր մի իմաստուն որ ըզ հնգերիր մասն հնձոց ամացն առատութեան դիցէ ի պահեստի վասն ժամանակի սովոյն»։ Հաճոյ թուեցաւ խըրատն փարաւոնի և ամենայն աւագաց նորա․ «Ուր գտից», ասէ փարաւոն, «այր իմաստուն և հանճարեղ քան զնա»․ և ապա դարձեալ առ Յովսէփ ասէ, «Ահա կացուցի զքեզ այսօր ի վերայ ամենայն երկրիս Եգիպտացւոց»։ Ապա հանեալ զմատանին իւր արկ զնա ի մատն Յովսեփայ, ագոյց նմա պատմուճան բեհեզեայ․ արկ մանեակ ոսկի զպարանոցաւ նորա, և հանեալ զնա ի մին ի կառաց իւրոց, ետ կարդալ քարոզ եթէ, Ամենայն ժողովուրդն կրկնեսցէ ծունր առաջի Յովսեփայ, և գիտասցէ եթէ կարգեցաւ նա իշխան ի վերայ ամենայն Եգիպտոսի։ Յետ այնորիկ ետ փարաւոն Յովսեփայ որ էր ամաց երեսնից՝ կին զդուստր Պետափրեայ քրմի Արեգ քաղաքի զԱսանէթ, յորմէ եղեն նմա որդիք երկու, Մանասէ և Եփրեմ։

## 5

### ՅԱԿՈԲ ԱՌԱՔԷ ԶՈՐԴԻՍ ԻՒՐ ՅԵԳԻՊՏՈՍ

Որպէս ասացն Յովսէփ, եօթն ամքն առատութեան եկին, և յետ այնորիկ այլ եւս եօթն ամք նուազութեան։ Յայնժամ եղեւ սով յամենայն երկրին Եգիպտացւոց և ընդ ամենայն աշխարհ, և յամենայն կողմանց գային յԵգիպտոս գնել ցորեան․ զոր Յովսէփ համբարեալ պահէր ի շտեմարանս։ Իմացեալ Յակոբայ եթէ գոյ ցորեան յԵգիպտոս՝ առաքեաց անդր զորդիս



իւր որ էին թուով տասն, զի ունէր առ իւր զկրտսերն Բենիամին։ Ծանեաւ Յովսէփ զեղբարս իւր առանց ծանօթս տալոյ նոցա․ և պատճառեալ եթէ իցեն լրտեսք՝ ասէ ցնոսա․ «Եկեալ էք դուք դիտել զել և զմուտ Եգիպտոսի»։ «Ոչ, տէր», ասեն եղբարքն, «այլ եկաք մեք գնել ցորեան։ Երկոտասան եղբարք եմք․ որդիք առն միոջ որ բնակեալ է յերկրին Քանանացւոց։ Կրտսերն ի մէնջ առ հօր մերում է, և մին չէ ի միջի»։ Ասէ ցնոսա Յովսէփ, «Ոչ թողից զձեզ աստի մինչեւ եկեսցէ եղբայրն ձեր կրտսեր․ առաքեցէք զմին ի ձէնջ ածել զնա այսր»։ Զայս ասացեալ եդ զնոսա ի բանտի․ ապա հանեալ զնոսա անտի յաւուրն երրորդի՝ ասէ, «Մին ի ձէնջ կացցէ աստ առ իս պատանդ, այլքն երթիցեն հանդերձ ցորենով․ և ի դառնալ ձերում ածէք զեղբայրն ձեր զկրտսեր, զի գիտացից եթէ ճշմարիտ են բանք ձեր»։ Նոքա ասէին ցմիմեանս․ «Յիրաւի կրեմք զվիշտս զայս, զի մեղաք նմա, և ոչ ողորմեցաք նմա յորժամ աղաչէրն զմեզ»․ և ոչ գիտէին եթէ Յովսէփ իմանայր զբանս նոցա, զի խօսէր ընդ նոսա թարգմանաւ։ Բայց Յովսէփ առանձնացեալ վայր մի ելաց։ Ապա եկեալ միւսանգամ հրամայէր ծառայից իւրոց ունել զՇմաւոն, և լցեալ զքուրձս նոցա ցորենով, դնել զարծաթ իւրաքանչիւր ուրուք ի բերան քրձի իւրոյ, և ապա արձակեաց զնոսա։ Հասեալ նոցա յերկիրն Քանանու, պատմեցին հօր իւրեանց զամենայն որ դիպեցաւ նոցա․ և ասէ ցնոսա Յակոբ․ «Անորդի արարէք զիս․ Շմաւոն գերի է․ Յովսէփ չէ ի միջի․ կամիք և զԲենիամի՞ն առնուլ յինէն․ ո՛չ այդպէս․ չառնում յանձն թողուլ երթալ նմա ընդ ձեզ։

## Զ

### ՈՐԴԻՔՆ ՅԱԿՈՎԲԱՅ ԴԱՌՆԱՆ ՅԵԳԻՊՏՈՍ

Ի սաստկանալ սովոյն ի վերայ ամենայն երկրի՝ ասէ Յակոբ ցորդիս իւր · « Երթայք անդրէն յԵգիպտոս » · Յուդայ ասէ ցհայր իւր · « Եթէ կամիս երթալ մեզ, առաքեա ընդ մեզ զԲենիամին, ես եղէց երաշխաւոր մանկանն, յինէն խնդրեսջիր զնա »։ « Եթէ այնպէս իցէ », ասէ Յակոբ, « արարէք որպէս հաճոյն է ձեզ · այլ առէք զընտիր ընտիրս ի պտղոց երկրիս տալ ընծայս առն որ տիրէ, առէք և արծաթ կրկին քան զառաջինն, տարայք և զայն որ գտաւ ի քուրձս ձեր, գուցէ դաւ ինչ իցէ » · Եւ եթող զնոսա երթալ, յանձն արարեալ զնոսա խնամոցն Աստուծոյ։ Լու եղեւ Յովսեփայ եթէ եկին եղբարք իւր, և եթէ Բենիամին եւս է ընդ նոսա, հրաման ետ հազարապետին իւրում պատրաստել ճաշ։ Իբրեւ յանդիման եղեն եղբարք իւր, մատուցին նմա զընծայս իւրեանց, և ետուն նմա ողջոյն խոնարհեալ մինչեւ ի գետին։ Յովսէփ եւս ետ նոցա ողջոյն մեծաւ քաղցրութեամբ, և հարցանէր ցնոսա։ « Հայր ձեր ծերունի զորմէ ասէիք թէ յերկրին Քանանացւոց է՝ ո՞ղջ իցէ »։ Ապա հայեցեալ ի Բենիամին որ էր նորա եղբայր համամայր, ասէ · «Դա՞ իցէ եղբայր ձեր կրտսեր, Աստուած ողորմեսցի քեզ, որդեակ, և պահեսցէ զքեզ», և աճապարեալ ել արտաքս, զի փղձկէր սիրտ նորա, և ոչ եւս հանդուրժէր ունել զարտասուս իւր։ Յետ լուանալոյ զերեսս իւր, եկն միւսանգամ՝ բուռն արարեալ անձին, և ի պատրաստ լինել ճաշոյն, նստաւ ընդ եղբարս իւր ի սեղան։

---



## Է

### ՅՈՎՍԷՓ ՏԱՅ ԾԱՆՕԹՍ ԵՂԲԱՐՑ ԻՒՐՈՑ

Յետ ճաշոյն, պատուէր ետ Յովսէփ հազարապետին իւրում լնուլ զքուրձս հիւրոցն ցորենով, դնել անդր և զարծաթն զոր բերեալ էր նոցա, և զբաժակ իւր եւս ի քրձին Բենիամինի։ Այն ինչ ելեալ էր նոցա ըստ քաղաքն, և ահա հասեալ ի վերայ նոցա հազարապետին, արգելոյր զնոսա և խնդրէր ի նոցանէ զբաժակ տեառն իւրոյ։ Բացան քուրձքն, և բաժակն գտաւ ի քրձին Բենիամինի։ Յայնժամ զարմացեալ նոցա և զահի հարեալ, պատառեցին զհանդերձս իւրեանց և դարձան ի քաղաքն։ Ասէ ցնոսա Յովսէփ։ «Զի՞ է զի գողացարուք զբաժակ իմ · ո՞չ գիտէք զի չիք ոք որ գիտիցէ հմայել իբրև զիս։ Արդ նա որ գողացաւն զբաժակն՝ եղիցի ինձ ծառայ, և դուք երթայք խաղաղութեամբ առ հայր ձեր»։ Յայնժամ պատասխանի տուեալ Յուդայի՝ ասէ · «Ծառայ քո հայր մեր մեռանիցի, եթէ ոչ դարձուցից առ նա զպատանեակդ, զի իմ երաշխաւոր լեալ է կենօք չափ վասն դորա · ես եղէց ծառայ տեառնդ իմում, և երթիցէ պատանեակդ ընդ եղբարս իւր »։ Յովսէփ ոչ կարացեալ այլ եւս ժոյժ ունել՝ ետ հանել արտաքս զամենայն Եգիպտացիսն, և յարտասուս հարեալ մեծաձայն՝ ասէ ցեղբարս իւր · « Ես եմ Յովսէփ, տակաւին ո՞ղջ իցէ հայր իմ»։ Եւ զի պախեալ ընդարմացեալ էին նոքա յերկիւղէ, յաւել ասել ցնոսա քաղցրութեամբ, « Մատերուք առ իս, ես եմ Յովսէփ, եղբայր ձեր, զոր դուք վաճառեցէք, այլ մի երկնչիք · Աստուած առաքեաց զիս յԵգիպտոս կերակրել զձեզ, երթայք առ հայր իմ, և պատմեցէք նմա զոր տեսէքդ, և փութասջիք գալ առ իս։ Բնակեսջիք դուք ի Գեսեմ և ես կերակրեցից զձեզ, զի հինգ ամ

եւս տեւեսցէ սովդ։ Եւ անկեալ զպարանոցաւ Բենիամինի եղբօր իւրոյ համբուրեաց զնա լալով, համբուրեաց և զայլս եւս յեղբարց իւրոց մեծաւ խանդաղատանօք, և նոքա հաւատացին նմա։

---

## 8

### ՅԱԿՈԲ ԳԱՅ ԲՆԱԿԵԼ ՅԵԳԻՊՏՈՍ

Յովսէփ հրաման ետ առնել հանդերձս երկուս վասն միոյ միոյ յեղբարց իւրոց· իսկ վասն Բենիամինի տայր յօրինել հանդերձս հինգ, գեղեցիկս յոյժ, և ետ նմա դահեկանս արծաթոյ երեքհարիւր։ Նոյնչափ դահեկան և այլ եւս բազում ինչ առաքեաց առ հայր իւր։ Թագաւորն գլխովին ետ տանել կառս բերել զՅակոբ հանդերձ իւրովքն և ամենայն աղխիւն։ Լուեալ Յակոբայ ի բերանոյ որդւոց իւրոց զամենայն անցս որ անցին, տեսեալ և զկառս Թագաւորին և զընծայսն Յովսեփայ՝ գոչեաց· «Ոչ իմիք ցանկամ այսուհետեւ, զի որդի իմ Յովսէփ կենդանի է· երթայց տեսանել զնա մինչչեւ մեռեալ իցեմ»։ Եւ ել Յակոբ ի ճանապարհ հանդերձ ընտանեօք իւրովք և ամենայն կահիւ և կարասեօք երթալ յԵգիպտոս։ Յովսէփ ել ընդ առաջ հօր իւրոյ, և անկեալ զպարանոցաւ նորա, թանայր զնա արտասուօք իւրովք։ Ապա եհան զնա առաջի Փարաւոնի, որ եհարց ցՅակոբ թէ քանի՞ ամաց էր· և նորա տուեալ պատասխանի ասէ· «Թիւք ամաց պանդխտութեան իմոյ ի վերայ երկրի՝ են հարիւր և երեսուն, սակաւ քան զթիւ ամաց հարց իմոց, և լի ցաւովք և հեծութեամբ»։ Յովսէփ հրամանաւ Փարաւոնի ետ ի ժառանգութիւն հօր իւրոյ և եղբարց իւրոց զերկիրն Գեսեմ, պտղաբեր յոյժ յամենայն երկրին Եգիպտացւոց։

---



## 9

### ՅԱԿՈԲ ՕՐՀՆԷ ԶՈՐԴԻՍ ԻՒՐ ԵՒ ՄԵՌԱՆԻ

Յակոբ եկեաց այլեւս ամս եօթնեւտասն յԵգիպտոս։ Յայնժամ տեսեալ նորա թէ մեռանելոց է՝ երդմնեցոյց զՅովսէփ թաղել զնա ի գերեզմանս հարց իւրոց· յետ այնորիկ օրհնեաց զերկոսին որդիսն Յովսեփայ, զԵփրեմ և զՄանասէ։ Ապա կոչեալ զամենայն որդիս իւր զմահճօք իւրովք խօսեցաւ առ մի մի ի նոցանէ և օրհնեաց զնոսա։ Ռուբէն զորդի իւր յանդիմանեաց վասն ոճրոյն մեծի զոր նորա գործեալ էր· զՇմաւոն և զՂեւի վասն անօրէն վրիժուն զոր խնդրեալ էր նոցա ի Սիւքեմացւոց անտի։ Իբրեւ եկն առ Յուդա, ասէ ցնա· Գովեալ լիցիս դու յեղբարց քոց, և ձեռն քո արկցէ ընդ լծով զթշնամիս քո։ Դադարեալ Յակոբայ ի խօսելոյ, տարածեաց զոտս իւր ի մահիճս իւր և մեռաւ։ Տեսեալ Յովսեփայ եթէ վախճանեցաւ հայր իւր, անկաւ ի վերայ նորա և համբուրեաց զնա արտասուօք։ Ապա հրաման տուեալ դիապատկաց եգիպտացւոց պատել զմարմին նորա ըստ սովորութեան երկրին՝ տարաւ զնա անձամբ եղբարբք իւրովք հանդերձ յերկիրն Քանանու, և եդ զնա մեծաւ շքով ի շիրմին որ կոչէր այր Մակփելայ, մօտ ի Քեբրոն։

---

## 10

### ՄԱՀ ՅՈՎՍԵՓԱՅ

Յետ մահուանն Յակոբայ երկուցեալ եղբարցն Յովսեփու թէ գուցէ յուշ լիցին նմա չարիքն զոր արարեալ էր նոցա նմա, աղաչեցին զնա ներել նոցա, և նա հանդարտեցոյց զնոսա քաղցրութեամբ և սիրով։ Էր նա

յայնժամ ամաց իբրեւ յիսուն և վեցից, և եկեաց այլ եւս ամս յիսուն և չորս՝ սիրելի և մեծարոյ լեալ միշտ յաչս Եգիպտացւոց որոց լեալ էր նա փրկիչ։ Յառաջ քան զմեռանել իւր ասէ Յովսէփ ցեղբարս իւր. «Այց արարեալ ձեզ Աստուծոյ յաւուր միում՝ հանցէ զձեզ աստի տանել յերկիրն զոր ետ նա հարց մերոց։ Երդուարուք ինձ տանել յայնժամ զոսկերս իմ ընդ ձեզ», և նոքա երդուան նմա։ Վախճանեալ Յովսեփայ հարիւր և տասնամենի՝ պատեցաւ մարմին նորա և եդաւ ի դագաղս մինչեւ ցելս որդւոցն Իսրայելի յԵգիպտոսէ երթալ յերկիրն Քանանացւոց։

# ԱՅԼԵՒԱՅԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

## 1

### ՇՆԻԿՆ

Մանուկ մի գնայր յաւուր միում շրջել առ եզերբ առուի միոջ, և հանդիպէր անդ մանկանց ոմանց չարաց որ հեղձուցանել կամէին շուն մի փոքրիկ ի ջուրս անդ առուին։ Գթայր մանուկն յանասնիկն հէք, գնէր զնա և ածէր ընդ իւր յիւր տուն։ Վաղվաղակի ընդելանէր շնիկն ընդ իւրում բարերարին այնպէս, մինչեւ շրջել զկնի նորա յո և երթայր նա՝ խաղալ ընդ նմա և անկանել ընդ անձն։ Ի գիշերի միում իբրեւ մանուկն կամէր մտանել յանկողին, շունն սկիզբն առնոյր հաջել, և չտայր նմա ի քուն լինել։ Կամեցեալ գիտել պատանւոյն թէ զինչ էր վասն որոյ հաջէրն շունն, առ ճրագ, և իբրեւ յածէր այսր անդր տեսանել ինչ, յանկարծ ետես ընդ մահճովն այր մի ի կերպարանս ահա-



ւորս, և գիտաց եթէ գող էր նա։ Ի բառնալ պատանւոյն ճիչ առ ահին, ամենեքին որ ի տանն էին՝ գային խռնէին զնովաւ, և կալեալ զգողն մատնէին դատաւորին։ Ի լինիլ հարցափորձի, խոստովան լինէր այրն եթէ ի մտի եդեալ էր սպանանել մի ըստ միոջէ զամենեսին որ ի տանն էին, սկիզբն արարեալ ի պատանւոյն, և ապա յաւարի առնուլ զտունն։

Յայնժամ գոհացաւ մանուկն զԱստուծոյ զի այնպէս յաջողութեամբ փրկեաց զնա, և ասէ. Ո՞ երբէք ածէր զմտաւ եթէ կորիւն մի շան զորոյ ես զկեանսն փրկեցի, փրկելոց էր զիմ կեանս։

---

## 2

### ԴՐԱՑԻՔ ԱԶՆՈՒԱԳՈՅՆՔ

Մլաղացի ուրումն էր մանուկ մի փոքր, որ ի խաղալ իւրում մօտ յափունս առուի, անկանէր ի ջուրսն։ Ատաղձագործ ոմն որ յայնկոյս առուին բնակէր՝ ետես զոր ինչ եղեւն, և իսկեւիսկ արկեալ զանձն ի ջուր անդր, հան ողջ զմանուկն և ած կացոյց առաջի հօրն։

Իբրեւ ամ մի ի վերայ անցանէր, յանկարծ ի մէջ գիշերի պատահէր հրդեհ ի տան ատաղձագործին։ Ճարակէր բոցն զտունն, և ապա ուրեմն իմացեալ ատաղձագործին, հազիւ զերծուցանէր զանձն և զկին իւր և զորդիս։ Սակայն առ փութի զերծանելոյ, մոռանային առնուլ զկրտսերագոյնն ի մանկանց որ էր դուստր իբրեւ ամաց երկուց։

Աղաղակ մանկանն լսելի լինէր ի միջոյ հրոյն բոցբոքելոյ, հայր և մայր նորա լային դառնապէս, այլ չէր ոք որ իշխէր մտանել և փրկել զմանուկն։ Յայնժամ աճապարեալ գայ մլաղացն, և սրացեալ ի հրդեհ անդր, առնու ածէ զմանուկն անապական, և տուեալ զնա ցհայրն ասէ. Օրհնեալ եղիցի տէր որ ետ ինձ ժամ դի-

պող առ հատուցանել զերախտիսն զոր ինձ արարեր․ դու զիմ ուստր հաներ ի ջրոյ, և ես, օգնականութեամբն Աստուծոյ, զերծուցի զքո դուստր ի հրոյ։

Իբրև հասանէին մանկունքն երկոքին յարբունս, որ հանաւն ի ջրոյ՝ առնէր կին զնա որ ի հրոյն հանեալ էր։

---

### 3

#### ՎԱՐԴԵՆԻ

Կնոջ ուրումն աղքատի էր դուստր մի որ տնկեաց տունկ մի մատաղ վարդենւոյ յանօթ խեցեղէն և եդ առաջի պատուհանի խցկանն յորում բնակէր։ Էին աւուրք գարնայնոյ, և տունկն լի էր բոլորիւք վարդից։ Ի ջերմ ժամանակս թողոյր աղջիկն զվարդենին արտաքոյ պատուհանին, և ընդ երեկս, իբրև արեւն ի մուտս լինէր, առնոյր ի ներքս։

Դէպ եղեւ զի յերեկոյի միում չարար ինչ փոյթ դնել զտունկն ի պահեստի, որպէս և սովորն էր․ քանզի ասէր եթէ Չէ ինչ պիտոյ, զի օդն էր ջերմ և քաղցր։ Այլ իբրև ել ընդ առաւօտն, ետես զվարդենին ցամաքեալ ի սառամանեաց։ Լայր, իբրև հայէր ի տունկն և ասէր առ տրտմութեանն․ «Մի միայն անմտութիւն ահա եղծ զարդիւնս այնչափ վաստակոց իմոց»։ Յայնժամ ետ պատասխանի մայրն և ասէ․ «Պատահարդ այդ փոքր որ քեզ այնչափ վիշտս գործէ՝ մարթի քեզ մեծի իրիք երանութեան պատճառք լինել։ Ուսիր աստէն զի զոր ինչ սառնամանիքն արարին վարդենւոյդ որ ի ծաղկի էր, ապականութիւն բարոյից զնոյն արասցէ անմեղութեան․ և զի առ ի պահել զանձն սուրբ յախտից, յաճախ իմն փութոյ պէտք են և հանապազորդ զգուշութեան։

---



### 4

#### ՊԱՏԵԱՆՔ ԸՆԿՈՒԶՈՅ

Ծեր կոմսն Ա․ սիրէր յոյժ զճշմարտութիւն և զարդարութիւն։ Արք ոմանք չարք զայրացեալ էին ընդ նա վասն այսորիկ, մինչեւ երդնուլ ի միասին և ի խընդիր լինել կորուսանել զնա։ Արդարեւ իսկ ետուն արծաթ բազում առն ումեմն չարագործի որ խոստացաւ սպանանել զնա ի վաղիւ անդր գիշերայն։

Կոմսն ազնուական չունէր բնաւ ակն վտանգին որ ի վերայ կայր։ Քեռորդիք նորա, մանկունք սիրունք, եկին առ նա ընդ երեկս։ Ուրախ լեալ կոմսին ընդ գալուստ նոցա, հանէր միրգս՝ խնձոր և տանձ և ընկոյզ։ Իբրեւ մեկնեցան մանկունքն, կամեցաւ կոմսն ի քուն լինել, և յանձն լեալ ի պաշտպանութիւնն Աստուծոյ, անկասկած ի քուն լինէր։

Սակայն զհասարակ գիշերաւ չարագործն որ գաղտ մտեալ էր յապարանս անդր՝ սպրդէր մեղմով ի սենեակ կոմսին, մինչ սա քաջ ի քուն էր, և լապտեր մի փոքր վառէր առ անկողնոյն։ Մերկացեալ չարագործին զդաշոյնն, և ամբարձեալ զբազուկն մերձենայր առ նա։ Այլ յանկարծ լսելի լինէր ի սենեկի անդ դղրդիւն այնպէս սաստիկ, մինչեւ զարթնուլ կոմսին ի քնոյ։ Իբրեւ յարեաւ և ետես զայրն դաշոյն ի ձեռին, աճապարեաց առ զգէնսն որ կախեալ կային զորմովն ի սնարից անկողնոյն, և սպառնայր հարկանել զայրն։ Զահի հարեալ առնն՝ ընկենոյր զդաշոյնն և խնդրէր շնորհս։ Յետոյ ապա բռնադատեալ մտանել ի բանտ՝ ի վեր հանէր զորս թելադիրն լեալ էին նմա։

Զմտաւ ածէր կոմսն թէ զինչ էր որ զդղրդիւնն զայն գործեաց, և զարթոյց զնա ի քնոյ։ Իբրեւ յածէր

զաշս իւր շուրջանակի՝ ետես զի ընկեցեալ էր ման-կանցն ի գետին կեղեւ ընկուզոյ յորոյ վերայ կոխեալ էր չարագործն: Զարմացաւ կոմսն և ասէ. Խնամովքն Աստուծոյ կեղեւ մի ընկուզոյ ապրեցոյց զիս, և զանըզ-գամսն մատնեաց սրոյ արդարու՟թեան:

---

## 5

### ԻՆՉ ՍԱԻՈՒՂԱՑ

Արք երեք յԱմսդերտամ քաղաքէ յուղի անկեալ ի միասին երթային ի գիւղ ուրեք վասն իրիք գործոյ:

Զճանապարհայն տեսանեն չինական մի զի գայր առ նոսա շտապաւ, և յերեսացն տեսլենէ թուէր իմն տըխ-մար և պանդոյր քան զամենայն մարդիկ: Ասեն արքն երեքին ցմիմեանս, «Եկայք ծաղր արասցուք զդովաւ»: Զայս ասեն, և հեռացեալ կան ի վերայ ճանապարհին բացագոյն ի միմեանց իբրև քարընկէց մի: Իբրև մեր-ձենայ չինականն առ առաջինն՝ լսէ 'ի նմանէ զայս բան. «Ողջ լեր, հայր Աբրահամ»: Առ այս բան չինականն տայ նմա ողջոյն նշանացի գլխոյն, և ասէ «Ողջ լեր»: Սակաւ ինչ հեռագոյն անտի տեսանէ զմիւս եւս ընկեր առաջնոյն, որ ասէ ցնա. «Ողջ լեր, հայր Իսահակ»: Սմա եւս զնոյն պատասխանի առնէ չինականն: Անտի ապա յառաջ մատուցեալ գտանէ զերրորդն որ ասէ ցնա. «Ողջոյն քեզ, հայր Յակոբ»: Յայնժամ ի վերայ հասեալ չինականին խորհրդոյ արանցն ասէ ցնա. «Խա-բիք, տեարք, չեմ ես Աբրահամ, ոչ Իսահակ և ոչ Յակոբ, այլ Սաւուղ եմ որդի Կիսեայ, և ելեալ եմ ի խնդրել զէշս հօր իմոյ. այլ, բարէ, մերքն մատակք էին, զորս եսն գտանեմ՝ արուք են»:

---



## 6

### ՅՈՎՍԷՓ ԿԱՅՍՐ

Յովսէփ Բ. Կայսր Գերմանացւոց յառաջնում ճանա-պարհորդութեանն զոր արար յանծանօթս՝ հասեալ ի կայան մի սուրհանդակաց չգտանէր ձի յասպաստանին ի փոխել զերիվարսն: Սուրհանդակապետն ասէ ցայրն անծանօթ սպասել սակաւիկ մի՝ խոստովան լեալ եթէ յուղարկեաց զնժոյգսն բերել զազգականս և զբարեկամս իւր հրաւիրեալս ի կնիք որդւոյն: Զբանիւք անկեալ Կայսեր ընդ առնն և գտեալ զնա ողջամիտ և հայրե-նասէր՝ յայտ արար նմա եթէ ցանկայ լինել կնքահայր մանկանն: Սուրհանդակապետն զարմանայր ընդ առա-ջարկութիւնն, բայց և այնպէս նախամեծար արարեալ զայրն անծանօթ քան զիւր հօրեղբօր ուստր որ հողա-գործ էր՝ հաւանեալ առ յանձն: Յերթալ նորա յեկե-ղեցին, սկիզբն լինէր պաշտամանն: Ասէ երէցն կնքա-հօր ցկայսրն. «Զի՞նչ անուն է քո». և նա ասէ «Յով-սէփ»: «Եւ զի՞նչ աւելի անուն է քո», կրկնէ երէցն: «Զի՞նչ պիտոյ իցէ քեզ այդ», ասէ կայսրն, «ինձ թուի թէ Յովսէփն անուն միայն շատ իցէ»: «Ոչ, Տէր», ասէ երէցն. «կամիմք գիտել և զանուն յորջորջանաց ազգատոհմին քո»: «Եթէ այնպէս իցէ,» ասէ յայն-ժամ Կայսրն, «անուն յորջորջանաց իմոց է Յովսէփ Բ. Կայսր Գերմանացւոց»:

Երէցն և որ անդն կային յապուշ հարան, և սուր-հանդակապետն անկաւ առ ոտս Թագաւորին որ յարոյց զնա մարդասիրութեամբ, և մեծապարգև մեծարեալ զայրն, խոստացաւ չմոռանալ զպիտանի իւրոյ սանուն:

---

Ր

## ՄԵԾՈՒԹԻՒՆ ԱՆՑԵԱԼ

Տարագիր լեալ Դիոնի ի Սիրակուսացւոց ապաշնորհաց՝ ապաստան լինէր ի քաղաքն Մեգարացւոց ուր Պրոդոտոս անուն ոմն վարէր զիշխանութիւնն։ Իբրեւ դէպ լինէր սմա յաւուր միում պահանջել իրաւունս վասն անիրաւութեան իրիք եղելոյ նմա յումեքէ, երթեալ յապարանս իշխանին խնդրէր յանդիման լինել նմա, այլ ոչ ումեք լինէր փոյթ դնել մեծարանս երեսաց առնն մեծի՝ ըստ արժանի առաջնոյ նորա մեծութեանն։ Յետ հարուստ մի տալոյ սպասել նմա՝ տուաւ պատասխանի եթէ զբաղեալ Պրոդոտոյ ի գործս կարեւորս չկարէ առնել նմա ընդունելութիւն զայն օր։ Բարեկամք Դիոնի որ ընդ նմա էին՝ գչարէին զի իբրեւ ընդ անարգի ումեք վարեցան ընդ առնն սքանչելւոյ, որ մինչդեռ յիշխանութեանն էր՝ հանապազ մարդասիրութեամբ գնայր ընդ որս դիմէինն առ նա։ Այլ Դիոն առանց տրտնջելոյ ասէր ցնոսա հանդարտութեամբ. «Բարեկամք, թերեւս և իմ զնոյն արարեալ իցէ, մինչդեռ իշխանս էի ի Սիրակուսա։» Յետ ժամանակաց այրս այս մեծ ազատէր զհայրենիսն ի Դիոնիսեայ բռնաւորէ որ հարստահարէր զերկիրն, և հաստատէր միւսանգամ զխաղաղութիւն և զարդարութիւն. այլ սպանաւ նա ի Կալիպպոսէ Աթենացւոյ որ հիւր և բարեկամ նորա էր։ Իսկ Դիոնեսիոս Բռնակալ, աքսորեալ ի Սիրակուսայ, եկն բնակեցաւ ի Կորնթոս ուր լեալ դաստիարակ՝ մեռանէր յաղքատութեան։

---



Ց

## ԳՈՂ ԵՒ ԽՈՋ

Արք երկու որ շրջեցուցանէին արջ մի՝ հասեալ յաւուր միում ընդ երեկս կարի անագան ի չէն ուրեմն, լուծան յիջեւանի ուրեք ուր կամէին ագանել զայն գիշեր։ Պանդոկապետն որոյ այն ինչ վաճառեալ էր զիւր խոզ պարարակ՝ փակեաց զարջն ի գոմ անդր ուր զխոճկորն կապէր յառաջագոյն։

Զմէջ գիշերաւ գող մի, որ չէր տեղեակ որում դիպուեցաւն զցերեկ, սպրդեալ ի պանդոկի անդր կամէր տանել զխոզն պարարակ։ Մեղմով իմն բացեալ ըզ դուռն գոմին մտանէ ի ներքս առ խարխափի մթան, և փոխանակ խոզին զոր գտանել կարծէր՝ բուռն հարկանէր զարջոյն, որոյ յոտն կացեալ ահագին իմն աղաղակաւ արկանէ զերկոսին թաթուլսն յայրն և այնպէս խիղդս արկեալ վակժոյժ լինի զնմանէ, մինչեւ չկարել առնն շարժել։

Ահն և տագնապ ետուն նմա բառնալ զաղաղակ գուժի և լալոյ, մինչեւ յաղմկէ անտի նորա զարթնուլ ընդոստ ամենեցուն որ ի պանդոկւոջն ննջէին. և հազիւ ուրեմն հասանէր նոցա թափել ի ճիրանանց գազանին զայրն յարիւն և յապաժոյժ համակեալ։ Այլ այն ինչ զերծեալ նորա ի վտանգէ անտի, մատնէր ի ձեռս արդարութեան։

## 9

### ԳԱՀՏՕՆԵԱՅ ԱՆԿԵԱԼ ԹԻՇԽԱՆՈՒԹԵՆԷ

Ոմն ի թագաւորաց Պարսից ցասուցեալ ընդ գլխաւորն ի պաշտօնէից իւրոց՝ ընկենոյր զնա յիշխանութենէ և զայլ ոք փոխանակ նորա կացուցանէր։ Սակայն շնորհս իմն առնելոյ վասն՝ թողոյր նմա ընտրել վայրս ինչ ուր բնակիցէ խաղաղութեամբ հանդերձ ընտանեօքն, և զամենայն ստացուածսն եւս շնորհէր նմա։ Այլ պաշտօնեայն ասէ ցթագաւորն. «Զի՞ պիտոյ իցեն ինձ այսուհետեւ ինչքն զոր կամի արքայ շնորհել. աղաչեմ տուր հրաման առնուլ զամենայն յինէն. այլ հաճոյ թուեսցի տեառն իմում առնել զոր խնդրեմն. ցուցցի ինձ յիշխանութեան արքայի գիւղ մի կամ աւան անշէն և ամայի, զոր խնամեալ արարից շէն մարդաշատ։» Յայնժամ հրաման տայր թագաւորն հանել խուզարկս ի խնդրել վայրս ինչ ըստ ցանկութեան պաշտօնէին. այլ որք առաքեցանն ի թագաւորէն՝ եկեալ ետուն համբաւ թէ չիք յամենայն իշխանութեան արքայի գիւղ կամ աւան և կամ վայր ինչ բնակութեան որ իցէ ամայի կամ անմշակ։ Յայնժամ ասէ պաշտօնեայն ցթագաւորն. «Քաջ իսկ գիտէի, արքայ, թէ չիք բնաւ վայր աւեր և ամայի յամենայն երկրին զոր վարել յանձն լեալ էր ինձ. և ի խնդրել իմում տեղի ինչ այնպիսի՝ իմ խորհուրդ այն էր, տալ պատճառս զի անձամբ հասու լիցիս թէ զիարդ շէն և ծաղկաւէտ դարձուցանեմ այսրէն զերկիրս ի ձեռս քո։ Իցիւ գտանէր Տէրդ իմ այլ պաշտօնեայ որում մարթ էր ապա տալ ղանձնէ զնոյն վկայութիւն։»



## 10

### ՕՐԻՆԱԿ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Յետ պարտութեան Կարոլոսի ԺԲ. ի ի Պետրոսէ մեծէ առ Բուլդաւայ, շինականք երեք Սուետացիք ետուն զարմանալի ինչ օրինակ հայրենասիրութեան։ Ընդ առնուլ նոցա համբաւ եթէ պարտեցաւ արքայ Սուետաց և է ի մեծի կարօտութեան՝ ժողովեալ զամենայն ինչ որ աւելորդ էր նոցա՝ կարասիս, հանդերձս, գարի, խար և անասունս, չոքան վաճառել զնոսա ի միում ի մօտաւոր քաղաքաց անտի, և մին ի նոցանէ առեալ զգինս վաճառին և հեծեալ ի ձի աճապարեալ հասանէր ի բանակ անդր Սուետեաց. «Ո՞ւր իցէ արքայ», գոչէ նա ի հեռուստ առ պահակապանսն. «մուծէք զիս առ նա, ունիմ ինչ ասել ցնա»։ Մի ոմն ի պաշտօնակալացն անսացեալ նմա, ածէ զնա առաջի Կարոլոսի։ Ի մտանել շինականին առ թագաւորն՝ անդէն ի գուճս անկեալ հանէ ի ծոցոյ իւրմէ քսակս երկուս ոսկւոյ, և մատուցանէ արքայի՝ յայտ արարեալ նմա թէ զիարդ ածեալ էր նորա ի մի վայր զայն գումար հանդերձ երկոքումբք ընկերօքն։ Ասի եթէ յարտասուս հարաւ Կարոլոս ընդ պատմութիւն առնն, և ասէ. «Ոչ ոք երբէք յազնուականաց իմոց եցոյց այսպիսի ինչ հանդէս հաւատարմութեան». և խոստանայր շինականին ամբառնալ զնա յազնուականութեան աստիճան իբրեւ ի հատուցումն հայրենասիրութեան նորա. այլ ի չառնուլ նորա յանձն, և յընտրելն մանաւանդ կալ յիւրում աստիճանին ընդ վաղնջուց բարեկամս իւր, տայր թագաւորն գրել առաջի իւր հրովարտակ որով խսպառ ապահարկ առնէր զբարեկիր շինականն և զերկոսին ընկերս նորա, և ի հանդէս իւրոյ շնորհակալութեան խլեալ թելս ինչ ի մօրուացն դնէր ընդ մոմով կնքոյն որով կնքէր զհրովարտակն։

## 11

### ՓԱՐՈՍՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՅ

Աշտարակն Փարոսի որ շինեցաւ հրամանաւ Պտղոմեայ Եղբայրասիրի՝ էր ի թիւ եօթանց հրաշակերտաց աշխարհի, և այլ ևս աշտարակք սմին նմանք որ յետոյ շինեցան յառաջնորդութիւն նաւավարաց՝ կալան զնոյն անուն։ Էր նա շինուած մեծ չորեքանկիւնի ի սպիտակ կճէ բազմայարկ, և ունէր տանիս յորոյ վերայ վառէր զամենայն գիշեր խարոյկ մեծ զոր մարթէր նաւավարաց բացուստ ի բաց տեսանել։ Ճարտարապետն որ արկ զձեւ շինուածոյն և հան ի գլուխ զգործն՝ կոչէր Սոստրատոս։ Ցանկացեալ սորա թողուլ զհամբաւ ճարտարութեան իւրոյ առյապա, և ոչ իշխեալ ընդ անուան թագաւորին կցել զիւրն՝ խորհեցաւ այսպիսի ինչ հնարս։ Ծեփեալ բռով զճակատ շինուածոյն՝ գրէր ի վերայ բանս գովութեան առ թագաւորն, և ի ներքոյ ծեփածոյն դրոշմէր ի վիմի միւս ևս գիր։ Յետ իբր դարու միոջ ի թօթափել ծեփոյն՝ ջնջեալ անհետ լինէր որ ինչ զՊտղոմեայն գրեալ էր, և երեւէր միայն որ ի ներքոյն էր դրոշմեալ մեծամեծ նշանագրօք այսպէս. «Սոստրատոս Կնիդացի, առ դիսն կենարարս, յօգուտ նաւարկութեան»։

---

## 12

### ԴՐՕՇ

Դերձակ ոմն անկեալ յախտ մահացու, տեսանէ զարմանալի ինչ յանուրջս։ Թուէր իմն նմա կալ ի վերջնում ատենի, և հրեշտակն մահու կայր և պարզէր առաջի նորա դրօշ մի ահագին, կազմեալ ի կտորոց



ազգի ազգի կերպասուց զոր նորա խորեալ էր ընդ ժամանակս ժամանակս յիւրոց յաճախորդաց։ Ի նմին ժամու թուէր նմա մխել ի դժոխս. ընդ այս տեսիլ զարհուրեալ առնն՝ յառնէ ընդոստ ի քնոյն համակ ի քիրտն ցուրտ։

Զայս երազ համարեալ նորա իբրեւ ազդ իմն նմա յաստուածակոյս կողմանէ անտի՝ դնէ ուխտ չգողանալ այլ ևս, եթէ ապաքինեսցի ի հիւանդութենէն։ Յետ սակաւ միոյ արդարեւ ողջանայ ի ցաւոցն, և զի չէր վստահ յիւր առաքինութիւն, պատուէր տայ միում ի գործաւորաց իւրոց յուշ առնել նմա զդրօշն, յորժամ և դէպ լիցի նմա հանդերձ ինչ հատանել։ Առժամանակ մի կացեալ առնն հաւատարմութեամբ յուխտին, յաւուր միում ի հատանել նորա հանդերձ մի ի կերպասէ իմեքէ մեծագնոյ՝ փորձեալ հոգւոյ անտի ագահութեան տեղի տայ ժլատութեան, և գողանայ մասն ինչ ի կտաւէն։ Ի զուր ազդ առնէ նմա այրն յուշարար, ածել զմտաւ զդրօշն։ «Կարի իմն ձանձրացուցանես զլսելիս իմ դրօշիւդ, այր դու», ասէ ցնա դերձակն. «ի դրօշին զոր տեսի յերազի՝ չգոյր կերպաս այս գունակ»։

---

## 13

### ՎԱՐՍԱՒԻՐԱՅՔ

Վարսաւիրայ ումն որոյ գործ էր վիրալ զմօրուս և հերս փոքրել՝ առ յինքն կորզել յաճախորդս բազումս, ետ նկարել արտաքոյ խանթին իւրոյ ի վերայ որմոյն այր մի, որոյ անկեալ ի ծով մերձ էր ի հեղձնուլ. և այլ ոք գթացեալ ի նա՝ գայր ի լուղ հանել զնա ի ջրոյն, այլ ի բուռն արկանել զհերացն որ չէին ճշմարիտ՝ գիսակն եւեթ մնայր ի ձեռին. իսկ այրն զոր փրկելն կա-

մէր՝ ընկղմեալ լինէր ծովամոյն։ Ի վերայ պատկերիս այսորիկ էր գրեալ մեծամեծ նշանագրօք այսպէս. «Վա՜յ որոց պիտակ են հերք»։ Սովին յայտ իմն առնել կամէր թէ սուտ վարսք վնասակարք են։

Այլ ումն Վարսաւիրայ որոյ արուեստ էր յօրինել վարսս պիտակս՝ իբրեւ տեսանէր զի բազումք հաւանեալ յօրինակէ անտի արուեստակցին իւրոյ ի բաց կային յարկանելոյ վարսս պիտակս ի կիր, հնարեցաւ այսպիսի ինչ առ առնուլ զառաջս վնասուն եղելոյ նմա։ Տայր և սա նկարել նոյնպէս ի ճակատ խանթին իւրոյ զԱբիսողոմ կախեալ ի հերացն զծառոյ, և ի ներքոյ գրէր զայս օրինակ։ «Եթէ պիտակ էին հերքն»։

Պատմութիւնն չասէ ինչ զելից այսր նորանշան մըրցութեան. այլ այժմու սովորութիւնս ցուցանէ թէ վարսք պիտակք խափանեցան. այլ ապաքէն յարիցեն միւսանգամ։ Պարտ է երկայնամիտ լինել. իբրեւ զսա բազում նշանս գործեաց նորաձեւութիւն։

## 14

### ՀԱՆՃԱՐԵՂ ԽՐԱՏ

Իշխան ումն մանուկ մեծազօր՝ թագաւորէր ի Հընդիկս, և զի էր սէգ և ամբարտաւան յոյժ, բազում վնաս գործէր անձին իւրում և հպատակաց իւրոց։ Ի զուր ազդ առնէին նմա բարեկիրք նորա թէ քան զամենայն զօրութիւն մեծ այն է թագաւորի՝ շահել զսիրտ հպատակաց իւրոց։ Բազումք որ զայս խրատ ետուն նմա՝ յաչաց ելին և անկան ընդ պատժովք։ Այր ումն իմաստուն կամեցեալ հաւանեցուցանել զթագաւորն առանց գրգռելոյ զնա ի ցասումն՝ հնարեաց զխաղն ճատրակի, ուր թագաւորն, թէպէտ քան զայլ անձինս նշանաւոր, չէ իմիք ձեռնհաս առանց օգնութեան



հպատակաց և զօրականին։ Մանուկ արքայն, հանճարեղ ի բնէ, ի միտ առեալ զզօրութիւն խրատուն փոխեաց զվարսն, և այնպէս առ զառաջս աղէտիցն որ մօտ առ դուրս հասեալ կային։

Կամեցեալ երախտահատոյց լինել առնն որ գտակն լեալ էր խաղուն, եհարց նմա զինչ խնդրիցէ ընդ այնր ի վարձ. և նա խնդրեաց տալ նմա այնչափ հատս ցորենոյ որչափ էին խորշք ի ճատրակին, պայմանս եդեալ զի բազմապատկեսցի միշտ թիւ ցորենահատիցն յառաջնմէ խորշէ անտի մինչև ցվերջինն որ է վաթսներորդ եօթներորդ։ Թագաւորն շնորհեաց նմա առժամայն զխնդիրն մինչչև քննեալ զնա. այլ ապա ի հաշիւ արկեալ գտանէր զի համօրէն հունձք մեծի աշխարհին Հնդկաց չէին բաւական ի կատարել զոր խոստացաւն։ Աստի պատճառս առեալ իմաստնոյն եցոյց մանուկ թագաւորին թէ որչափ կարեւոր է առն թագաւորի կալ զգոյշ յորոց շուրջն են զնովաւ, և չտալ նոցա զեղծանել բարերարութեամբն զոր առնէ նոցա։

## 15

### ԵՐԿՈՔԻՆ ԲԱՐԵԿԱՄՔ

Ի մէջ երկուց դասուց աշակերտաց մեծի դպրոցին որ ի Ուեստմինստէր վարագոյր մի էր անջրպետ։ Մին յաշակերտաց անտի փոքունց յաւուր միում պատառեաց զվարագոյրն յանդէտս. և զի էր մանուկն ի բնէ հեզ և երկչոտ, դողայր թէ գուցէ ընկալցի պատուհաս ի վերակացուէն որ էր այր խիստ։ Մին յաշակերտակցաց անտի մանկանն, երիցագոյն քան զնա տիօք, հանդարտեցոյց զնա խոստացեալ նմա յիւր վերայ առնուլ զյանցանսն, և անձամբ կրել զպատուհասն։

Յետ ոչ սակաւ ամաց յարեաւ պատերազմ ընտանի

յԱնգղիա, և երկոքին մանկունքս, լեալ հումկու, գտանէին կուսակիցք մէն միում կողման. մին էր ի կուսէ ընկերահաշտից, և միւսն յարքունի թերէ։ Ցետ յաղթելոյ մերթ միոյ կողման մերթ միւսոյն, յաջողեալ ընկերահաշտիցն՝ ձերբակալս առնէին զամենայն պաշտօնակալս զվերինս զօրացն արքունի։ Կարգէին վասն նոցա դատաւորք, և աշակերտն երկչոտ որ զհետ երթեալ էր դատաւորութեան՝ լինէր մին ի դատաւորաց անտի։ Լուեալ նորա ի մէջ անուանց այնոցիկ զորս ածէին՝ զանուն իւրոյ աշակերտակցին և բարեկամի զոր չէր նորա տեսեալ յորմէ հետէ ելեալ էր նոցա ի դըպրոցէն, խանդաղատեցաւ ոգի նորա. հայեցաւ ի նա ուշի ուշով, թուեցաւ նմա թէ նա իցէ, և հարցեալ ցնա ինչ ինչ ստուգեաց թէ արդարև նա ինքն էր, և առանց ծանօթս տալոյ նմա՝ իսկ և իսկ անկանէր ի ճանապարհ երթալ ի Լոնտոն։ Անդ ազդեցութեամբ և ջանիւք զոր արկ ի կիր առ որս անկն էր՝ յաջողեցաւ նմա ապրեցուցանել զիւր բարերարն ի պատուհասէն յորմէ ոչ այլ ոք յընկերաց անտի նորա կարաց զերծանել։

---

## 16

### ԲԵՒԵՌ

Շինական ոմն համետեալ զգրաստ իւր երթալ ի քաղաքն, տեսանէր զի մին ի բեւեռաց անտի ոտից երիվարին պակասէր. և զի աճապարէր երթալ, ասէ ընդ միտս իւր. «Զինչ վնաս ինձ կամ շահ եթէ բեւեռ մի յոտս երիվարին իցէ աւելի կամ պակաս։» Զայս ասացեալ անկաւ յուղի։ Զճանապարհայն երկաթ մի յոտից գրաստուն խախտեալ անկանէր. «Եթէ գոյր աստ ուրեք պայտառ, ասէ, մարթ էր տալ դնել ի տեղի իւր



զերկաթն. այլ զի չիք ոք այնպիսի աստ, մարթ է ձիոյն միւս երիւքն հանել զճանապարհն ի գլուխ»։ Այլ քարինքն որ ի վերայ ճանապարհին՝ եդին վէրս անասնոյն որ սկսանէր խոշտալ ի գնալն։ Իբրեւ այնպէս երթային կաղս ի կաղս յամրագնաց, գողք երկու ելին յանկարծ ըստ թաւուտն տեռազերծ առնել զայրն որ, առ կաղալ երիվարին ոչ կարացեալ խոյս տալ արագ, անկանէր ի բուռն աւազակացն, որոց հանեալ ի նմանէ զգրաստն հանդերձ պայուսակաւն և որ ինչ էրն ի նմա՝ թողուին զնա երթալ։ Ստիպեալ նորա, թափուր յամենայնէ, դառնալ ի տուն՝ ասէ ի միտս իւր տրտմեալ. «Զիարդ մարթէր ինձ ածել զմտաւ եթէ, առ ի չգոյէ բեւեռի միոյ, կորուսանելոց էի զգրաստ իմ»։

---

## 17

### ԽՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆ

Մի ոմն յաւագաց անտի Ռուսաց առեալ զիշխանութիւն միոյ ի գաւառաց տէրութեանն, ի շրջել իւրում այցելութեամբ ընդ գաւառն՝ հասեալ ի գիւղ մի տեսանէ այր մի ալեւոր որոյ նստեալ առ դրան խղկան միոջ որ սակաւ ինչ հեռի էր ի շինէն՝ յարտասուս հարկանէր։ «Զի՞ է քեզ այր դու». ասէ ցնա աւագն, «վասն է՞ր տրտմեալ ես և յարտասուս հարեալ»։ «Տէր», ասէ ծերունին յոգւոց հանելով, «լամ զի հայր իմ գան հարեալ հան զիս արտաքս»։ Զարմացաւ իշխանն ընդ այս բան և իջեալ վաղվաղակի ի ձիոյն մտանէ ի ներքս։ Այն ինչ եդեալ նորա զոտս ի գաւիթ տանն, տեսանէ անդ միւս եւս ալեւոր հինաւուրց քան զառաջինն, որ և թուէր սրտմտեալ։ «Ընդէ՞ր խռովեալ ես, ով դու». ասէ ցնա գաւառապետն։ «Մի հարցանէր, տէր», ասէ ծերն. «որդին իմ որ կայ

առ դրան, առ անհոգութեան ընկէց զհայր իմ ծերունի որոյ բեկեալ զողն նստեալ կայ»։ Ընդ խաղ իմն համարեցաւ գաւառապետն զասացեալսն, այլ վաղվաղակի ծանեաւ թէ չէին ինչ ծաղու բանքն, քանզի մուծեալ ի սենեակ մի ետես անդ ի վերայ գահոյից մերձ ի կրակարանն միւս եւս այր անցեալ յոյժ զաւուրբք որոյ թիկունքն կորացեալ էին առ ծերութեանն, այլ էր նա տակաւին առոյգ և յուժի։ «Արդարեւ», ասէ ի միտս իւր գաւառապետն, «ի տոհմէ նահապետաց է որեարս։»

## 18

### ՋՈՐԻ

Բժիշկ ոմն ելեալ ի Ջորի իւր երթայր այց առնել հիւանդի, որոյ էր խաղաւարտ ի կոկորդին։ Հասեալ նորա ուր դէմն եդեալ էր, և իջեալ յերիվարէն, հանդիպէր անդ առաջի դրանն միում ի ծանօթից իւրոց ընդ որում սկիզբն առնոյր խօսել։ Ցերկարել բանիցն թողոյր զսանձն, և Ջորւոյն գտեալ բաց զդուռն տանն դիմէ ի ներքս։ Խուց հիւանդին էր, ասէ պատմութիւնն, ի վերայ գաւթին և թողեալ բաց կիսով չափ առ ի տալ մուտ օդոյն ի ներքս։ Հայեցեալ գրաստուն այսր անդր թերեւս գտանել ինչ ուտել, և տեսեալ զդուռնն բաց, սանձաւ թամբաւ մտանէ ի սենեակ անդր հիւանդին, որոյ լուեալ ոտնաձայն և համարեալ եթէ բժիշկն իցէ, առանց դառնալոյ յայսկոյս ձգէ ի նա զբազուկ իւր ի զննել։ Տեսեալ Ջորւոյն բազուկ մի կարկառեալ առաջի իւր, առանց գիտելոյ զպատճառսն, ատամամբքն ունի զդաստակէն։ Զահի հարեալ հիւանդին դառնայ յայսկոյս, և տեսեալ զՋորին, իջանէ ընդոստ յանկողնոյն հանել զգրաստն արտաքս, այլ



ի սաստիկ ծաղուէն խաւարտն որ ի կոկորդին՝ պայթէր։ Մինչ այս մինչ այն հասեալ ի վերայ բժշկին կամէր խարազանաւ հարկանել զՋորին. այլ հիւանդին ձայն բարձեալ ասէ. «Մի ինչ վնաս առնէր անասնոյդ, տէր բժիշկ, զարմանալի իմն է պատահարս. Ջորիդ այդ բուժեաց զախտն որում թերեւս չէր մարթ արուեստին առնել դարման։ Այսուհետեւ եթէ դէպ լիցի անկանել ինձ յայսպիսի ինչ ախտ, առաքեա զՋորիդ, և դու մի ինչ աշխատ լինիր գալ անձամբ առ իս։

## 19

### ԳԱՆՁ ԹԱՂԵԱԼ

Պատմի եթէ հողագործ ոմն որ յարգէր յոյժ զաշխատութիւն՝ կամեցեալ մերձ ի մահ իւր ցուցանել որդւոյ իւրում արդեամբք թէ քանի՛օն օգտակար է աշխատութիւն, կոչէ զնա առ իւր, և որպէս թէ գաղտնիս ինչ յայտնիցէ նմա, ասէ. «Որդեակ, յանդի մերում զոր մշակեմք՝ կայ գանձ թաղեալ, այլ թէ յորում վայրի իցէ՝ չգիտեմ»։ Զայս ասացեալ խրատ տայր նմա առանց ումեք ի վեր հանելոյ, անձամբ անձին բրել զարտն։ «Այսպէս արարեալ», ասէր, «ստուգիւ գտցես գանձն»։ Մեռանի այրն, և որդին յուսով գտանելոյ զգանձն թաղեալ, առնու բահ և բրիչ, և աշխատեալ աւուրս բազումս բրէ զանդն ծագէ ի ծագ, և ոչ հանդիպեալ գանձուն մեկնի սրտառուչ և յուսաբեկ։

Այլ երկիրն այսպէս վարեալ և ցանեալ տայ ի ժամանակի հնձոց արդիւնս առատ, զոր քաղեալ մանուկ հողագործին և համբարեալ ի շտեմարանս՝ մեծանայր յոյժ։ Յայնժամ ի միտ առնո[illegible] գանձն զորմէ ասէր հայրն աշխատութիւնն [illegible]

ՎԵՐՋ

Библиотека ... ССР

2514
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0061716

# ՑԱՆԿ ԳՐՈՑ

Ի ԳՐԱՏԱՆ ՉՈՒՍՄԱՆԳԾԵԱՆՑ ԶԱՌ Ի ՎԱՃԱՌ ԹԻՒ 20

*(Այժմ մնծիրը 20 դրուշ համաձեռ)*

| | Դրշ. | Փր. |
|---|---|---|
| Աշխարհագրութիւն բնական Գարագաշ. | 4 | |
| » Քաղաքական | 4 | |
| » Քաղ. Բնակ. » | 8 | |
| » Քաղ. Բնկն. Քաղաք. » | 10 | |
| Աստեղագիտական սկզբունք . . . . . . . . . . | 13 | |
| Գեղագրութիւն հայկական Հայ. Գաղղ. . . . . | 3 | |
| Գրագիտութիւն առձեռն Ե. Մուրատեանի . . . | 8 | |
| Գիտուրբ Հերոնիմոս Բարսեղեանի . . . . . . | 8 | |
| Զուգահեռական նոր մեթոտ Գաղղ. լեզուի Էմիլ Օդդէի. Ընթացք Ա. եւ Բ. . . . . . . . . . | 16 | |
| Ընթերցարան կամ Դրմենակ պատկերազարդ . . | 2 | |
| Թուաբանութիւն ընդարձակ Տիգր. Փօզաճեան . | 13 | |
| Թուաբանութիւն համառօտ Տիգր. Փօզաճեան . | 4 | |
| Ժողովրդական Մատենադարան Ա. Բ. Գ. մաս | 5 | |
| Հատընտիր քաղուածք ի նախնեաց, Գարագաշ. | 10 | |
| Հաւաքածոյ հայկական ասացուածոց . . . . . . | 2 | |
| Մանկատածութիւն Ս. Վիքէնի 1—2 . . . . | 20 | |
| Նամականի Ա. Մ. Գարագաշեան . . . . . . . | 8 | |
| Նոր ընթացք գրաբար լեզուի Մուրատեան . . . | 2 | |
| Պատմութիւն Արշակունեաց, Ա. Մ. Գարագաշեան | 4 | |
| Պարտք Տղայոց . . . . . . . . . . . . . . . . | 3 | |
| Սկզբունք Գաւառական Ա. Տատոր . . . | 5 | |
| Բազգամ Մէտիճէլի . . . . . . . . . . . . . . . | 3 | |
| Քերականութեան սկզբունք » | 2 | |
| Քերականութիւն գործնական Գարագաշեան | 6 | |
| » գպրութիւն » | 6 | |
| » համառօտ » | 3 | |
| » աշխարհաբար » | 3 | |
| » Շիշմանեանի Հայերէն . . | 5 | |
| » » Գաղ. Հայ. . . . | 6 | |

**Գին 3 դուրուշ արծաթ**